

**ՅԱԿՈԲ
ՕՇԱԿԱՆ**

**ՎԱՀԱՆ
ԹԷՔԷԵԱՆ**

ՊԵՅՐՈՒԹ 1985





ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ

ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ

ԵՒ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ


ՎԱՉԷ ԴԱԶԱՐԵԱՆԻ

ՊԷՅՐՈՒԹ 1985

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԿԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԿԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ
ՎԱՀՐԱՄ ԱՊՏԱԼԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ



ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ

ԹԵՔԷԵԱՆ-ՕՇԱԿԱՆ ԿԱՊԸ ԵՒ
ԹԵՔԷԵԱՆԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՕՇԱԿԱՆԵԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Բուն իսկ միջին անցնելէ առաջ, անհրաժեշտ դատեցինք
նշումը հետեւեալին՝

ա.— Այս ուսումնասիրութիւնը պատրաստուած էր 1981-ի
աւարտին, երբ տակաւին հրապարակի վրայ չէր Օշականի
«Համապատկեր»ներուն տասներորդ հատորը, որ լոյսի
բարիքին արժանացաւ 1982-ին: Հոսկէ՝ նշեալ հատորէն մեզ
հետաքրքրող կարգ մը տեղեկութիւններուն յատկումը ներկայ
ուսումնասիրութեան մէջ իբրեւ էջատակի ծանօթութիւններ:

բ.— Ծարադրանքը պերճախօս մէջբերումներով յագեցնելու
նախընտրութիւնը կու գայ յառաջադրուած միջին շուրջ առաւել
հարուստ պատկերացում տալու միտումէն, թէև կարելի է աւելի
ընդարձակօրէն խօսիլ Թէքէեան-Օշական յարաբերութիւն-
ներուն եւ աղբնչութիւններուն մասին:

գ.— Անտիպ⁽¹⁾ միջերը բոլորն ալ քաղուած են Երեւանի
Չարենցի անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարանին
(ԳԱԹ) մէջ պահպանուող Գեղամ Ֆէներճեանի (ԳՖՖ),
Վահան Թէքէեանի (ՎԹՖ), Յակոբ Օշականի (ՅՕՖ), Միքայէլ
Կիրճեանի (ՄԿՖ) եւ Արշակ Չօպանեանի (ԱՉՖ) արխիւներէն,
միշտ նոյնութեամբ պահելով բնագրերուն ուղղագրութիւնը:

դ. — «Յաւելուած» բաժնով կը տրուին ցիւթեր, որոնք աղերս մը ունին Օշականի ուսումնասիրութեան կամ Թէքէեան-Օշական յարաբերութիւններուն հետ:

*

* *

ԹԷՔԷԵԱՆ-ՕՇԱԿԱՆ ԿԱՊԸ

Թէքէեանի եւ Օշականի միջեւ ստեղծուած առաջին կապի մասին վկայութիւնը կը վերաբերի 1914 թուականին, երբ Թէքէեան Եգիպտոսէն կամ Երուսաղէմէն⁽²⁾ Օշականին կը գրէ իր առաջին նամակը, «Մեհեան»ի մէջ իր «Հրաշալի Յարութիւն» երկրորդ քերթողագիրքին մասին Յ. Քիւֆէնեան ստորագրութեամբ լոյս տեսած գրախօսականին առիթով⁽³⁾:

Թերեւս մինչ այդ ալ կապ մը հաստատուած էր հայ գրականութեան երկու երախտաւորներուն միջեւ, երբ երկուքն ալ կ'աշխատակցէին «Ծանօ» հանդէսին եւ, Մ. Պարսամեանի վկայութեամբ, մանաւանդ Արտաշէս Յարութիւնեանի Պոլիս հանդիպած օրերուն յիշեալ թերթին խմբագրատունը կը վերածուէր ժամադրավայրին հայ գրողներու, որոնց մէջ կը գտնուէր նաեւ Թէքէեանը⁽⁴⁾:

Մեծ Եղեռնէն ետք, երբ հայ մշակոյթի գործիչներով կրկին խնդրուած էր Պոլիսը, Թէքէեանին ալ Պոլիս դարձովը (1919-ի ստարտին) կը վերահաստատուի Թէքէեան-Օշական կապը, որ Լեւոն Զաւէն Սիրմէլեանի եւ այլոց վկայութեամբ կը դառնայ մտերմական՝ 18 Դեկտեմբեր 1921-ին հիմնումովը Պոլսոյ Հայ Արուեստի Տան⁽⁵⁾, այնուհետեւ կը վերածուի համագործակցութեան մը, որուն իրենց ոյժերը կը միախառնեն Կոստան

Զարեանը, Գեղամ Կավաֆեանն ու Շահան Պերպերեանը՝ լոյս աշխարհի բերելով «Բարձրականք» հանդէսը:

1922-ի Փետրուարին Պոլսոյ մէջ կը բեմադրուի Օշականի «Նոր Պսակ» թատերգութիւնը: Թէքէեան կ'ըլլայ զայն առաջին գնահատողներէն, իր խմբագրած «Ժողովուրդի Զայնը» օրաթերթին մէջ գրելով. «Ժահիճը յուզող, տակնուվրայ ընող մըն է Օշական, մինչեւ երէկ գրականութեան՝ երէկուրնէ ի վեր ընտանեկան ու ընկերային ճահիճն ալ: Ոչ ոք իրեն չափ թշնամի ունի մեր գրագիտուկներու՝ այր թէ կի՛ն՝ ոչնչապատիւ արհեստակցութեան մէջ...:

«... Ոչ իբրեւ առաջին փորձ՝ այլ իր ներքին արժէքին, իր նիւթին, իր նոր բայց իրական տիպարներուն, այդ տիպարներուն բեմին վրայ կեանքով ապրելուն, լեզուին, ոճին ու տգեղ իրականութենէն հանած յուզումին, գեղեցկութեան եւ խորապէս բարոյական ձգտումին համար՝ «Նոր Պսակ»ը թանկագին յանդիման մըն է մեր թատերական՝ եւ ատկէ դուրս... մեր գրական երկացանկին մէջ»⁽⁶⁾:

Գնահատական տողերու կողքին կը գտնենք, անշուշտ, թատերգութեան թերութիւնները մատնանշող տողեր եւս:

Պէտք է ըսել, սակայն, թէ «Նոր Պսակ»ը լաւ ընդունելութեան չ'արժանանար ժամանակի գրագէտներու մեծ մասին կողմէ, եւ նոյնիսկ ակնարկութիւններ կ'ըլլան թէ Թէքէեան գնահատական տողեր արձանագրելով, ուզած է հատուցանել Օշականի կողմէ «Կէս Գիշերէն Մինչեւ Արշալոյս»ին նուիրուած ներքողը⁽⁷⁾: Թէքէեան կը հարկադրուի երկու յաջորդական յօդուածներով⁽⁸⁾ յայտնել, թէ ինք Օշականի թատերախաղը սիրած էր անոր համար որ ան «նշմարտութիւն եւ բանաստեղծութիւն»⁽⁹⁾ կը պարունակէ:

Թէքէեանն ու Օշականը, մինչեւ իրենց Պոլկարիա ապաստանիլը,—հետեւանք՝ Համաձայնականներու կողմէ Պոլսոյ պարպումին եւ քեմալական շարժման,— համագործակցեցան նաեւ Ղալաթիոյ Ազգային Կեդրոնական վարժարանին մէջ, առաջինն իբրեւ տնօրէն, իսկ երկրորդը՝ ուսուցիչ:

*

* *

Երկու բարեկամներուն յաջորդ հանդիպումը պիտի կայանար Գահիրէի մէջ, որ Պուլկարիայէն անցած էր Օշական եւ անհամբեր կը սպասէր Թէքէեանի Փարիզէն ժամանումին, փայփայելով գրական հանդէսի մը հրատարակութեան միտքը:

Յիրաւի, ան Ֆէնէրճեանին գրած իր նամակներուն մէջ կ'ըսէ. «Հոս գրուած նամակներէն կ'իմանամ որ Թէքէեանը ձմեռը Եգիպտոս անցնելու մտադրութիւն ունի եղեր: Հոս ունի կարեւոր բարեկամներ, հարուստ, որ թերթ մը — գրական ամսաթերթ մը — հանելու նիւթական պատասխանատւութիւնը իրենց վրայ կ'առնեն»⁽¹⁰⁾: «Զմեռը անցաւ ու Թէքէեանը չեկաւ: Չորս աչքով կը սպասեմ իրեն: Իմ միակերպեանս մէջ լաւագոյն միփոքարանքը պիտի ըլլար անիկա»⁽¹¹⁾:

Նոյն շրջանին Թէքէեան ինք ալ կը մտմտար գրական հանդէսի մը հրատարակութեան մասին: Այդ առընչութեամբ Թորոս Ազատեան իր 22 Ապրիլ 1924 թուակիր նամակով կը գրէ Ֆէնէրճեանին. «Հոդ (իմա՝ Փարիզ - Վ.Ղ.) Թէքէեանի կողմէ հանդէսի մը հրատարակութեան ուժ տուր. վերջապէս Թէքէեան շատ մը առաւելութիւններ ունի Եսայեանի եւ Զօպանեանի վրայ»⁽¹²⁾:

Թէքէեան 1924-ի աւարտին կ'անցնի Գահիրէ, ունենալով ձգտումը առաջին իսկ առիթով գրական հանդէսի մը հրատարակութեան եւ հրատարակչականի մը հիմնումին:

Թէքէեան 10 Փետրուար 1925 թուակիր նամակով հարց կու տայ Կիւրճեանին. «Ինչե՞ր պիտի տաս Նոր կամ Հայ հանդէսին...»⁽¹³⁾:

Արսէն Երկաթ, դարձեալ նոյն տարուան Փետրուարին, կը գրէ մեծ քերթողին. «Երազը որ կար մօքիս մէջ՝ թերթ մը, գրական ամսագիր մը հրատարակելու, բաղիւեցաւ Զեր համանման որոշումին...»⁽¹⁴⁾:

18 Փետրուար 1925-ին, Ֆէնէրճեանին ուղղած իր նամակով, Թէքէեան յստեղեալ տեղեկութիւն մը կը պարզէ. «...Կրնաս յօդուածներ ու տեղեկութիւններ դրկել այն տասնըփինգօրեայ հանդէսին որ շուտով պիտի սկսի հոս լոյս տեսնել»⁽¹⁵⁾:

Հանդէսի հրատարակութեան ծրագրին իրազեկ եղողները անձկանօք կը սպասեն անոր ի լոյս ընծալումին: Բայց կային դժուարութիւններ, որոնց համար Օշական 28 Փետրուար 1925-ին

գրած ըլլալու է Ֆէնէրճեանին. «Գիտես թէ հանդէսի մը ծրագիրը կայ գլուխս: Արդէն անոր նիւթական մասը հարթուած է: ...Թէքէեան տակաւին չլծուած յոգնած է»⁽¹⁶⁾:

Գլխաւոր դժուարութիւնը տպարանի կազմածներու ապահովումն էր, ըստ երեւոյթին, մանաւանդ որ Թէքէեան չէր ուզեր քառականանալ միայն հանդէսով ու կը միտէր նաեւ հրատարակչականի ծրագրին իրագործման: Անշուշտ կրնար գոյութիւն ունենալ աշխատակիցներու հարց եւս, քանի որ «տասանըֆինգօրեայ հանդէս»ի ծրագիրը շուտով կը փոխարինուի ամսաթերթի մտապատկերով: Արդարեւ, Թէքէեան՝ 17 Մարտ 1925-ին՝ Սիւրմէլեանին կը յայտնէ. «... Ամսաթերթ մը պիտի հրատարակեմ, Օշականը գլխաւոր աշխատակից»⁽¹⁷⁾: Իսկ 2 Ապրիլ 1925-ին, Ֆէնէրճեանին կը գրէ. «... Հանդէսը դեռ մօտեքս լոյս չի տեսներ. տպարան չկայ»⁽¹⁸⁾:

13 Մայիս 1925-ին, Օշական դարձեալ կը գրէ Ֆէնէրճեանին. «Հոս մտաւորական շարժում չի կայ: Չկրցանք ստեղծել: Թէքէեանը հակառակ որ բոլոր առաւելութիւնները ունի, կը վարանի կոր: Թէեւ ես ամէն կերպով խմբագրութեան մէջ իմ օգնութիւնս տրամադրած եմ իրեն: Բայց յուսահատութիւնը ծանրացած է իր վրայ: Ու կը կարծեմ թէ թերթ հանելիք չունինք»⁽¹⁹⁾: Մինչդէռ չորս օր առաջ Թէքէեան նոյնին գրած էր. «Օշականը աղէկ է. հանդէսը ա՛լ աշնան, ինչալլա՛հ»⁽²⁰⁾:

Աւելի ուշ, 6 Յունիս 1925-ին, Թէքէեան Ֆէնէրճեանին կը յայտնէ. «Շիրակը⁽²¹⁾ աշնան (Սեպտ. Հոկտ.ին) կ'սկսինք ալլելու, լաւագոյն պայմաններով եւ մեր տպարանէն:

«Եւս հաւանօրէն 2-3 շաբաթէն Գորֆու, անկէ ալ թերեւս քանի մը օրուան համար Վենետիկ երթամ՝ տպարանը կազմելու համար: Գորֆու երկու ամիս մը կը մնամ կարծեմ»⁽²²⁾:

Ի դէպ, միջանկեալ, կ'արժէ նշել թէ 5 Յունիս 1925-ին՝ Չօպանեանին ուղղած իր նամակին մէջ՝ Թեոդիկ կը գրէր.

• • — Եթէ Տէրը կամենայ (արարական ծագումով՝ թրքերէն):

«Արպօյանեանի գովեստներէն հրապօրուած, ամիսէ մը հոս պիտի հիւր ունենանք եղեր (ինչպէս Յ. Ասպետի նամակէն կը տեղեկանամ) ամբողջ գումարտակ մը եգիպտահայ մտաւորականներու եւ ուսուցիչներու, հրամանատարութեամբ Վ. Թէքէեանի եւ գնդապետութեամբ Յ. Օշականի»⁽²³⁾։

Թէքէեանի Գործոյ եւ անկէ ալ Վենետիկ անցնելու ապացոյցներուն ցարդ չենք հանդիպած։ Այսքանը պարզ է միայն, թէ մեծ քերթողը 29 Յուլիսին գտնուած է Գահիրէ, ինչպէս ի յայտ կու գայ Սիրմէլեանին ուղղուած իր մէկ նամակէն⁽²⁴⁾։ Իսկ 24 Հոկտեմբերին՝ Գահիրէի մէջ իր նախաձեռնութեամբ ու ներկայութեամբ հիմը դրուած է Կեսարիոյ Հայրենակցական Միութեան⁽²⁵⁾, որուն կազմութեան նախապատրաստական աշխատանքներէն դժուար թէ բացակայած ըլլար ան։

Օշական, սակայն, անցած է Գործոյ, ուրկէ 1 Օգոստոս 1925-ին գրած է Ֆէներճեանին. «... Եկած եմ արձակուրդը անցնելու։ Սեպտ. 1-ին Գահիրէ եմ նորէն»⁽²⁶⁾, առանց յիշատակելու Թէքէեանը, ինչ որ կը մղէ ենթադրելու, թէ առնուազն Օշականի ուղեկիցը չէր դարձած Թէքէեան։

25 Յունիս 1925-ին, Թորոս Ազատեան Ֆէներճեանին կը գրէ. «Թէքէեան կ'երեւի կարեւոր դրամագլուխ մը ձեռք ձգած է, տպարանի կազմած ելն. գնելու համար։ Ի՞նչ բարեբախտութիւն։ Վերջապէս հայ գրականութիւնը իր տեսական մէկ արտայայտութիւնը պիտի ունենայ։ Կը յուսամ որ «Ծիրակ»ը լաւագոյն հանդէս մը պիտի ըլլայ։ Հին Ծիրակները անշուշտ տեսած են։ Բաւական խնամով լոյս տեսած են»⁽²⁷⁾։ Ապա ուստում մը կատարելով դէպի 6 Մարտ 1926, նոյնին կը հարցնէ. «Ինչո՞ւ Թէքէեան եւ Օշական չկրցան լաւագոյն հանդէս մը լոյս ընծայել եւ բոլոր մեծ ու փոքր կաշաղակները լոեցնել»⁽²⁸⁾։

Յայտնի չէ թէ Ֆէներճեան արդեօք ունէ՞ր պատասխանը։ Միայն գիտենք թէ Հայերգակը իր 8 Ապրիլ 1926 թուակիր նամակով Ֆէներճեանին կը յայտնէր. «Հանդէսնիս դեռ մօտ չէ սկսելու, բայց եթէ բան մը ունիս՝ դրկէ. կա՛մ հանդէսին (զոր փութացնելու գրգիռ մը կրնայ ըլլալ) կա՛մ «Արեւ»ին մէջ կց հրատարակենք»⁽²⁹⁾, եւ այդ թուականէն կը դադրէին ակնարկութիւնները հանդէսին մասին, որ նոյնիսկ պատուագին պիտի յատկացներ իր աշխատակիցներուն։

Հաւանաբար հանդէսի ծրագրին ժամանակատր թողլքումը⁽³⁰⁾ իբրեւ պատճառ ունէր մէկէ աւելի իրողութիւններ —տպարան ու հրատարակչական կազմելու ճիգերուն ձախողութիւնը, Օշականի Կիպրոս անցնիլը՝ իբրեւ ուսուցիչ, Թէքէեանի կոչուիլը Գահիրէի Քաղաքական Ժողովի ատենապետութեան ելն.:

Օշականի մեկնումով երկու գրչեղբայրներուն միջեւ անգամ մը եւս կը վերանար անձնական շփման հնարատրութիւնը⁽³¹⁾: Այդ պատենիութիւնը պիտի վերստեղծուէր կարճ ատենի մը համար միայն, 1944-ի երկրորդ կիսուն, Երուսաղէմի մէջ, ուր դարմանումի եւ օդափոխութեան համար գացած էր Թէքէեան, իր մահէն (4 Ապրիլ 1945) քիչ առաջ...:

Անշուշտ ամբողջ այդ տետողութեան, 1926-1944, Թէքէեան-Օշական կապը միշտ մնացած է կանգուն՝ ուղղակի նամակագրութեամբ թէ այլապէս, բայց ներկայ ուսումնասիրութեան մէջ նկատի պիտի չառնուին այդ նամակները, անոր համար որ անոնց մէկ մասին միայն կարելի եղած է ծանօթանալ: Թէքէեան-Օշական նամակագրական կապի բացայայտումը կը սպասէ աւելի յարմար առիթի:

*
* *

Գտնուած են մարդիկ, որոնք Օշականին վերագրած են հաշուենկատութիւն՝ իր յարաբերութիւններուն կամ դիրքորոշումներուն մէջ: Յամենայն դէպս Թէքէեանի պարագային խօսք չի կրնար ըլլալ Օշականի կողմէ հաշուենկատութեան մը մասին: Եղածը անկեղծ գնահատանք ու բարեկամութիւն էր եւ Օշական ատոր ապացոյցը պիտի տար Թէքէեանի մահէն ետք ալ, զանազան առիթներով ու, ի միջի այլոց, գրելով. «... չեմ կրնար չանդրադառնալ մեր մէջ եզակի դէմքի մը, որ

տարօրինակ ճակատագիրը կ'իրագործէ մեզի համար շատ մեծ բանաստեղծ մը ըլլալու ու երէկուան դպրոցականին չափ իսկ իջած չըլլալու համբաւին կրկէսը: Անիկա միակ ու անառարկելի քերթողն է հիմա մեծ սերունդի մը, որ Արեւելքի ու Արեւմուտքի զգայութեանց երբեմն դաշն, երբեմն եղերական խառնուրդին մէջ, իր ջիղերը բացաւ արուեստին:

«... Վ. Թէքէեան... եղաւ խուլ ու խոր խղճմտանք մը... եղաւ դաշն, ինչպէս է զարկը մեր սրտին ետեւ: Անիկա երկարած է ինքզինքը դէպի հունչերը, վանկերը «երջանկութեան կարօտին», անձնակի ու շեղակի, ու ըսած մեր կարօտին եղերական պատգամը անհամեմատ վայելչութեամբ ու սուգով: Եղաւ անիկա մեր ժամանակներուն թախիծէն եւ բեկուն գեղեցկութիւններէն գրաւուած տրտում տեսանողը եւ ուրացուած մարգարէն»⁽³²⁾:

Օշական առիթով մը Ֆէնէրճեանին գրած է. «Թէքէեան... ամբոյսէն դուրս է ու ամէնէն անկեղծն է: Ու իր համակրութիւններն ու հակակրութիւնները չկրնար պարտկել: Այնպէս որ երբ հետը կը տեսնուիք, կը նշանակէ թէ կը սիրուիս անկէ»⁽³³⁾:

Այո՛: Թէքէեան նաեւ կը համակրէր Օշականին ու կը գնահատէր զայն: Ահա թէ ինչո՛ւ կարելի եղաւ անոնց երկարատեւ բարեկամութիւնն ու ահա թէ ինչո՛ւ Թէքէեան Սիրմէլեանին կը գրէր ատենին. «Մեծերուն մէջ՝ Օշականը կը սիրեմ ամէնէն ատելի, իր ոճին ծակերովը, որոնցմէ ա՛յնքան աղուոր բան վար կը թափի եւ շուրջը ա՛յնքան կը մնայ դեռ»⁽³⁴⁾, ու կ'աւելցնէր. «Օշականը իր գեղին հայն է, հայ գրականութեան միջոցով վերստին, տասնապատիկ հայացած, «մսագործ»ի ձեռքով եւ մարքիզի փափկաճաշակ շրթներով մարդը, հայ Պալզաքը — մարմնով եւ գլխով ալ անոր նման...»⁽³⁵⁾:

Այսպէս գորգուրացին իրենց մեծ բարեկամութեան վրայ Մեծ Եղեռնէն վերապրած երկու իրա՛ւ մեծութիւնները, եւ Օշական իր քննադատի շունչը հատցուց «քիչ ու գէշ ճանչցուած» Թէքէեանը հասկցնելու եւ գնահատել տալու համար, քերթողին կենդանութեան թէ անոր մահէն ետք, մինչեւ իսկ Թէքէեանի հակառակորդներուն երեսն ի վեր գոռալով. «Վ. Թ. Ֆոնտիճ... դիրաբէկ բխումը չպաշտպանող ամէն կեցուածք կը նկատեմ վնասարար հայ գրականութեան»⁽³⁶⁾, երբ այդ Ֆոնտով կը ծրագրուէր լոյսին տալ Թէքէեանի անտիպները եւլն.:

«ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ ԵՒ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ» ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Վերոյիշեալ ուսումնասիրութեան մասին, աղօտ կերպով, առաջին հրապարակային հաղորդումին կը հանդիպինք 1933-ին Փարիզ լոյս տեսած «Յոբելեան Վահան Թէքէեանի Գրական Գործունէութեան» գիրքին մէջ: Հոն տեղ գրաւած եւ Օջականի գրչին պատկանող «Վահան Թէքէեանի տեղը մեր քնարերգութեան մէջ» գրութեան իբրեւ ծանօթագրութիւն նշուած է. «Հատուած մը Մելքոնեան Կրթական Հաստատութեան է. դասարանին մէջ 1932-ին խօսուած դասէն՝ որ Յոբելեանին առիթով գրագէտ-ուսուցիչին կողմէ ընդլայնուած, անտիպ ուսումնասիրութիւն մը կը կազմէ» (էջ 11):

Յիշեալ հատուածին առընչութեամբ Թէքէեան 11 Նոյեմբեր 1933-ին Օջականի յղուած նամակին մէջ կ'ըսէ. «Ընդօրինակուած հատուածէդ... հատուած մը տուի որ շարուի եւ տպուի — հաւանութիւնդ ստացած ըլլալով — ա՛յն գրքոյկին սկիզբը՝ որ լոյս կը տեսնէ 2-3 շաբաթէն եւ որ պիտի պարունակէ Բաշալեանի մէկ մուտքը Կեդր. Յանձնախումբին անունով, Թորգոմ Ս.ի մէկ նամակը, յետոյ քու այդ էջերդ (միակ consistant* բանը) ...» (37):

* — Հաստատուն:

Աւելի ուշ, 7 Փետրուար 1934-ին, Թէքէեան կը գրէ մեծ գրադատին. « Գալով քո՛ւ ծրագրիդ, ի հարկէ ուրախ, լիովին ուրախ եղայ՝ որ պիտի ընդարձակես, լրացնես եւ Դուրեան մրցումին պիտի ներկայացնես ուսումնասիրութիւնդ⁽³⁸⁾ : Այդ պարագային՝ տարակոյս չունիմ որ ան կատարեալ բան մը պիտի ըլլայ, ոչ թէ ուսումնասիրողին այլ ուսումնասիրողին արժանի, գո՛րծ մը որուն նմանը չկայ մեր գրականութեան մէջ :

«... Արձակ էջերս, նոյն իսկ ոչ-հրապարակագրականները միայն, թէ՛ բաւական շատ են եւ թէ... անգոյ, գէթ ինծի համար: Բոլորը այրեցան Իսկիւտարի կրակին մէջ: Գիտեմ սակայն թէ ի՛նչ թերթերու մէջ կը գտնուին, եւ այդ թերթերուն nomenclature-ը՝ կ'երեւայ Յոբելեանի Յանձնախումբին կողմէ հրատարակուած գրքոյկին... մէջ, զոր ես եմ հայթայթած:

«... Հատորի մէջ չմտած ոտանաւորներս նոյնպէս բաւական շատ են ու գո՛յ: Բայց... չեմ կրնար զանոնք քեզի դրկել այն պարզ պատճառաւ, որ նոյն իսկ արդէն հրատարակուածները երբ սկսիմ ընդօրինակել՝ կ'ստիպուիմ կա՛մ պզտիկ-մեծ փոփոխութիւններ մը ընել կամ ծալլել մէկդի դնել: Միայն գիրք կազմելու հարկադրանքն է՝ որ, սկսեալ «Հրաշալի Յարութիւն»էն — «Հոգեր»ուն աւտեն այդ մտահոգութիւնը ունեցած չեմ — մինչեւ այս վերջին «Սէր»ը, կրցած է ոտանաւորները փրցնել ձեռքէս, մէկ մասն ալ դեռ պատանդ թողելով: Մտադիր էի, եթէ Յոբելեանը քիչ-շատ «արդիւնատու» ըլլար, այդ մնացածներէն ալ զտում մը ընելու, այդ զտումներն ալ մարդու կերպարանք մտցնելու եւ այդ մարդակերպներն ալ նոր գառագեղի մը (իմա՛ հատոր - Վ.Ղ.) վանդակներուն ետեւ բնակեցնելու»⁽³⁹⁾:

Պոսթոնի «Հայրենիք» ամսագրի 1934-ի Դեկտեմբերի թիւին (146) 153-րդ էջին մէջ կը հանդիպինք հաղորդումի մը, ուրկէ կ'իմացուի թէ «Սրբոց Թարգմանչաց-Դուրեան գրական

մրցանակ»ի համար նաեւ ներկայացուած է Օշականի «Վահան Թէքէեանն Ու Հայ Բանաստեղծութիւնը» գործը, որ քննութեան համար դրկուած է Աղեքսանդրիա, Միքայէլ Կիրճեանին, բայց մինչեւ մրցանակի օրը տեղեկագիր ստացուած չըլլալով՝ յետաձգուած է յաջորդ շրջանին:

1935-ի Յունուար 18-ին Թէքէեան Կիրճեանին կը գրէ. «Քննութեանը յանձնուած Օշականի ձեռագիրը ինչո՞ւ չես դրկած ժամանակին՝ տեղեկագրիդ հետ...: A propos, ի՞նչպէս է: Ինծի դրկած էր միայն, առջի տարի, նախնական ձեւը եւ հիմա կ'ըսէ թէ վերջնականը բոլորովին տարբեր է առաջինէն»⁽⁴⁰⁾:

Թորգոմ Արք. Գուշակեան 193(6) Փետրուար 18-ին կը գրէ Միք. Կիրճեանին. «Ա՛յժմ ընդունեցի Օշականի ուսումնասիրութիւնը եւ Ձեր տեղեկագիրը: Կ'երեւակայեմ թէ ո՛րքան աչքի լոյս պէտք է սպառած ըլլաք, այդ մրջնատառ գրչութեան մէջէն ելլել կարենալու համար: Վստահ եմ սակայն նոյն ատեն թէ քաղցրութեամբ պէտք է տարած ըլլաք այդ տաժանքը, ի շնորհս կրկնակ այն «աչքի լոյսեր»ուն — սիրելի գրականութեան եւ սիրեցեալ Թէքէեանին — որոնք նիւթ էին տուած այդ գրութեան»⁽⁴¹⁾:

Միք. Կիրճեան այնուհետեւ դարձեալ Թորգոմ Արք.էն կը ստանայ 26 Հոկտեմբեր 1936 թուակիր նամակ մը, ուր կը հաղորդուի. «Երէկ մեծ հանդիսութեամբ տեղի ունեցաւ «Արքոց Թարգմանչաց-Դուրեան գրական մրցանակ»ի պարգևաբաշխութեան հանդէսը, եւ մրցանակի արժանացաւ նաեւ Տիար Յակոբ Օշական, հեղինակը՝ «ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ ԵՒ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ» գործին, որուն քննութիւնը յանձնուած էր Ձեր Ազնութեան»⁽⁴²⁾:

Երուսաղէմ լոյս տեսնող «Սիոն» ամսագրի 1936-ի Նոյեմբերի թիւը կու տայ գրական մրցանակի պաշտօնական հաղորդագրութիւնը, ուրկէ կը պարզուի, թէ Օշականի գործը սիրով բայց

քննական ոգիով գրուած է, կը բաղկանայ 189 մանրատառ մեծադիր էջերէ եւ բաժնուած է հինգ գլուխներու.

ա.— Թէքէեանի ժամանակակից արեւմտահայ գրականութեան պարզած վիճակը, 17 էջ,

բ.— «Բանաստեղծը եւ իր գործերը»,

գ.— «Հրապարակագիրը»,

դ.— «Քրոնիկագիրը»,

ե.— «Վիպողը»:

Հարեանցի բայց ճշդադատ գնահատումներով ներկայացուած վերջին երեք գլուխներուն մէջ ալ միշտ «իմացապաշտ քերթողն է որ իր արձակին քնքոյշ յուզականութեան մէջ զգացուցած է ինքզինք»: Լաւագոյն մասը տրուած է բանաստեղծին, որուն չորս «տաղարան»ներէն⁽⁴³⁾ ներկայացուած են բազմաթիւ մէջբերումներ: Վերջապէս՝ «խանդավառ տարփողանքով, յորդ համակրանքով եւ անվերապահ հիացումով գրուած ուսումնասիրութեան մէջ միտքը բնաւ չէ պատրուած սիրտէն» (էջ 337-338):

Իսկ «Սիոն»ի 1937-ի Մարտի թիւին մէջ կը հանդիպինք Կիւր-ճեանի 10 Փետրուար 1936 թուակիր տեղեկագրին, ուր կ'ըսուի, թէ Օջական ջանացեր է Թէքէեանը ներկայացնել իբրեւ մեր ամէնէն ազնուական, խորագգած, անձնական, կատարեալ, իմացապաշտ, հոգեւորութեան սկզբնական մեղքէն զերծ մնացած բանաստեղծը, իբրեւ մեծագոյն վարպետը մեր աշխարհաբար ոտանատրին:

«... Օջականի աշխատութիւնը իր համեմատութիւններով որքան իր ներքին (intrinsèque) արժէքովը. եզական, աննախընթաց երեւոյթ մըն է: ... Ո՛չ մէկ արեւմտահայ մատենագիր առարկայ եղած է այսքան լիակատար, բազմակողմանի, այսքան հմտալից ու խորաքնին ուսումնասիրութեան մը: Մեծագոյն կոթողը զոր հայ քննադատ մը կանգնած ըլլայ հայ գրագէտի մը փառքին համար»:

Ապա կ'իմանանք, թէ Օջական իբրեւ Թէքէեանի քնարերգութեան գլխաւոր յատկանիշներ թուարկած է՝ խոր, սարստուն բայց զուսպ զգայնութիւն մը՝ հարուստ ալլազան տարրերով բայց առանց անյորդ շռայլութեան եւ ցուցամոլութեան. զգայութենէն (sensation) զգացում եւ անկէ ալ ի խորհուրդ (pensée)

բարձրանալու տիրական շնորհ եւ կարողութիւն, կիրթ, խառապահանջ, գրեթէ անսխալական ճաշակ, չափի (mesure), ժուժկալութեան եւ վայելչութեան բնագոյ — ինչ որ զինքը ամէնէն «դասականը» կ'ընէ մեր ոմանքիքներուն — կշռոյթի եւ ներդաշնակութեան խոր զգայարանք, խորշում ամէն outrancet* եւ զեղծանումէ, մանաւանդ այն հոգեւորութենէն, ճոռոմութենէն, պոռոտութենէն..., զգացմանց արտայայտութեան մէջ տեսակ մը տոհմիկ ամօթխածութիւն, զսպում եւ վերապահում, որ այնքան կ'աւելցնեն իր տողերուն թելադրական ուժն ու յուզականութիւնը (էջ 79-81):

Նոյն ամսագրի 1944-ի Յունուար-Մարտ միացեալ թիւին մէջ, Օշական իր «Համապատկեր»ին մասին տեղեկութիւններ տալով, կ'ըսէ. «Համապատկերը կազմող մենագրութիւններէն... Վահան Թէքէեանը գրուած է 1934-ին, ուրեմն տաս տարի առաջ, մեր բանաստեղծութիւնը շահագրգռող հարցերու իբր հանդէս ու նոյն առնէն մեր հոգիին մէկ պատմութիւնը խորհրդանշող վկայութիւն, որ դարձեալ գրական ուսումնասիրութիւն մըն է, Միսաք Մեծարեանցի թէքնիկով (իմա՝ մանրամագ վերլուծումով մը զարգացող — ծ. հ.)» ու կ'աւելցնէ թէ զայն անփոփոխ ներս կ'առնէ «Համապատկեր»էն, չարաչար չվարուելու համար արդէն սպառած իր ուժին հետ (էջ 16):

Տարի մը ետք, Օշական իր «Սփիւռքը Եւ Իրաւ Բանաստեղծութիւնը (Վ. Թէքէեանի աոթով)» յերուսաղէմ տպագրուած աշխատութեան մէջ կը գրէ. « Վահան Թէքէեանի սերունդին, գործին, զգայնութեան ու արուեստին եւ տունը եւ հատոր մը, տասը տարի առաջ...: Անոր զգայնութիւնը ուսումնասիրել էի միշտ ջերմութեան, խոնաւութեան, սառնոյցին ու դիրտին մէջը իր ժամանակին...» (էջ 19-20), «... ըսի անգամ մը, հատոր մը տուած եմ այս ամէնը բացատրող (Արեւմտահայ Բանաստեղծութիւնը Եւ Վահան Թէքէեան)»...» (էջ 45), « Համապատկերը Վահան Թէքէեան հատորին մէջ տուած է այդ մասին բաւարար վերլուծում» (էջ 104):

* — Չափազանցեալ զեղում:

Հակառակ այս տեղեկություններուն, «Համապատկեր»ի հատորներու շարքը իր աւարտին հասաւ՝ առանց Թէքէեանի մասին նշուած ուսումնասիրութիւնը պարփակած ըլլալու, թերեւս անոր համար որ Երուսաղէմէն ձեռք չէ ձգուած անկիւս:

Թէեւ մինչեւ «Սփիւռքը Եւ Իրաւ Բանաստեղծութիւնը» երկասիրութիւնը Օջական Թէքէեանի մասին մէկէ աւելի անգամներ արտայայտուած էր հրապարակաւ («Մեհեան», 1914, էջ 85-91, «Ծակատամարտ», 1921, թիւ 2555, «Ամէնուն Տարեցոյցը», 1928, էջ 377-385, «Հայ Գրականութիւն», Երուսաղէմ, 1942, էջ 515-525 ելւն.), սակայն անոնք ամբողջական պատկերը չէին տար Թէքէեանի գրական վաստակին: «Սփիւռքը Եւ Իրաւ Բանաստեղծութիւնը» նոյնպէս Թէքէեանի քերթողութեան մասին իր գնահատումներով հանդերձ, չի կրնար, նախորդ արտայայտութիւններով մէկտեղ, փոխարինել «Վահան Թէքէեան Եւ Արեւմտահայ Ժամանակակից Գրականութիւնը» ուսումնասիրութիւնը, մանաւանդ որ, ըստ Օջականի, վերջին «փորձ»ին նպատակը կը կայանայ հետեւեալներուն մէջ՝ «...Արեւմտահայ Գրականութեան մէջ իրաւ բանաստեղծութեան ամփոփ մէկ վերլուծումը, իր մէկ արժանաւոր գործաւորին առիթով...» (էջ 1), «Ներկայ փորձը վերլուծում մըն է իրաւ բանաստեղծներէն մէկուն ազդեցութեան...» (էջ 12), «Վահան Թէքէեան խորհրդանշական քերթող մը, Հայերգութենէն վերջ, կամ հասա՞ծ՝ հաւասարակշիռ ոչ թէ փառքի այլ գոյութեան մը, Սփիւռքին վերեւ, ինչպէս այդ հաւասարակշռութիւնը իրականութիւն էր մեր պատանութեան, օրինակի համար Պէշիկթաշլեանին համար: Ահա, պարզագոյն ձեւի մը տակ այս ուսումնասիրութեան թելադիր մտածումը» (էջ 14):

Հոսկէ՝ անհրաժեշտութիւնը այդ ուսումնասիրութեան* յայտնաբերման ու հրապարակման:

Մինչ ա՞յդ:

* — Յիշեալ ուսումնասիրութիւնը 1955-ին, երբ Պէյրութի մէջ կը նշուէր Թէքէեանի մահուան տասնամեակը, ըստ ականատեսներու, գտնուած է Հայց-Եկեղեցոյ սպասարներէն մէկուն մօտ: Տողերս գրողը համարեաւ համոզուած է, թէ այդ եկեղեցականը Թէքէեանի նուիրուած իր կոյթին մէջ յալնօրէն օգտուած է Օջականի ձեռագրէն:

Վահան Թեքեանի արխիւին մէջ, Երեւանի Գրականութեան եւ Արուեստի Թանգարանին տրամադրուած՝ Մեթր Շաւարշ Սեւոյնքեանէն, հանդիպեցանք «Մելքոնեան Կրթական Հաստատութիւն» անուանաբերը կրող երկու տետրերու, որոնք կը բաղկանան Օշականի «մրջնատառ» ձեռագիրը գրկող խումացած թերթերէ, որոնց առաջին երեսները միայն օգտագործուած են: Առաջին տետրի առաջին թերթին վրայ կը հանդիպինք հետեւեալին՝

«Արեւմտահայ գրականութիւն — Վահան Թեքեան

«Ծանօթութիւն.— Այս դասը խօսուած է Մելքոնեան Հաստատութեան է. դասարանին: Տպագրութեան համար դասին վրայ կատարուած են փոփոխութիւններ:

Յ. Օշական»

Իսկ վերջին թերթին տակը գրուած կը գտնենք «1933 Օգոստոս 1-8, Ամիսնթոս, Յ. Օշական» գրութիւնը⁽⁴⁴⁾:

Դժուար չէ ենթադրել, թէ ասիկա է՝ Օշականի մտադրած ուսումնասիրութեան «նախնական ձեւը», որուն ակնարկութիւնը ըրած է Թեքեան, եւ որմէ առանց փոփոխութեան առնուած է Թեքեանի յօդեանին նոյնրուած գրքոյկին մէջ տեղ գրաւած «Վահան Թեքեանի տեղը մեր քնարերգութեան մէջ» հատուածը:

Տալէ առաջ Օշականի գրութիւնը, նշենք թէ հոն կը գտնենք ենթակայական ու ոչ-գիտական եւ անհիշող միտքեր, մանաւանդ Թեքեանի կողքին յիշատակուող կարգ մը բանաստեղծներու մասին եւ Թեքեանի շուրջ ստեղծուած «լոռութեան պատ»իկ կապակցութեամբ, զորս բնաւ չենք կրնար բաժնել: Ընդգծենք նաեւ թէ Թեքեան-արձակագրի վաստակին անդրադարձող հատուածը զուրկ է գիտական լուրջ արժեքէ, յատկապէս եթէ նկատի ունենանք որ Օշական ծանօթ չէ եղած այդ վաստակին՝ իր ամբողջութեանը մէջ: Վերջապէս, շեշտենք թէ Օշականի գրութիւնը՝ այս հատորին մէջ՝ կու տանք առանց մեկնաբանութիւններու եւ նոյնութեամբ պահպանելով գրադատին ուղղագրութիւնը, մեր միջամտութիւնը վերապահելով խիստ բացայայտ

քանի մը գրչավրէպներու միայն: Ուղղանկիւն փակագիծերու մէջ առած ենք այն բառերը, որոնց վերծանումը կրնայ թէական ըլլալ:

Պէյրուֆ

Դոկտ. ՎԱՉԷ ՂԱԶԱՐԵԱՆ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1.— Այս ուսումնասիրության պատրաստության ժամանակ, տակալին հատորի մէջ չէին ամփոփուած Թէքէեանի նամակները, որոնք Փրոֆ. Աւետիս Սանճեանին ներածութեամբ ու ծանօթագրութիւններով հանրութեան մատուցուեցան 1983-ին՝ Թէքէեան Մշակութային Միութեան հրատարակութեամբ (Տես՝ «Վահան Թէքէեան, Նամականի», Լոս Անճելէս, 1983):

2.— Օշական «Սփիւռքը Եւ Իրաւ Բանաստեղծութիւնը» փորձին մէջ (Երուսաղէմ, 1945, էջ 64) կը գրէ. «Վահան Թէքէեան ինքը Հրաշալի Յարուսին հատորին վրայ իմ խոովեալ հպարտութիւնը կը ջանար հասկնալ, Կեսարիայէն գրուած նամակով մը ուր նորերուն մօտ (այն օրերուն ես ալ նոր մըն էի) իր գիրքին ստեղծած յուզումը կը փափաքէր իրմէն դուրս ապրումներու վերագրուած տեսնել...»: Հոս Օշական յիշողութեան վրէպով մը նամակը կը կարծէ թէ իրեն յղուած է Կեսարիայէն, ինչ որ չի կրնար ճիշդ ըլլալ, քանի որ Թէքէեան իր հատորը լոյս ընծայեց Պոլսոյ մէջ, դէպի Երուսաղէմ ճամբուն վրայ, Կեսարիայէն դարձին: Ան Երուսաղէմ մնաց 1914 Մայիսէն Օգոստոս, ապա անցաւ Եգիպտոս:

3.— «Մեհեան», Պոլիս, 1914, թիւ 5, էջ 85-90: Օշական իր գրախօսականին մէջ Թէքէեանը կը ներկայացնէր իբրեւ պառնասեաններու տիրական ազդեցութենէն չազատած խորհրդապաշտ բանաստեղծ մը, նախճիւրի գրականութիւնը փորձելով տուած մը ելլն.: Թէեւ Օշականի Հարթենքներուն մէջ բացառիկ տեղ մը կը գրաւէ այս գրախօսականը՝ ժխտականէն աւելի դրական մօտեցումով, որ Թէքէեանի անուրանալի տաղանդին պարտադրանքն է անշուշտ, բայց կը մատնէ իր մուտքը նոր կատարող, մեծ յաւակնութիւններով խանդավառ եւ քիչ փորձուած մեկնաբանը:

- 4.— «Կեանք եւ Արուեստ», Փարիզ, Զ. տարի, թիւ 5, էջ 131:
- 5.— Այս մասին տեսնել մեր «Պոլսոյ Հայ Արուեստի Տունը» լոյրածր, «Ըհրակ», Պէյրութ, 1982, թիւ 11, էջ 46-50:
- 6.— «Ժողովուրդի Զայնը», Պոլիս, 7 Փետրուար 1922, թիւ 1015:
- 7.— Տեւ «Արեւ», Գանիրլ., 1930 Ապրիլ 11: Օշականի գրախօսականը լոյս տեսած է «Ծակատամարտ»ի 1921-ի 2555-րդ թիւին մէջ, Ապրիլ 17-ին:
- 8.— «Ժողովուրդի Զայնը», 12 եւ 14 Փետրուար 1922, թիւ 1020 եւ 1021:
- 9.— Գերմանացի հանճարեղ բանաստեղծ Կլօթի մէկ նշանաբանը, գոր որդեգրած էր Թէքէեան եւ կը սիրէր կրկնել ու կրկնած է զանազան աոիթներով:
- 10.— ԳԱԹ-ԳՖՖ, 12 Օգոստոս 1924 թուակիր նամակէն:
- 11.— Նոյն, 20 Դեկտեմբեր 1924 թուակիր նամակէն:
- 12.— ԳԱԹ-ԳՖՖ:
- 13.— «Ըհրակ», Պէյրութ, 1957, թիւ 1-2, էջ 9:
- 14.— ԳԱԹ-ՎԹՖ, 96 ր.:
- 15.— ԳԱԹ-ԳՖՖ:
- 16.— Նոյն: Օշական ալլուր կը նշէ. «1924-ին ուրը-տասը հատ գրողներ, որոնց մէջ ջոջերը կը կազմէին մեծամասնութիւն, անկարող եղան հանդէս մը ոտքի նետելու, երբ հիմնականը, այսինքն՝ նիթականը ապահովուած էր բացառիկ բախտով մըն ալ» (Օշական, «Համապատկեր», հտ. Ժ., Անթիլիաս, 1982, էջ 155):
- 17.— Լ. Զ. Սիրմէլեան, «Լոյս Զուարթ», Պէյրութ, 1972, էջ 117:
- 18.— ԳԱԹ-ԳՖՖ:
- 19.— Նոյն:
- 20.— ԳԱԹ-ԳՖՖ:
- 21.— Հոս է որ առաջին անգամ կը հանդիպինք «Ըհրակ» անուանումին, որ պիտի ըլլար հանդէսին վերջնական անունը, եթէ ան լոյս տեսնէր: Մինչ այդ, ինչպէս տեսանք, Թէքէեան մտածած էր զայն կոչել «Նոր» կամ «Հայ»: Ուրիշ անուն մըն ալ յիշատակած է Սիրմէլեան իր նամակներէն մէկում մէջ՝ ուղղուած իր հոգեւոր հօրը. «...Դուն կ'ուզէիր «Լաստ» անուանել հանդէսդ...» (ԳԱԹ-ՎԹՖ, 174 ր.):
- 22.— ԳԱԹ-ԳՖՖ:
- 23.— ԳԱԹ-ԱԶՖ, Ա. բաժին, 2273:
- 24.— «Լոյս Զուարթ», էջ 118:
- 25.— ԳԱԹ-ՎԹՖ, թիւ 64, էջ 714, Ալպօյանեանի անտիպ ուսումնասիրութենէն, որ կը վերաբերի Թէքէեանի կեանքին ու գործին:

26.— ԳԱԹ-ԳՖՖ:

27.— ԳԱԹ-ԳՖՖ:

28.— Նոյն:

29.— Նոյն:

30.— Կ'ըսենք՝ ժամանակաւոր, անոր համար որ Թէքէեան միշտ փայփայած է գրական հանդէսի հրատարակութեան ծրագիրը, որ յատկապէս 1936-37 թուականներուն, անգամ մը եւս քիչ մնացած է որ իրագործուի...:

31.— Օշականի վկայութեամբ, այդ շփումը մինչեւ իսկ սնունդ տուած է ստեղծագործական ճիգի, երկնումի... («Համապատկեր», հտ. Ժ., էջ 144-145):

32.— «Յուսարեր» օրաթերթ, Գահիրէ, 53-րդ տարի, թիւ 123:

33.— ԳԱԹ-ԳՖՖ:

34.— «Լոյս Զուարթ»..., էջ 125:

35.— Անդ. էջ 126:

36.— «Յուսարեր» ամսագիր, Գահիրէ, 1945, Բ. տարի, թիւ 1:

37.— ԳԱԹ-ՅՕՖ:

38.— Օշական «Համապատկեր»ի Ժ. հատորին մէջ մէկէ աւելի անգամներ կ'անդրադառնայ իր այս ուսումնասիրութեան, նշելով թէ անհկա կրկնագրութիւնն է 1933-ին Մելգոնեանի մէջ գրուած «Արեւմտահայ Բանաստեղծութիւնը Եւ Վահան Թէքէեան» ուսումնասիրութեան (էջ 88 եւ 128):

39.— ԳԱԹ-ՅՕՖ:

40.— ԳԱԹ-ԼԴԿՖ, թիւ 191:

41.— ԳԱԹ-ԼԴԿՖ, թիւ 181:

42.— Նոյն:

43.— Օշական Թէքէեանի քերթողագիրքերը կոչած է «տաղարան»ներ:

44.— Օշական «Համապատկեր»ի Ժ. հատորի 306-րդ էջին մէջ կը նշէ. «... «Վահան Թէքէեան» առաջին մշակումով պիտի վերածուի հարիր էջնոց essaiի: Վահան Թէքէեան տեսած է զայն: Այդ essaiն, երկրորդ մշակումով մը, պիտի գրուի, ըլլալու համար երեք հարիր էջնոց հատորը, որ ներկայացուած է Ս. Թարգմանչաց Դուրեան մրցանակին»:

Իրինչ այդ, Օշական անթուակիր նամակով մը, — հաւանաբար գրուած 1933-ին, — Թէքէեանին գրած էր. «Խոստումիս համեմատ կը դրկեմ երկրորդ մասն ալ: Որքան շատ ըսելիք կայ ու որքան քիչը արտօնուած ենք ըսելու: Գիտցիր թէ եթէ այս երկու կտորները մշակէի, պիտի ունենայի առնուազն ութ անգամ աւելի ընդարձակ essai մը»:

Պէտք է նշել, թէ իբրեւ հարիր էջնոց essai ներկայացուած

ուսումնասիրությունը... Թէքէեանի արխիւին մէջ յայտնաբերուած երկու տետրերն են. իսկ երեք հարիւր էջնոց հատորը Երուսաղէմ դրկուած 189 ձեռագիր էջերէ բաղկացեալ մենագրութիւնն է պարզապէս:



ՎԱՀԱՆ ԹԵՔԵՆԱՆ

ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ

ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄՆԵՐ

- 1.— ԲԱՆԱՍՏԵՂԾ
- 2.— ՎԻՊՈՂ
- 3.— ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐ
- 4.— ՔՐՈՆԻԿԱԳԻՐ

ԳԼՈՒԽ Ա.

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԵՒ ԻՐ ՍԵՐՈՒՆԴԸ

Յատկանշական է որ դէմքը տիրական կնիքին տակը ըլլայ հիմնական իր տուրքին.— բանաստեղծութեան: Մօտ քառասուն տարի գրիչ շարժող մարդու մը մօտեցած պահուն, քննադատը ուրախ է երբ կրնայ զանգուածէն (գործէն) մոռնալ շատ բան, այս անգամ՝ երկրորդական, ծանրանալու համար յաւիտենական շնորհին որով գրողի մը անունը կը յանձնուի սերունդներու պաշտամունքին: Վահան Թէքէեան մեր գրականութեան մէջ պիտի տխրողոսուի իբր բանաստեղծ:

1.— Իր սերունդը: Ինծի համար հաճելի է մեր գրականութեան որոշ մէկ շրջանը պիտակել արուեստագէտ սերունդ տխրողոսով: Բառը պէտք է առնել լայնագոյն իմաստով մը: Զայն կազմողները մարդեր են որոնք կը մեկնին գրեթէ իրարու հակադիր անկիւններէ, հասնելու համար նոյն գագաթին: Ու այս գագաթը արուեստի բարձրութիւն մըն է հաւասարապէս առինքնող բոլորին ալ համար: Բարբարոս ու դաժան ու դժբախտ Պարթեւեանից, ու աղջիկէ մը անելի փափուկ, հեւասպառ ու նոյնքան դժբախտ Մեծարեանցից, մտածող, վերլուծական ու ինքնակեդրոն Տիկից

Եսայեանից եւ երկինքն ու երկիրը նուաճել ձգտող անսփոփ ու ինքնակոտոր Զրաքեանից միջեւ կարելի է քաշել կապ մը որ հասարակաց է այնքան իրարու աննման այս տաղանդներուն համար: Այս մասնայատկութիւնն է ահա, որ կ'ուզեմ յանձնել ձեր ուշադրութեան: —Ատիկա պաշտամունցն է արուեստին:

Ծանօթութիւն: Անոր համար այս ճշգրտմը՝ վասնզի զինքը անմիջապէս կանխող մեծ սերունդը, իրապաշտը, գրեթէ անտարբեր է արուեստին հանդէպ: Արփիար Արփիարեան չի հաւատար անոր:

2.— Իրապաշտներէն յետոյ: Մեր գրականութիւնը մենք կը գտնենք վայրկեան մը ենթարկուած ցեղին մեծ դժբախտութեան ու անոր արդիւնք հոգեւեղումին: 1895-96ը միայն մեր պատմութեան համար չէ որ թուական կը կազմէ: Մեր արուեստը անով կը փոխէ տարազ ու նկարագիր: Մըղձաւանջը, բռնապետութիւնը, գրաքննութիւնը կ'աւելնան աղէտով ստեղծուած հոգեբանութեան: Մեր ժողովուրդի հոգին կը հալածուի, կը վտարուի գրեթէ մեր արուեստէն: Արտաքին այդ ճնշումը կարեւոր պատճառներէն մէկն է որպէսզի՝ արդէն սխալ սկիզբով մեր գրական մտահոգութիւնները (մենք գրասենեակի եւ սալոնի, բառի եւ ձեւի արուեստ մը շփոթեցինք հաստ, հարազատ, ցեղային ստեղծումին հետ) արգիլուին իսկական, ըսել կ'ուզեմ՝ խորքի փառասիրութիւններէն ու ծանրանան ձեւին գեղեցկութեան: Հիմա, մեզի համար պարզ է որ իրապաշտներէն յետոյ մեր արուեստը յաճախ ճղճիմ բայց միշտ անհատական, չըսելու համար անհատապաշտ զբաղում մըն է, փոքր կամ մեծ փառասիրութեանց գոհացումին ի սպաս, անձնական նախասիրութիւններ հետապնդող քան թէ օգուտը զանգուածին: Գրականութիւնը ալ կորսնցուցած է հանրային ձեռնարկի իր նկարագիրը որուն ամրացումին համար այնքան ջանք էին թափած իրապաշտները:

3.— Խորհրդապաշտները: Խորհրդապաշտութիւնը

ըլլալով միանգամայն ձեւի պաշտամունք մը, հարկադրաբար կը տարածուի իրապաշտներէն յետոյ մեր հրապարակը գրաւող սերունդին ալ վրայ: Միայն պէտք չէ զայն լայնցնել մինչեւ իր եւրոպական ընդարձակութիւնը: Ամէն բանէ առաջ, անիկա մեր մէջ ճարտարանք մըն է, մեզի սիրելի զգացումներ եւ յուզումներ թուրքին թափանցումէն ազատելու: Այդ է պատճառը, որ մեր արձակն իսկ ստիպուի նրբանալ, շատ աւելի՝ քան հոգին իսկ մեր ժողովուրդին: Ու մեր քերթողութիւնը հասնի նրբութեանց ու ձեւերու որոնք անկարելի պիտի թուէին, օրինակի մը համար, Դուրեանին պարունակին: Ասկէ զատ, մեր այդ շրջանի բանաստեղծներուն բռնադրուած թափառական ու տարագիր կեանքն ալ դեր մը ունի այս զառաժուծին մէջ:

4.— Ազդեցութիւն արեւմուտի: Իննըսունըվեցի աղէտը զարկաւ մանաւանդ մեր միտքը: Պոլիսը կը պարպուի մեծ անուններէն: Ու, արդէն կազմուած երիտասարդներ, թափառական՝ ոստանէ ոստան, ենթարկուած են այդ մշակոյթներուն խոր ազդեցութեան: Եւ որովհետեւ շրջանին ամէնէն տիրական հոսանքը խորհրդապաշտութիւնն է արուեստին մէջ, հասկնալի կը դառնայ մերիններուն ալ յարումը այդ վարդապետութեան: Տաղանդէ տաղանդ, այդ ենթարկումը պիտի անցնի զանազան երանգներէ: Թէքէ-եանին մէջ խոր ու կատարեալ, Մեծարենցին մօտ անիկա պիտի յայտնաբերէ ինքզինքը առաւելապէս երաժշտական տարրերով:

5.— Պոլիսը: Այդ օրերուն Պոլիսին կը պակսի հեղինակաւոր որեւէ բանաստեղծ որուն գործը անցնէր մեր թացիկ ու սակարկուած հիացումներէն անդին, հիացումներ այնքան պզտիկ ու նանրամիտ: Մեր գրականութեան ամէնէն տկար ճիւղը՝ մեր բանաստեղծութիւնը, ան որ աւելի առաջ (եօթնասունի սերունդ) եւ աւելի վերջը (910-ի սերունդ) տիրապետող ճիւղն էր եղած ու պիտի ըլլար անոր: Քաղաքական պայման, տաղանդի՞ պակաս, հայկակա՞ն ճնշում՝ ինչ անուն ալ պատշաճինք երեւոյթին, արդիւնքը չի փրկեր

ինքզինքը: Այսպէս, ըլլալու համար աւելի հասկնալի, կու տամ անուններ:

ա) — Տաղաչափներ: Այն օրերուն ալ, ինչպէս հիմա, քսանով, յիսունով կը համրուէին մարդեր որոնք օրաթերթերու, հանդէսներու մէջ քերթուածներ կը ստորագրէին: Այսօր դեռ անոնցմէ չատին անունները կը յամառին, սուղուելէ առաջ մոռացումին ծայրը որ պիտի թաղէ այնքան անիրաւ հռչակներ ու անարդար յաւակնութիւններ:

բ) — Տիկին Սիպիլ, որուն երաժշտական ճաշակը եւ ժանեկագիտութիւնը անկարող եղան փրկելու խորքին փցուն կամ հասարակ նախանիւթը:

գ) — Ռ. Որբերեան, որ անտեղի պայրընականութիւն ու ընտանի Եղիայէն զառածած հանդիսային քնարերգութիւնը փորձեց արուեստին հանել ու նուաղեցաւ:

դ) — Տիրան Զրաֆեան, մշուշաբաղձ ու երկնանուէր, որուն լեզուական խաժամուժը, կամաւոր ու բռնի, հազիւ կը յաղթուի տաղանդին փաղաղիչ պայծառութենէն:

Տակաւին կարելի է շարունակել այս անուանացանկը, տեղ տալու համար Արշակ Զօպանեանին որուն մեր քերթողութիւնը կը պարտի եւրոպական ձեւեր ու արուեստակութիւն, Արտաշէս Յարութիւնեանին որ բանով մը աւելի է տաղաչափներէն բայց այնքան գունատ է իր զգայնութեամբը:

Եղիշէ Եպիսկոպոս Դուրեան դեռ հեռու է Հովուական սրինգին ամրաչէն, précieux* թէքնիկէն**: Ստեփան Խարբուրդեան եւ Վահան Մալեգեան կ'երեւան ու կը մեռնին, տանելով իրենք իրենց, իրենց անունները քանի մը քերթուածի տակ սեւեռելէ ետքը:

Ահա այն քանի մը անունները որոնք կրնան վերցուիլ բանաստեղծներու ստուար ու տժգոյն կարաւանէն:

(*) — Թանկ:

(**) — Բնագրին մէջ՝ այստեղ, ինչպէս աւելի ետք, Թեֆնիկ, փոխանակ՝ Թեֆնիֆ-ի (Վ. Ղ.):

Վահան Թէքէեան այս շրջանէն ոչ ոքի ոչինչով է պարտական:

6.— Մեր քնարերգութիւնը մինչեւ 900: Գիտենք արդէն որ մեր քնարերգութիւնը կը սկսի ռոմանթիզմով, քանի մը մեծ անուններ կը նետէ հրապարակ, ու իր կարգ մը երեսներէն կը բխւորեղանայ անմոռանալի գործերու մէջ (Ալիշան, Պէշիկթաշիեան, Դուրեան): Մինչեւ 1890, մօտաւորապէս քառորդ դար, մեր բանաստեղծութիւնը կը տառապի մարդու պակասէն: Կը լռեմ վրիպանքը երկրորդական ռոմանթիքներուն: Կը լռեմ աղէտը վարժապետ տաղաչափներուն: Կը մօտենամ սխալ հասկցուած արեւելահայ ժողովրդապաշտութեան ու կ'անցնիմ: Ասոնք անշուշտ դեր մը ունեցած են մեր բանաստեղծութեան սա նուազումին մէջ: Բիչ շատ տանելի արուեստի մը հաստատումին համար պէտք պիտի ըլլար անցնիլ 1890-էն ու հանդիպիլ Սիպիլին, այն ժամանակ թօթափած ռոմանթիկներու ազդեցութիւնը, մտնելու համար Արշակ Զօպանեանով մուտք ունեցած քնարեական ու պառնասեան թէքնիկին ծառայութեան: Նոյն ատեն, Արփիար Արփիարեանի ղեկավարութեամբ դրական որոշ դիմագիծով դպրոց մը իր կնիքին տակն է առած մեր ստեղծագործութիւնը: Զմոռնալ՝ քաղաքական հալածանքն ալ որ դեր ունի այս անկումին մէջ: Գրաքննութիւնը արգելքի տակ է դրած չափուած բարբառը: Ծանրանալ՝ յեղափոխական խմորումին որ մեր մտքին եւ զգայնութեան բոլոր ուժերն ու աղբիւրները ի սպաս իրեն կը շահագործէ: Այնպէս որ ստեղծագործ երկունքին համար միջավայրը աննպաստ կը ներկայանայ:

Ծանօթութիւն: Մեր քնարերգութեան այդ շրջանի նուազումը բաղդատելի է այս օրերուն դիտուած ուրիշ նուազումի մը: Հիմա ալ ունինք հարիւրէ աւելի անուններ: Բայց ոչ ոքի գաղտնիք է խոր անկումը ուր կը տապալուի արդի քերթողութիւնը: Պայմաններ ազատ էք փնտռելու եւ գտնելու, բացատրելու համար այս անկումը:

7.— Յեղափոխութիւն եւ քանաստեղծութիւն: 96-ի աղէ-

տը մեր ժողովուրդի նիւթական կեանքին բերած իր խոշոր կորուստովը ուշագրաւ է ինծի. մեր մտքին վրայ իր խոր անդրադարձը մեզ կը տանի այլապէս տխուր եզրակացութեանց:

Տառապանքին անժուժելի մեծութիւնը (մեզ ջարդողները միայն բարբարոսներ չեն այլ արդի մշակոյթին բարձրագոյն ներկայացուցիչներուն լուին հաճութիւնը), ազգին հոգիին մինչեւ անհասելի խորերը մխուած սլաքին սաստկութիւնը (այնքան մօտիկէն էր անցած ազատութեան դարաւոր երազը ու պահ մը շոյած մեր վէրքերուն խոցը), հակազդեցութեան անհուն պապակ մը, մղձաւանջը կոխկոտելու, «ցեղին անտիպ, անայց խորութիւններէն» նոր կորով քաղելու ու այդպէս «զրահուած», «հանդերձուած»՝ մեր ճակատագիրը դիմաւորելու մեր բարբարոս կամքը: Միւս կողմէ՝ բազմահազար ամերով մեր հոգեկան ստրկութեան մէջ ինչպէս կրակէ հնոցի մը մէջ՝ երկաթին շողարձակ սաւիճը, ու նուիրման ալ համապատասխան սաստկութիւնը. որով, մեր տղաքը, ամէն կարգէ ու դաւանանքէ, իրենց արիւնը, «ոսկի բաժակներու մէջ» իրենց արիւնը կը տրամադրեն հայրենիքի խորանին, փոփոխած են հիմնովին նկարագիրը մեր արուեստին:

Քերթողական մարզը ամէնէն աւելի շեշտուած կերպով մը գետին պիտի դառնար այս բարեշրջումին: Այսպէս

ա) — Սիամանթօ այդ ոգիէն պիտի քաղէ ուժգին, քիչ մը շատ հերարձակ, մռայլ բայց հրդեհէն կարմրած երիզներով արուեստի պաստառ մը որ, կրակին շունչէն զաւարագին ու բարձրաթեւ, պիտի ծածանի ու քալէ, «հոգեվարքին» ու յոյսին ջահերը» իր առջեւէն կերօնելով:

բ) — Վարուժան որ անհաւասար խտութեամբ ու տարերային սա պոռթկումին դէմ պիտի «շեփորէ», նոյնքան

(*) — Օշական գրած է՝ «հոգեվարք» (վ. Ղ.):

մարմարեղէն շքեղութեամբ, միւս Յարութիւնը Յեղին սիրտին, քրմական իր մատներով անցեալին անդունդներէն զայն հանելով ու նետելով լոյսին:

Ազգային աղէտը, թուրքերու հասողութենէն դուրս այս քերթողներուն մէջ իր խորագոյն նուիրագործումը կը ստանայ: Այդ երկուքին պէտք է աւելցնել անունը Վահան Թէքէեանին, որուն՝ ճակատագիրը վերապահած էր այլապէս անդարման սուգը մեր վերջին կործանումին: Ան որ սկսաւ կէս գիշերին, արշալոյսը կարծեց ողջունել ու սուգուեցաւ կրկին մշուշներուն ետեւ:

8.— Մեծարեցեալ եւ իր արուեստը: Ամբողջացնելու համար նկարագիրը շրջանին կը մնայ տալ անունը միւս բանաստեղծին, որ, ձայնի եւ գոյնի ծիածան մը աչուրններուն, հիւանդ իր սիրտը պտըտցուց ծաղիկէն լոյսին, թելէն՝ հեւացող մութերուն. գտնելով, ստեղծելով անհուն դաշնակութիւններ որով աւագին հատիկը կը շաղկապուի սիրող սրտերուն կայլակին:

9.— Արձակ փերթուածը: Ու վերջացնելու համար այս գլուխը, հարկ կը զգամ հոս յիշատակելու շրջանին ամէնէն յարգի, բայց այնքան ալ դժուար նուաճուելիք ու չարաչար լլկուած սեռը: Օտարամուտ, թերեւս ատոր համար ալ կեղծ, բայց պոլսական ճաշակներուն տարօրէն յարմար (գրաքննութիւն, խառնուածքի պակաս, ըսել կ'ուզեմ՝ զայն փոխանորդող ստացովի, գիտուն թէքնիկ, ճիգէ խուսափում, լրագրական երանգ, բառամթերքի եւ տարազներու ճոխութիւն) այդ սեռը բոլոր սկսողները քաշած է իր ակօսին: Զկայ գրող մը այդ շրջանէն, որ խուսափած ըլլայ անկէ: Կը զառածէ դէպի իր արուեստակեալ հրապոյրին՝ մինչեւ իսկ գաւառի առողջ, գեղջուկ տաղանդները, Ռուբէն Զարդարեանն ու Արտաշէս Յարութիւնեանը: Պաճուճապատ ոճի, պատկերի, փոխաբերութեան, բառական ճարտարանքի, շրջուած ռոմանթիզմի խառնուրդ այս անհարազատ սեռը խեղդուեցաւ ներկին ու կեղծիքին մէջ:

10.— Այս քանի մը գիծերը, որքան արագ, այնքան ալ խոշոր, բաւ կը սեպեմ կազմելու համար յատակը համապատկերին ուր կազմուած է դէմքը արեւմտահայ քերթողութեան ամէնէն մեծ ու ամէնէն դժբախտ անուններէն մէկուն: Զոր երեսուն տարի անդադար ուրացանք. մերթ լռելով, մերթ հայհոյելով: Չեմ գիտեր յոբելեան մը բան պիտի՞ փոխէր դառնութենէն որուն մէջ սեւցան, ածխացան ազնուազգի անոր ջիղերը: Չեմ գիտեր, զինքը բա՞ւ են սփոփելու նորերուն խանդաղատանքը, քանի մը իրեն պէսներուն մենաւոր հիացումը իր մենաւոր մեծութեան:

ԳԼՈՒԽ Բ.

ԳՈՐԾԵՐԸ

- 1.— Հոգեր
- 2.— Հրաշալի Յարութիւն
- 3.— Կէս գիշերէն մինչեւ արշալոյս

Ծանօթութիւն: Այս դասին խօսուած պահուն (1932 Յունիս) Վահան Թէքէեան չէր հրատարակած իր չորրորդ գիրքը՝ Սէր: Բայց զայն կազմող քերթուածները մեծ մասով տպուած էին զանազան տեղեր: Այնպէս որ անոնք ու տակաւին հատորի չմտած բազմաթիւ ուրիշ քերթուածներ ալ իրենց ազդեցութիւնը բերած են այս դասին պատրաստութեան:

Ա.

ա) — Հոգեր: Այս հատորով քննադատը ատեն չունի լրջօրէն զբաղուելու: Երեսուն-քառասուն տարիներու վրայ ինքզինքը տալու ճակատագրուած քերթողական երակ մը. հարկադրաբար առաջին բխումին պիտի չգտնէր հոծութիւնն ու տեսակարար կշիռը ապագայ ցայտփին: Այսպէս է պարագան Վարութանին մօտ որուն Սարսուռները կրնային

գրուած չըլլալ: Բայց ինչպէս եղերաբախտ բանաստեղծին այդ վրիպած հատորիկը թանկագին փաստ մըն է շրջանին նաշակներուն, նոյնպէս Հոգեբրն ալ կշիռ կը ստանայ իբր փաստաթուղթ մը շրջանէն ու աւելի ըլլալով՝ բանաստեղծին ապագայ բարեշրջումէն:

Այսպէս.

Այս գիրքէն կը զեղչեմ դպրոցէն ստացուած միամիտ խանդավառութիւն մը հանդէպ ոտանաւորին. կը զեղչեմ՝ փառքի վրայ, հպարտ մեր րէալիզմին ու պառնասեան թէքնիկին մեծ աշխատաւորներուն (Զօպանեան, Սիպիլ) հանդէպ իր սկսնակի հարկը: Կը զեղչեմ վարժապետ տաղաչափներու անխուսափելի ազդեցութիւնն ալ: Անդի՞ն:

— Կը մնայ բաւական բան որ արդարացնէր գոյութիւնը գիրքին:

Ու տարրեր՝ այդ բաւականէն:

1.— Ուշ հասնելու սահմանուած հոգիի մը մէջէն չպատճառաբանուած տրտմութիւն որ հիմա մանաւանդ մեզ կը զարմացնէ որքան կը յուզէ: Ո՞րքէն զգաց այդ երիտասարդը իր ապագայ լքումը, մոռացումը, ուրացումը, այդքան կանուխ երբ ուրիշներ, այդ տարիներուն, եթէ չէին զարնուած մահուան մականով (Դուրեան, Մեծարեմ) կամ լեարդին ու ջիղերուն դեղնախտովը (Եղիա), կեանքը պիտի տեսնեն առնուազն փոփոխակի իրականութեամբ:

2.— Աղմկոտ, վերապահ իր յուզականութիւնը որ անոր անհաղորդականութեան մեծագոյն պատրուակը պիտի դառնար մեր մտքին պանդոյրներուն քով:

3.— Ապրելու տեղ մտածելու իր քացորոշ կեցումովը:

4.— Կեանքին վրայ իր ակնոցին տրտմայեղծ մթութիւնը:

5.— Դեռ երիտասարդ, ինքզինքն պարտուած մը զգալու խոր յստակութիւն մը:

6.— Սովորական ճամբաներէն տրտում փախուստ մը:

7.— Սրտին հարկը միտքի ճամբով վնարելու անուր յանդգնութիւն մը, մեզի պէս ցեղի մը մէջ, ուր իմաստը, անոր գործարանները, անոր աշխատաւորները դարերէ ի վեր անխնայ հալածուեցան:

Դրական այս հաստատումները այդ պատանի ու երիտա-
սարդ ներշնչումները կ'անձնաւորեն ի նպաստ անոնց գոր-
ծաւորին: Միւս կողմէն այն կիսամութը, զգացման ու յու-
զումի աղջը, յոյսին ու քայքայումին իրերախառն մղձա-
ւանջը զոր ուրիշ վարպետ մը, աւելի ուշ, պատիր լոյսերու
աղբերացման մը դէմ, տարազել փորձեց, իր սերունդին
այդ հոգեկան աշխարհը Յայգալոյս արտայայտիչ բառով
մը փոխաբերելով (Ռ. Զարդարեան), այդ տարրերը գոյու-
թիւն ունին այդ հատորին մէջ:

Եթէ Միսաք Մեծարենց, հիւանդութեան տենդին մէջ,
երեք-չորս տարիէն իրագործեց յեղաշրջումը իր տաղան-
դին, իր ողորմելի մէկ քերթուածին եւ իր մէկ գլուխ-գոր-
ծոցին կազմութեանց մէջտեղ ժամանակին յղացքը հերքե-
լով, Վահան Թէքէեան զերծ եղաւ նման հարկադրանքէ մը:
Ի՛նչ որ մէկը պիտի ընէր երեք տարուան մէջ. միւսը պիտի
ընդարձակէր անոր կատարումը երեսուն ու աւելի տարի-
ներու վրայ:

Բ.

բ) — Հրաշալի Յարութիւն

Վահան Թէքէեան այս հատորով լիութիւնը կը գտնէ իր
տաղանդին:

Չեմ զբաղիր անոր մէջ հաստատուող երկրորդական, ըզ-
մեզ բոլորովին օտար եղող մաս մը քերթուածներով: Ա-
տոնք թերեւս ամէնէն սիրելիներն են բանաստեղծին հա-
մար: Բայց անոնց այդ բացառիկ անձնականութիւնը պատ-
ճառ ալ է անոնց անհաղորդութեան: Կը հաւատամ թէ մեծ
պատրաստութենէ մը ետք ընթերցողին կողմէ, այդ թոյլ,
մութ, անհաղորդ նկատուած կտորները պիտի պարզուէին,
խորանային, եղբրական մշուշէն ազատելով զիրենք այդ-
պէս մեհենադրոշմող սիրտը: Ասիկա ըրած են Ռէնպոյի,
Վերլէնի, Մալարմէի կարգ մը քերթուածներուն վրայ: Ու
արդիւնքը սխրալի յուզում է եղած:

Ատոնցմէ զուրս, գիրքին հաղորդական մասը. մեր լեզուով ամէնուն մատչելի ու խօսող մասը (չեմ արծարծեր վէճը որ քերթողին գործը կը զլանայ քերթողին զայն դրաւելու համար ընթերցողին ի վայելումն) մնայուն ու անխորտակելի արժէք է մեր քերթողութեան համար:

Ահա քանի մը յատկանիշներ.

ա) Երկրորդ և երրորդը: Գիրքը աչքի կ'իյնայ ամէնէն շատ նիւթերու իր նորութեամբը: Մեր բանաստեղծութեան մէջ ընթացիկ պարտէզները, ածուները, պոզոտաները ու ասոնց սովորական տէգոնը կը յանձնեմ ձեր ուշադրութեան ու կ'անցնիմ: Հաւաքեցէք Մ. Պէշիկթաշլեանի եւ Դուրեանի տաղարաններուն նիւթերը: Այն ասէն պիտի համոզուիք աշխարհի, ոգիի, աչքի, զգայնութեան այն անհուն զանազանութեան որ ի յայտ կու գայ այդ հատորին մէջ: Մեր մեծ քերթողները իրար կ'արձագանգեն եթէ չեն կրկներ: Թէրգեանին եւ Ալիշանին ռումանթիզմը, Զօպանեանին եւ Սիպիլին ռեալիզմը կարելի է իրարու վերածել: Շեղողները:

— Անշուշտ: Մեծարեց, Զրաքեան, Թեքեան: Կարծեմ մեր քերթողութեան մեծագոյն անունները տուած եղայ:

Այնպէս որ Հրաշալի Յարութիւնը մեր մէջ բնաւ չըփորձուած նիւթեր, կամ փոճուածներն ալ բոլորովին նոր ձեւի մը տակ այլացնող մեծ արուեստագէտ մը կը պարգեւէ մեզի: Կարդացէք հատորին Հայրենի գրոյցներ մասը ու պիտի համոզուիք թէ ինչ մոգական արուեստով մը մեր պատմութեան ամէնէն ընթացիկ, սովորական ասումները կը բարձրանան ամէնէն ինքնատիպ, շլացիկ պատկերներու:

Նոյնիսկ ամէնէն մաշած նիւթը, բառը, պատկերը անոր շունչին տակ անսպասելի շնորհով մը կը նորոգեն իրենք զիրենք: Քանի մը ցայտուն օրինակներ աւելորդ պիտի չըգային:

1. — Բնութիւնը, զոր ծիծաղելի ըրինք լնակներով, գիփիւններով, սոխակներով, լուսնակներով: Զոր աւելի վերջը հեւասպառ տեսիլներու անգայտապարի մը վերածեցինք: Որ, կարճ ըլլալու համար, աժեմին ու չաժեմին

դարպասին իջեցուցինք: Վահան Խէքէեան զայն չի հասկնար իբր պատկերներու շտեմարան մը, որմէ բանաստեղծի սովոր ոսպնեակը կը զատէ երբեմն տպաւորիչ, ծիածանուած, խայտանկար գեղեցկութիւններ, ռոմանթիք կամ պառնասեան թէքնիկով: Այդ բնութիւնը աւելի յաճախ հոգեկան դաշտանկար մըն է անոր մօտ, ու իբր այդ սերտօրէն կապուած զայն զգացող հոգիին ալ գոյնին: Պոսիւնը շատ կանուխէն ճանչցող այդ բանաստեղծը պիտի պտտի հոգերուն ու խոտերուն մէջէն ու պիտի այցուի մահով: Անշուշտ կան անոր էջերուն մէջ գետեր, պարտէզներ, կամուրջներ, տեսարաններ: Բայց առաջին ակնարկը պիտի բաւէ զանազանելու անոնց այլապէս բարդ իրականութիւնը միւս քերթողներուն այլապէս սիրուն ու դիւրին անիրականութենէն: Մենք կը դժուարինք հիմա Պետրոս Դուրեանի հետ հարցնելու երբեք չտեսնուած լճակի մը

«Ինչո՞ւ ապշած ես լճակ»

«Ու չեն խայտար քո ալեակք»

«Արդեօք հայելոյդ մէջ անձկաւ»

«Գեղուհի մը նայեցաւ...»

Այս մէկ հատիկ տունը կը բաւէ բացատրելու երանգը մեր մտածումին:

2.— Կիմը, որ չի ներկայանար իբր խմոր մը ընթացիկ յուզումներու կամ «քնար» մը՝ քիչ մը շատ միամիտ, չըսելու համար ուռուցիկ ողբերու, այնքան յատկանշական տոգունութեամբ մեր ռոմանթիքներու տաղարաններէն: Որ դէմք իսկ չունի, չփոթուելու չափ իր սեռէն անգամ: Զոր անիկա կը պտտցնէ իր հետ, ըսելով անոր առանց պատրանքի բաներ, լսելով անկէ առանց մշուշի բաներ: Որ «կոյսը» չէ հիներուն, ոչ ալ աղճատուած, պղծուած «քոյրը» նորերուն: Որ, կը փորձուիմ ըսելու, երկրորդ դէմքն է բանաստեղծին, ու ատով կ'ընդարձակուի շատ աւելի քան ընթացիկ յղացքը ու չի փոքրանար «բաշխուելով իսկ երկրի բոլոր խեղճերուն»:

3.— Յեղային մղձաւանջը, ուրկէ սրսփուն պատկերներ,

հռետորական շատ հնչեղ թեմաներ կը կտրեն, կը ձեւեն մեր քերթողները, փոխաբերութեան եւ ուժգին verbe*-ի ջահերով լուսաւորուած: Ոչ անէծք: Ոչ իսկ բողոք, որոնք այնքան բնական են մեր բոլորին բերանին: Այլ շրջուած, գուսպ թախիժ որ իմաստունինն է սա աշխարհին մեզի անհաս արդարութեա՛ն դիմաց:

Հարկ պիտի ըլլար շատ երկարել այս խտացումները, մօտենալ կրնալու համար նիւթերուն միայն կմախքին: Կ'անցնիմ: Ու կու տամ ինչ որ բերած է ինքը միայն իր գիրքին:

Ատոնցմէ կարելորդ, ի՛նքը, այսինքն կտոր մը միս, սի՛րտը, տրուած տաքին ու պաղին, լոյսին ու մութին, փողոցին ու քարանձաւին, որ այնքան օտար պիտի գար մեր ռոմանթիքներու հանդերձած բուրաստաններուն: Որ պիտի դողայ անցնող ամէն մէկ շշուէջէ, քսուող ձիւնէն կամ պըտուտքող հայեացքի մը ճօճանակէն: Յուզուող բոյրեր, պատուհանն ի վար հեւացող ճաճանչներ անոր փմը անդունդը պիտի կոծեն: Ու քալուածք մը որուն կը հետեւի մուշկի մը պայծառ, սխրալի, անտես ժապաւէնը. զայն պիտի կծկէ իր ծալքերն ի վար: Վասնզի սուտ չէ բացատրութիւնը որ կիններուն ոտքը մեր սիրտին վրայ արշաւի կը հանէ: Այս լայնքով բռնուած պատկերացում մը էջերով չի կրնար սպառել ստորոգելիները անոր նոր անձնաւորութեան: Կը փակեմ այս բարակրաֆը** մօտենալով անոր, այդ սրտին մէկ խորշին, դարաւոր ատրուշան ուրկէ քուլայ քուլայ կը քակուի մեր ցեղին հոգին, խաւարին վրայ լոյս, ժապաւէն ծիածանելով մեր ստուերակոծ ու դժբախտ աչքերուն: Յոյսի՞ն երգը:— Առանց ատոր իմաստ պիտի չունենար մեր «աննուաճ կարօտը» դէպի երջանկութիւն, աղատութիւն, մեծութիւն ու գեղեցկութիւն, որոնք բառ ըլլալէ

(*)— Բան՝ խօսքի իմաստով:

(**)— Պարբերութիւնը:

առաջ մեր ներսը թաղուած, մոմիացած մեռելներ են բայց
պատրաստ արթննալու:

Ու ահա ուրիշ յատկանիշ.

բ) — Ներշնչման անկեղծութիւն եւ խորութիւն: Թէքէ-
եանի տաղարանին հիմնական առաքինութիւններէն մէկը:
Ջունի ցող մը ուրկէ պակսի անոր տաղանդը, բառը առնե-
լով թէքնիկէն վեր իմաստով մը: Քերթուածի մը բախտը
տարօրինակ է երբեմն: Որքան շատ իջնէ դէպի ուրիշները
— ինչ որ հոմանիշ է կազմի ընդհանրութեան, հետեւաբար՝
ներգոյակ իսկութեան սակաւութեան — այնքան անանձն
դառնալու վտանգին կը դիմէ: Յաճախ մեզ կը պատահի
կարգաւ քերթուածներ, առանց հեղինակի անունին պէտքը
զգալու: Կ'ըսեմ ասոնք, վասնզի նորագոյն ըմբռնումի մը
համեմատ Պոտլէռի գործը Հիւկոյի հսկայ ստեղծումէն գեր
դասող տարրը կը հպատակի անձնականութեան շատ շեշտ
բայց ոչ պոռոտ անձնականութեան մը հարկին: Մի շփոթէք
Դուրեանին հերարձակ անձնականութիւնը Թէքէեանի գու-
շակելի, ըսել կ'ուզեմ թաղուած անձին հետ: Առաջինը տի-
րապետող գազաթ մըն է, որ կ'ամբառնայ շրջապատի հար-
թութենէն, բայց գաղտնիք չունի նայուածքին համար:
Երկրորդը խութ մըն է, հազիւ իր գլխիկը կտրած ջուրերուն
սաւանէն դէպի դուրս. բայց կը խորանայ դէպի յատակը,
դառնալու համար նոյնքան հսկայ գազաթում մը, դէպի
վար: Զայն ընդգրկելու համար աչքը պէտք ունի աշխա-
տանքի: Երբեմն այս անձը այնքան քիչ ինքզինքը կը մատ-
նէ որ շատ մը քերթուածներ պարտաւոր կը դառնան մեկնո-
ղականներ ունենալու իրենց հետ: Առաւելութի՞ւն: Թերու-
թի՞ւն: Բառեր են ասոնք որոնք կը ձգեմ հրապարակի մու-
նետիկներուն, commis voyageurներուն*, ապրանք քշելու
համար խոշոր պիտակներ որսացողներուն: Ինծի համար

(*) — Տառացիօրէն՝ շրջուն պաշտօնեաներուն. այստեղ՝ փե-
րեզակներուն (Վ. Ղ.):

բաւ է ձեզի հաղորդել որ որեւէ քերթուած անոր մօտ պատահական ծնունդի մը արդիւնքը չէ, այլ հետեւանքը, հրիտակը, վկան՝ խոր ու վաւերական ապրումի: Այս պարագան կը յանձնեմ ձեր բացառիկ ուշադրութեան: Քերթուածներ ունի ան որոնք ապրուեցան իրենց երկունքէն առաջ. նուաճուեցան տեսողութեան ցանցէն բայց չեղան հարազատ, ինչպէս անոնց սկզբնատիպ տեսիլքը, ասքը, ուրուալոյսը անոր ջիղերուն վրայ: Տարիներու վերադարձ մը, անձանձիր աշխատանք մը զանոնք չզադրեցան յղկելէ, «բանելէ», մինչեւ որ երկու, երեք, հինգ, երբեմն տասը տարի վերջը տիրապետուեցան ու գտան իրենց վերջին կադապարը: Իրենց verbeին* ուժովը, կամ երեւակայութեան յորդումովը քերթուած հեղեղող մարդոց դէմ զուսպ, չարչարանքով յղացուած, եւ անպայման հոգեվարքի մը իբր փաստ ծառայող այս քերթողութիւնը, գեղեցիկ հրաշքով մը կը փրկուի հակադիր վտանգէն որ ռումանթիզմն է այս անգամ: Կրնամ յայտարարել թէ գրեթէ մեր միակ քերթողն է անիկա որուն գործէն հիմնովին բացակայի ռումանթիզմը: Ու կ'աւելցնեմ, այս զգուշութիւնը գրական հանգանակի յօդուած մը չէ իր մօտ. վասնզի իրապաշտ կամ պառնասեան որակուած քերթողութեան ալ չէ ծառայած անիկա. ինչպէս ըրին ուրիշներ լուսիններով, դեփիւններով դարպասելէ յետոյ «մուսաներուն»: Հրաշալի Յարութիւնին մէջ տարտղնուած է մարդ մը:

գ) — Մարդը: Է այս բառը մինչեւ ծայրը եղունգներուն: Պայծառ է տարազը իմ մտքիս մէջ, վասնզի մեր արուեստագէտներուն մեծ մասին հետ անձնական չփոխմա բաւարար լոյս է բերած այս վարկածին: Մեր քերթողները եւ իրենց գործը քիչ անգամ աղերս ունին իրարու հետ: Չեմ յուզեր հարցին գեղազիտական սկզբունքները: Բարատոքսը**, որ-

(*) — Բանիմ:

(**) — Անհաւատալի, անօրինակ կարծիք:

քան ալ սիրուն, միշտ ճշմարտութիւնը չըսաւ: Երբ, օրինակի մը համար, Ռուբէն Որբերեան կ'ողբայ կորուստը իր գիւղին, լռելեայն գիտէ թէ ոչ մէկ գինով պիտի յօժարէր դառնալ անոր համեստ տնակներուն: Վասնզի քաղքենի մեծ տուններուն հանգստաւէտ պայմանները տիրական են անոր մէջ: Ու այս օրինակը տարածեցէք ուրիշներու վրայ: Գործին ու գործաւորին այս հակադրութիւնը նոր օրերու տխուր մէկ քաթեթիկն* է: Ի սկզբանէ մենք տրամադրուած էինք տարակոյսով ընդունելու քերթողական բոլոր խանդավառութիւնները: Գրականութի՛ւն, պիտի ըսէ Վէրլէն, դառն տրտմութեամբ մը խարանուած՝ հրապարակը ողողող նոյնիսկ մեծանուն աշխատաւորներու գործին դէմ: Հոնտորութի՛ւն, պիտի կրկնէ անիկա. իր շրջանի քերթողութիւնը պիտակելու իր intuitif** դատաստաններուն մէջէն:

Ու բախտ է ինծի համար հանդիպան ընել գործի մը որ պայմանաւոր ըլլայ միայն ու միայն գործաւորով: Հրաշալի Յարութիւնը, առաջին անգամ մեզի կու տայ այդ գործաւորը, հարազատ, մթին, բայց մարդ: Աւելին՝ այդ կենդանիին հոգին յարգարող մեծ ու պզտիկ բոլոր յիմարութիւնները, յոյզերը, երկբայումները, ըղձաւորումները, կեանքի պողոտաներուն ձգուած, լքուած, կոխկռտուած կենդանիի բոլոր եղերականութիւնը, զոր մեր քաղաքակրթութիւնը կը ջանայ գեղեցիկ բառերով փոխակերպել: Աւելի՛ մեր իսկ պայմաններով, ցեղային իմաստութեամբ մեր արուեստի սպասաւորներուն համար մեր խելապատակէն ստեղծուած խուլ, անողոք նահատակութեան մը կիսամշուշը որ անոր ամբողջ սերունդը ստուերներու դժնդակ պայքարի մը տակ ապրեցուց: Տակաւին պէտք է շեշտեմ հոս տառապագին այն մեկուսացումը, տարագրումը, խեցեւիճական դատապարտումը որոնցմով կղզիացուցին, հե-

(*) — Սրտառուչ, հոգեյոյզ իրողութիւն:

(**) — Մտատեսական, ներգիտակցական, պայծառատեսական:

ռացուցին, նախատեսցին անոր գործը, բռնի ուրացման մը տակ պահելով քառորդ դարէ աւելի տեւողութեան մը վրայ անոր արժանաւոր, իրական, ապրուած գեղեցկութիւնը:

Ասոնք պատճառներ են որ իր մէջ դառնութեան, ներամփոփ ցաւի, անմխիթար մեղամաղձութեան զօրաւոր ոլորտ մը հետզհետէ աշխարհ մը դառնայ ու պարուրէ անձէն յետոյ անոր գործը եւս: Ծի՞ղ: Բողո՞ք: Թատերական ու մարգարէական լուտա՞նք: Վերջապէս պարսա՞ւր՝ իր ժամանակին քիթին ու բերնին.— որոնք պատահելի են բոլոր ուրացուածներու գործին: Ընդհակառակը: Աստուածային, հայկական բարութիւն մը բոցէ շապիկի մը պէս կը պաշտպանէ այդ գործը նախանձէն, գռեհիկ ու հաստ կիրքերէն որոնց արտայայտումին, պանծացումին համար խստապահանջ չեղան մեր ուրիշ արուեստագէտներ: (Դիտեցիք հարկաւ որ գործն ու գործաւորը յաճախ կը փոխարինեմ իրարմով. ասիկա անգիտակից աշխատանք մըն է մտքիս համար, վասնզի քերթողն է ան. որուն մէջ չունի տող մը ուր անոր կեանքին մէկ ծուէնը չըլլար ծրարուած): Դարձեալ, նոյն վերապահութիւնը՝ զգացական աշխարհի հզօրագոյն հարցերուն դէմ ալ: Այս հոգեոլորտը ի վերջոյ անցած է նաեւ իրմով զգալի բայց իրմէ դուրս շարժուն ու իմացական ալ տիեզերքին՝ նոր բառով մը իր cosmosին: Այս իսկ զգայնութեամբ հինը անոր վրձինին տակ կը վերածուի նկարի մը, տարօրէն փափուկ, նուաղուն, հէքիաթ ու իրական նոյնատեն, որուն մէջ հեղ մը կը նայիս ու կը բաւէ ատիկա որ օժուիս աստուածային իսկութեամբը անոր: Բայց այս երեւոյթին բացառիկ փաստը կու գայ միւս զգացումէն, զինքը մինչեւ աղիքները խռովող անորակելի ցաւէն որ արդիւնքն է մեր հսկայ աղէտին: Ասոր յառաջացուցած կսկի՞ծը: Անշուշտ որ հոյակապ տողեր թելադրած է ուրիշ, իրեն չափ օժտուած ջիղերու: Բայց ոչ ոքի մօտ՝ այն պարզ, խոր, սրտառուչ քաղցրութիւնը որ շփոթուի ի վերջոյ մեր ցեղային նկարագրին: Մեր աշխարհիկ ու սրբազան երաժշտութիւնը, մեր վկայագրական մատենագրութիւնը, մեր եկեղեցական մաղթանքները, մեր աղօթքներն, ու մեր աշուղներուն մօտ մեր տրամութիւնը ուրիշ թոն ունին արդեօք:

Ու վերջացնելու համար այս բարակրաֆը՝ — ուրիշ է ցաւն ալ այս մարդուն որ ապրեցաւ անաղմուկ ու իր լացը պահեց իրեն:

*

* *

Հրաշալի Յարութիւնը մեզի կը թելադրէ ուրիշ ալ բաներ:
Անիկա մեր գրականութեան մէջ միակ հատորն է ուր իմացապաշտ յուզականութիւն մը փորձուէր յաջողութեամբ: Վահան Թէքէեան մեր այն քերթողն է որ յաւակնած ըլլայ միտքի պահերը քերթողօրէն առարկայելու: Մտածումը կմախքն է այդ գործին, ոչ անշուշտ բառը տանելով իր փիլիսոփայական քիչ մը չոր խստութեան: Այլ միւս, փոքր ձեւը, զոր կը ճարենք միտքէն աւելի զգայարաններով: Ասոնց միջոցով մեր շրջապատէն վերցուած մա'ս մը, կամ մեր ներսէն, մեր զրկանքէն, պատրանքէն, վիշտէն կաթած պուտ մը սեւ ձիւթ, որոնք կը փոխակերպուին քանի մը տուննոց կառոյցի մը եւ որոնց վերջին տողին՝ աղքատիկ, հացակարօտ տղոց դէմքին ու նայուածքին պէս տժգոյն կը բուսնի ծաղիկը մտածումին. անակնկալ որքան դիպող, եւ որոնց հանդիպումը զլացուեցաւ մեզի մեր ամբողջ գրականութեան մէջ: Բոլոր իր քերթուածները ծուէն մը բան ունին այս իսկութենէն, խմորէն: Չեմ ծանրանար յուզումի՞ն ու մտածումին դասական վէճին: Կը բաւականանամ դիտել տալով որ Վահան Թէքէեան ծանօթ է վտանգին որ կը սպասէ քնարականութեան երբ ատիկա կը փորձէ խորքէն ու չունչէն բաւական ընդարձակ մտածողութիւն մը, մտածողական դրութիւն մը պարտկել—: (Յիշել Սիւլլի Բրիւտոմի վրիպանքը, ռոմանթիքներու մեծակառոյց հայեցողութիւնները որոնք անընթեռնելի էին հեղինակներէ): Միւս

կողմէն, քերթուածին խորը պուտ մը իմաստ ծրարելու ազնիւ առաջադրութիւնը խոր ու խռովիչ ձեւով մը ընդարձակած է ասոր պարունակը: Կ'արժէ այս պարագան հաստատել Կիւլեօի, Նիչէի հատուկտոր քերթուածներուն մէջ:

Այդ հատորէն դարձեալ կը զատեմ արուեստագէտը, ուրիշ բառով մը՝ ֆերթողիմ նոր անձը որ կը շահի երբ համեմատուի մեր իսկական, օժտուած ստեղծողներուն հետ:

Այսպէս.

ա) — Եթէ չունի անիկա մեր ռումանթիֆմերուն անմիջական հաղորդականութիւնը, չափազանցուած ու նուաճող թախիժը, ու անոնց փչուած անձնաւորութեան եղերական յանկերգը, իր տաղարանին մէջ, վար չի մնար անոնցմէ՝ սիրոյ, տրտմութեան, վայելքի, հաճոյքի, աշխարհիկ համերուն այլապէս բարդ հանդիսանքին դէմ իր ժուժկալ, արդար, մարդկայնօրէն թրթռուն ջիղերուն խոր ընկալչութեամբը, ներանձն, ազնուական յուզումին պարզ անվերածելի իրականութեամբը, պրիսմակովը իր նայուածքին: Ոչ Դուրեան, ոչ Պէշիկթաշլեան չըսին այդ բաներուն վրայ իրմէն աւելի խիտ, խոր, արձագանգուն տողեր:

բ) — Անբաղդատելի է անիկա տաղաչափներու ստուար կարաւանին որ կը գրաւէ միջոցը ընդմէջ Դուրեանին ու Վարուժանին:

գ) — Անիկա առանց տոյժի, կը դիմաւորէ մերձեցում մը մեր ազգայնական մեծ քերթողներուն, Վարուժանի եւ Սիամանթոյի հետ: Անշուշտ չունի այդ երկուքին հեւթուիչ երեւակայութիւնը, ամբոխները յուզելու *verbe* եւ հռետորութիւն, վերջապէս անոնց պատկերացման թափը, փարթամութիւնը: Բայց անոնց չափ, թերեւս աւելի ալ՝ հայ ցաւին ողբերգութեան հասկացողութիւնը: Առաջինները անխառն, *impulsif** իրենց երգին կը հաւատան

(*) — Իմֆնամուդ, դիւրագրգիռ:

միամիտ որքան պատրանայեղձ: Վահան Թէքէեան իր ողբին մէջ մտածման խմոր մըն ալ կը խառնէ: Ու ասիկա յատկանիշ մըն է իր գիծէն մարդոց մօտ: Զարդերէն յետոյ (95-96) յուսաբեկ բայց գետին չինկած այդ հոգեկան սըր-բուծի՛ւնը որուն այնքան պէտք ունինք մանաւանդ սա մեր օրերուն:

*
* *

Հետաքրքրական է հետեւիլ բանաստեղծի մը յեղաշրջու-մին:

«Հոգեր»ը ստորագրող երիտասարդէն ի՞նչ է մնացած Հը-րաշալի Յարութիւն կոչուած կաթողիկէին ճարտարապետին մօտ:

Պատասխանը նոր թուում մը կը թելադրէ ուր մուտք ու-նենային Քնարերգութեան յաւիտեանական տարրերը, Ազնուականութիւնը անոր քանի մը զգայարաններուն, Վիշտին ու Սիրտին, Մահը ու իր Ստուերը, անոր հանդէպ Արիութիւն ինչպէս Վերապահութիւն՝ կեանքին ալ դէմը, ու Մղձաւանջը որ կոխկռտեց անոր ցեղը:

Չեմ կրնար լայննալ այս բարակրաֆներուն պարփակած շատ մը գաղափարները դէպի: Պիտի բաւականանամ ամ-փոփ նշմարներով:

ա) — Քնարերգութեան յաւիտեանական տարրերը: Ինչ որ գիտենք ազգերու քնարական բխումներէն, — մահ, սէր, թախիծ, երազ, բնութիւն, բնակուած երկինք, քաղաքնե-րուն դժոխքը, գիւղերու միամտութիւն, թարմութիւն ու ծերութիւն, տարիք ու զրկանք, ցեղի մը պատկանելու ան-սրբազրելի դժբախտութիւն, քիչ մը անասուն, քիչ մը հը-րեշտակ, խեղճուկ կտոր մը միս, որուն սիրտ անունն ենք

տուած, ու շատ մը թուիչք: Տուած եղայ ազգերու բանաստեղծութեանց հիմնական ստեղները: Այս ամէնը զուսպ արուեստի մը զանակներուն ընդմէջէն, հաստատելի են իր գիրքին մէջ:

բ) — Ազնուականութիւն՝

1. — աչքի

Գրաքննութեան իբր արդիւնք մեր քնարերգութեան մէջ անտեղի գերաճումի մը գացած է նկարող տարրը: Առանց իր խոր հոգիին Միսաք Մեծարենց մօտիկը պիտի կենար 900-ի ժանեկապաշտներուն: Բախտ է որ այս թերութիւնը Վահան Թէքէեանի մօտ իջնայ իր նուազագոյն չափին: Անոր արտաքին աշխարհին վրայ կ'իյնայ սգաւոր իր ոսպնեակը. հինաւուրց, ազնուական ժուժկալութեամբ մը: Այս համեստութիւնը, քիչութիւնը գոյնի՝ այս թախծոտ ու դէպի ներս ճոխացող աղքատութիւնը որով տեսարանները, տեսիլքները, պատկերները կը դադրին տպաւորելէ անարժանները, ածականի, այսինքն ներկի հանդէպ այս խրտչուն կեցուածքը, այդ օրերուն հազուադէպ, թերեւս իր կողմէն առաջին արգելքներէն մէկը անոր համբաւին տարածուելուն: Ի վերջոյ շրջանի մը ճաշակը մեծերուն, զարտուղիներուն քով չէ որ կը կեդրոնանայ: Զայն կը շինեն, կը տարածեն իրենց վայելումին համար ուրիշներ, միջակներ այս անգամ ու կ'անցնին հպարտ, արհամարհոտ մեծաւոր արուեստագէտին քովէն, մինչեւ որ մոռացումը գայ սրբագրելու այդ գայթակղութիւնները. երբեմն ալ դարմանելու իր աւերը: Աչքի անոր ազնուականութիւնը պատճառ է որ պայմանադրական ոչ մէկ մշուշ, երանգապնակ, կամ թէքնիկ հանդուրժէ ընդմէջ իր ու արտաքին աշխարհին:

2. — գգացական տարրի

Հակառակ խորագոյն վիշտերու, պատրանքներու, նախատինքներու որոնք չեն պակսիր մեր տաղանդներուն, ու հակառակ յատկապէս իրեն համար մեր յարգարած մեր անորակելի անարդարութեան, անոր գործին մէջ դժուար է հանդիպիլ ուժգին, աղմկոտ ճիչերու: Ոչ մէկ կիրք՝ որ իր թանճրութեամբը խռովէր մեզ. ոչ մէկ տարերային յուզում որ ձգտէր մեզ տպաւորել, տրորել ֆիզիք զգայութիւններ-

րով: Փոխարէն՝ այս ամէնը, այսինքն զգացական տարրը, փաթթուած մեղմութեան մշուշով մը: Յուզո՛ւմ՝ որ նուաղ ու ազնուական բոյրի մը պէս երկարի մեր հոգիին խորը, տարրալուծուի ու քնանայ, վերածուելով վրդովիչ ու տըրտում հաճոյքի: Մարդ չի կրնար առանց մեղմ արցունքի հետեւիլ այս շըսուած, այսինքն՝ այնքան զգուշաւոր չեշտերով մըմնջուած ողբին, որ ճակատագիրն է բանաստեղծին: Մինչ ուրիշներ այդ զգայնութիւնները պիտի պոռան, մեր ջիղերը թունդ հանելու կամ բռնի մեր արցունքը կորզելու մտածումով, ազնուական այս բանաստեղծը կարելին պիտի ընէ որ մարդիկ քիչ տեսնեն խարոյկը իր հոգիին: Ուշագրաւ է որ այս ժուժկալութիւնը մնայ դարձեալ տիրական հոն ուր ամէնէն արդի արուեստագէտը կ'ախորժի ինքզինքը ցուցադրելէ: Իր օրերուն մարմնական զգայութիւններու մէջ ու առջեւ ուժգնութիւնը օրակարգի մաս կը կազմէր: Մարդիկ կ'երգէին միսը, սերմը, յանդգնութեան վայելքէն աւելի, դարավերջի զգայութիւններու իրենց ծարաւը արժեւորել ցանկալով: Մեծ ու պզտիկ տոփերգակներու մօտ միսի զգայութեանց յաճախանքին դէմ Վահան Թէքեան կը պահէ շիկնոտ ու ազնուական կեցուածք: Ու անիկա միակ ներկայացուցիչը կը նկատեմ այս ազնուականութեան:

3. — վիշտի

Անհրաժեշտ է այս բարակրաֆը. վասնզի Հրաշալի Յարութիւնը տխուր գիրք մը չէ միայն ուր բանաստեղծը իր յուսախաբութեանց հաշիւը մաքրել աշխատէր. հոծ ու հզօր պարսաւով մը աղաղակելով իր խօսքը իր ժամանակին երեսին: Այդ գիրքը նոյն ատեն տաճար մըն է մեղմ ու սրտառուչ ձայներով թրթուման սպասող: Ու կը կրէ երանգը ցեղային մեր տրտմութեան: Խորունկ, անսրբագրելի, մեր անգթութեամբը խորանարդուած այդ թախիժը զոր կը բարդեն իր ջիղերուն, իրեն չափ, իր խառնուածքին չափ, չըջանը, իր շուրջը կազմակերպուած ստորին գուլպարը, եւ որ սակայն հրաշքով մը չ'ելլեր զեղումի, ինչպէս պիտի ընէր ժամանակակից Պարթեւեանը. ամէն տեղ ու առիթ չահագործելով, իր պարսաւը [ործնելու] համար ամբողջ աշ-

խարհին: Այս ազնուականութիւնը թախիծին ալ մէջը մեզ կը տպաւորէ հակադիր ուժգնութեամբ, երբ փոխանակ քերթուածը կարդալու, բառ բառ քակել աշխատինք: Այն ատեն միայն պիտի զմայլինք այդ հազուադէպ պատկերին առջեւ ուր խոցուած, բայց «մահու չափ» խոցուած սիրտ մը, մահւան հովին դէմ իր թեւերը բաց ըրած, սպասէր արիութեամբ մը իր իսկ ձեռքով կործանուած արքայութեան մը: Վասնզի մենք ենք հեղինակը մեր յաջողութեան կամ ձախողանքին: Փափուկ, համակրելի, ազնուական այս թախիծը, իր ժուժկալ dimensionներովը՝ բայց խոր խտութեամբը վեր կը մնայ մեր ումանթիքներուն հերարձակ ջայլէն: Իրեն նման ունինք Մեծարենցը միայն որ այդքան «ամօթխածօրէն» ամէցած ըլլայ իր ցաւէն ու վախով յարդարած իր սիրտը, իբրեւ խորան վիշտի սեւ աղաւնիին:

գ) — Մահը եւ իր ստուերը: Զգայնութի՞ւն մըն է միւսներուն նման թէ խառնուածքի հեղում մը՝ մեր ապրումին վերայ: Կարդացէք Դուրեանին ու Պէշիկթաշլեանին զգայութիւնները անկէ: Յետոյ կարդացէք մէկ երկու քերթուածները Միսաք Մեծարենցի: Զեր տպաւորութիւնը լաւագոյն կերպով պիտի պատկերէ մարդէ մարդ երանգը այդ մեծ երեւոյթին որմէ վախնալու ստորնութիւնը դեռ չենք սրբազրած: Վահան Թէքէեանի գիրքին մէջ բազմաթիւ են «մահուան տաղերը» (Հրաշալի Յարութիւնէն ետքն ալ անիկա չէ մոռցած վերնագիրը ու գրած բազմաթիւ ուրիշներ): Մէկ ու միակ այդ երեւոյթին դէմ կեցուածքի այս բազմութիւնը փաստ մըն է բանաստեղծին խորութեան: Մարդեր կան որ ինչպէս իրենց տաղանդը, իրենց ջիղերը, այնպէս ալ իրենց հետ կը բերեն սա մասնակի զգայարանքը որուն համեմատ մեծագոյն վայելքին իսկ ծոցէն անոր կորուստին ցաւը գերազանց կը զգան: Ծնունդի՞ հարց.

(*) — Ծաւալներովը:

դժբախտութեանց մուրճ. վարժութիւն: Բառեր են ասոնք: Ու ասոնց տակ իրական է մարդը որ քայլ պիտի չառնէ առանց մահուան ստուերին վրայ կոխելու: Վահան Թէքէեանի այդ քերթուածներուն մէջէն կ'անցնի թեւթափը մահուան մեծ թռչունին, որ, գորշ ճնճղուկ՝ դեռ մեր մանկութեան օրերուն մեր գլխուն վերեւ, մեզ պիտի հետեւի, տեսանելի ու մօտիկ ու մեր տարիքին թոյնը կաթ կաթ առնելով հետզհետէ պիտի վերածուի [դառնաթեւ] ուրուրին, իջնելու համար մեր դիակին վայելքին: Տասնէն մինչեւ քառասուն, յիսուն անջրպե՞տը: Ատիկա մենք կը հարցնենք ճերմակ մազերէն ետքը: «Մահուան որդեգիրները» զայն կ'ապրին շատ կանուխէն: Ու եզական հրապոյրը սա մատաղ կարօտին դէպի մահը. նոյնիսկ «Հոգեք»ուն էջերէն: Հրաշալի Յարութիւնը գերծ է սակայն լայն յափշտակութիւններէն որոնք ռոմանթիքներու մօտ հոետորական թեմաներ տուին առողջ, կայտառ ու ապրող (vivant) տիպարներու: Հոս, այդ զգայութիւնը (մահուան) տեսակ մը հաշտութեան ծիածան է ընդմէջ «կեանքի դժոխքին» ու «պարապիմ խորունկ խաղաղութեան»: Մարդ գրեթէ կազդուրուած կ'ելլէ դուրս այդ մռայլ աշխարհէն. ինչպէս պիտի զգար ինքզինքը հաւանաբար գեղանի տիկին մը (եթէ խելք ունենար) երբ բռնելով իր մանկան ձեռքէն օրը անգամ մը այցի ելլէր իր դղեակին մօտիկ դարերէ ի վեր քնացող ոսկորներուն որոնք իր պապերունը եղան: Վահան Թէքէեան ունեցած է այդ խելքը: Ու իր մահը վայելք մըն է, իր միջատներովը մատչելի՝ երբ տրտմութիւնը անձրեւի ամպին նման թանձրանայ ու ցածնայ դէպի գաւառները անոր անպարագիծ սիրտին ու խեղդել սպառնայ: Այդ հակազդեցութեամբ անիկա դիմացած է անոր հրապոյրին, դիւթքին: Հաշի՛շը՝ զոր ճարտարութեամբ, խնայողաբար գործածել հարկ է, քանի որ հայ բանաստեղծին կեանքը նոր չէ որ «ովասիւնք» միայն պիտի ունենայ արեւի: Դուրեանը ըսեր էր ատիկա կէս դար առաջ: Մնացածը: — Անապատ:

դ) — Արիութիւն ու վերապահութիւն: Անշուշտ գատ միութիւն մը չեն բերեր այս բառերը իրենք իրենց մէջ: Լրացուցիչներն են ասոնք մահուան հանդէպ իր կեցուածքին:

Վասնզի չի բաւեր ցաւը արհամարհել կամ մահը դարպասել. ատիկա կ'ընեն շատեր: Բացառիկը՝ այդ արհամարհանքը չվերածելն է նոր պաշտամունքի ու դարպասը՝ չըջուած պչրանքի: Էականը՝ վիշտին դէմ poseur* մը ըլլալու վտանգէն ինքզինքը պաշտպանել գիտնալն է: Ասիկա միեակ քերթողներու տրուած առանձնաշնորհում մը չէ անշուշտ: Հոգեկան արիութիւնը մեր օրերուն սկսած է տարօրէն ցանցառիլ: Մարդիկ ապրելու համար իսկ խուժան կ'ուզեն իրենց շուրջը: Ու գրելու ատեն իրենցմէ աւելի ուրիշին, ընթերցողին կը խորհին: Արի այս մեծաւորութիւնը դիւրաւ կ'առաջնորդէ զայն վերապահութեան: Իր տողին սեղմութիւնը արդիւնք չէ միայն գրական դաւանանքի, այլ թերեւս հետեւանքը՝ խրտչուն, մեր արձակ աշխարհին անընտել, ու իր խոռոչին մէջ ինքզինքը պարփակելու հարկադրուած իր հոգիին: Մարդն է ան որ բզկտող տուամենորը, կեանք մը փշուր փշուր տապալող ողբերգութիւնները (որոնք ուրիշներու մօտ հատորներու նիւթ պիտի տային), կը սեղմէ ու կը սեղմէ, անոնց անդնդային խորութիւնը ու անպարագիծ լայնքը 6-7 տուննոց քերթուածի մը մէջ սեւեռելու: «Կռուի Երթը» քսան տարուան պայքար, պատրանք, երազ, արիւն ու ելեւէջ կը պարունակէ, եթէ նկատի չառնեմ մեր անցեալը իջնող իր մէկ երակն ալ որով տեւողութիւնը ակնթարթի մը գիծով կ'ընդարձակուի այնքան ճարտար նահանջով մը դէպի վարերը մեր հոգիին:

Ե) — Մղձաւանջը մեր ցեղին: Ինչ որ ըսած եմ մեր նոր ողբերգութեան մասին, զանազան հեղինակներու առիթով, զանց կ'ընեմ կրկնելէ: Իբրեւ հայ բանաստեղծ, անիկա ամսն չէր կրնար մնալ անկէ: Տարբերութիւն մը սակայն, որ կ'արդարացնէ այս բարակրաֆը. իր զգայարանքներուն ազնուականութեան մասին մատնանշուած բոլոր առաւել-

(*) — Զեւացող, կեղծող:

լուծիւնները կը միջամտեն հոս ալ, ընելու համար անոր երգը ամէնէն քիչ աղմկոտը, ամէնէն շատ խորը, ծաւալունը դէպի մեր ներսը: Կը կրկնեմ հոս սակայն ինչ որ ըսեր եմ քսան տարի առաջ. «Գեղօն սօսեաց անտառին»ը քերթուած մըն է որ մինակը կարող է հակակշռել յեղափոխաշունչ մեր նոր քերթողութիւնը: Դարձեալ ութը տասը հնչեակները, աւանդավէպները, փոքր իրենց ծաւալին մէջ, մեր հսկայ ցաւին մանրանկար խորհուրդը կը սեւեռեն անհաւասարելի կատարելութեամբ մը: Ի՞նչ հարկ վրդովուիլ ամբոխին սառնութենէն: Քերթուածներ կան որ մտիկ կ'ըլլուին, չդիմանալով ընթերցման: Ուրիշներ՝ որոնք արտասանութեան ատեն անփառունակ, իրենց լիութիւնը, շնորհը, կախարդութիւնը կը գտնեն գլուխ գլխի հանդիպման պահերուն:

Ահա այն քանի մը գլխաւոր գիծերը որոնց առջեւ ուշադրութեան կանչեցի ձեր միտքը: «Հրաշալի Յարութիւն»ը, տպուած 914-ին, անցաւ աննշմար մեր քննադատութեան այնքան բարեհաճ, ամենատես աչքերէն: Միայն քաղաքական վերիվայրումը չէ պատճառ այդ մոռացումին, ուրացումին: Նոյն շրջանին լոյս տեսնող ուրիշ հատորիկներ, հակառակ իրենց ողորմելի, խորապէս անփառունակ արժէքին (օրինակի մը համար Ա. Իսահակեանի Արուլալա Մահարին) անըմբռնելի փառքի կանչուեցան, ճարտար մունետիկներու ճարտար միջոցներով: Անցան խռովքի տարիները: Ու Հրաշալի Յարութիւնին նման կոթող մը դեռ չէ ազատած զինքը պարածածկող անտարբերութեան աղբէն:

Այսպէս է ճակատագիրը կարգ մը մարդոց ու գիրքերու:

Գ

գ) Կէս գիշերէն մինչեւ արշալոյս
Այս հատորը տպուած է 918-ի վախճանին:
Թելադրա՞նքը անոր վերնագրին.
—Պա՛րզ:

Ակնարկ մը քերթուածներուն տարեթիւերուն, ու կը լուսաւորուի վերնագիրը:

Հատորը կը բաժնուի երկու որոշ մասի: Անոր երկրորդին մէջ Հրաշալի Յարութիւնին մեծատաղանդ աշխատաւորը պիտի շարունակէ իր զգայնութեան մեծ լարերը նետել կեանքի ջուրերուն եւ ընել որսը իր մարգրիտներուն: Բայց այդ վերլուծումը՝ աւելի ուշ:

Գիրքին առաջին մասին մէջ բանաստեղծը տարուած է ողբերգութեամբը աշխարհին որ կը կոչուի Հայաստան: Այդ երկիրը նոր չէ որ կ'անցնի «սուրեմ ու կրակեմ»: Ու անոր բնիկները դարէ դար քանի մը անգամներով կրկնուող այդ Աղետքը նոր չէ որ կը դարձնեն նիւթ «ողորոյ» եւ տրտմութեան սաղմոսարան: Բայց «Եդեսիոյ ջարդ»ը ողբերգող Ներսէս Շնորհալիին ու 915-ի Հայաստանը սգացող Վահան Թէքէեանին մէջ ահա թէ ինչ կայ աննմանակ:

Դարէ մը ասդին, նոր գաղափարներու գրոհին տակ, մեր միտքը սորվեցաւ բաներ որոնք թերեւս լաւ կ'ընէր անգիտելով: Վասնզի մեր մտաւորականը մահէն աւելի զայրացած է թուրքին դէմ, այս բառը առնելով իր ասիական ամբողջ տիղմին մէջ: Վասնզի աղէտէն առաջ նոր գաղափարներու շրջմոլիկ լոյսերուն ներքեւ հաւատաց անուշ, մեզմէ անհաս բաներու, — ազատութեան, արդարութեան, մարդկային իրաւունքներու պատգամներուն: Ու անտեսեց միւս տարրը, տեւողութեան յղացքի մը տակ՝ բարբարոսութիւնը թուրքին, հակասելով այս կերպով մեր պատմութեան կանխող սերունդներուն որոնք մահուան դէմ զայրանալը մեղք կը համարէին: Մենք միամիտ եղանք արեւմուտք ենթադրելու ժողովուրդի մը մէջ որուն մտաւորականը, բայց դարավերջիկը, ջարդարար մըն է, պարզ ու ամփոփ: 915-ի աղէտին կազմակերպիչները համալսարանական երիտասարդներ են, գրագէտներ, բժիշկներ, փաստաբաններ, գիտութեան մարդեր: Թուրք ամբողջ ընտրանին: Ու հոս է Մեր յուզումին բացառիկ եղբրականութիւնը: Կ'ըսեմ «Մեր» վասնզի մեր դժնդակ ճակատագիրը ուզեց, տակաւին այսօր ալ կ'ուզէ որ սա այնքան պարզ ճշմարտութիւնը մեր մէջ մեկնուի այնքան ընդվզեցուցիչ լրբութեամբ մը,

մեր իսկ ընտրանիին մէկ մասէն: Ո՛վ մեր անպարփակ միամըտութիւնը: Ուրիշ դարերու աղէտներուն դէմ մեր պատմիչները չըրին այս անաստուած հերձուածը: Ու թուրքին գործադրածը կը գերազանցէ մեր երկրին վրայ կատարուած բոլոր կանխագոյն նախճիրները, քանի որ կիրքին կամ յաղթանակին գինովութեան տեղ, որոնք ի վերջոյ կրնան յոգնիլ, միտքն է որ գործեց: Այսօր մեր պատմութեան երկհազարամեակը պատուուած է մեր երկրէն: Մեր աւերակներն իսկ օդը կը հանուին, կը փոշիացուին որպէսզի անվերադարձ տաճկընայ այն հողը որուն վրայ հասակ էր առեր, գեղեցկացեր մեր արի, բայց դժբախտ ժողովուրդը: Անհուն է այս բարակրաֆը, տղա՛ք, ու մեր սիրտը տարօրէն փո՛քը՝ անոր ընդգրկումին: ... Հասկնալի է որ, Նախճիրին տարիներուն, Վահան Թէքէեան ինչ խոր բզկտումով հետեւեցաւ իր ժողովուրդին հոգեվարքին: Եղեռնի այդ կէս գիշե՛րը: Որուն ըմբռնումը հետզհետէ կը դժուարանայ մեր նորերէն: Որուն դատումը մեզ փոխանակ իրարու շաղուելու, պատրուակ է դարձեր իրար հալածելու:

Քիչ, բայց վճռական բառերով անիկա գտած ու ըսած է ինչ որ մեր պատմութեան ոգեղէն տարրերէն դեռ այսօր կը թաւալի մեր արեան կայլակներուն հետ. —այն քաղցր, վիրաւոր, շիկնոտ յուզումը որ կը դողայ, իր իսկ դիւրաբեկութեանը հաշուոյն ու կը վարանի հաւատալ: Զորս ահաւոր տարիներ մենք կը սպասէինք Յարութեան Շունչին: Այդ ու նման քանի մը քերթուածներ եղան *motif** ուր աստուածային անոր մատները գետեղեցին հսկայ խարոյկը մեր ողջակիզումին, վրան՝ ջախջախուած բայց արիւնէն իսկ չխաւարած երիզները մեր յոյսին, վրան Աստղապսակը Հայոց Տիկինին, այս անգամ հեռու՝ դասական պատկերէն, չղթայլած աւերակներու վրայ, ու իր զաւակներուն կարօտովը

(*) — Հիմներգը:

լալագին: Ան ի՞նչ վճիտ ու անմոռանալի տեսիլ է երբ վերանորոգուած, հարուստ, աղուոր այդ հողերուն վրայ, հունձքի գիշեր մը, զաւկըներուն նիրհին վրայ գորոված իր պահուն երկինքին բոլոր աստղերը պսակ կը հիւսեն յարուցեալ տիկինին գլխուն...: Այսպէս կը զգայինք մենք որ պատերազմը ուսերնուս վրայ ունեցանք...: Ու տակաւին ուրիշ քերթուածներ:

Եթէ բաղդատուին այդ քերթուածները նախապատերազմական սերունդին քիչ մը հռետոր, քիչ մը աւելի փարթամ, մեծաղաղակ ու յոխորտօրէն ինքնավստահ քերթողութեան հետ, մեզի պիտի թուին քիչ, յուսակտուր: Բայց ուրիշ չէր իրականութիւնը: Մենք լքուեցանք Ղեւտացիներէն ու Սամարացիներէն: Բայց դժնդակը հոն է որ լքուեցանք մեզմէ՛: Երբ բաղդատուի այս քերթողութիւնը Հայաստանի մէջ այսօր փորձուած ռատիոյի, տալիւի, գունճայի, նորոգող ու սոցիալ կառուցումի ու մանաւանդ ատելավառ ու եղբայրասպան ուրացումի կարմիր համանուագին, մեր նոր սերունդին համար պիտի թուի անժամանակ, անիրաւ, րոմանթիք, հինցած, մանկական: Բայց գրականութեան ինչպէս կիներու աշխարհին մէջ, նորոյթները կ'անցնին ինչպէս եկած էին ու կը մնայ այն ինչ որ ժամանակ մը, զգալու լայն դրութիւն մը մինչեւ այդ շրջանը չփորձուած ձեւով մը կը պատկերէ, կը սեւեռէ: Վահան Թէքէեան Կէս Գիշերէն [Մինչեւ] Արշալոյսին մէջ պատմեց իր սերունդին զգայնութիւնը ազգային հարցին մասին եւ իբր այդ ազգայնական մասը գիրքին կը մնայ շահեկան փաստ մը այդ օրերէն:

Գիրքին երկրորդ մասը մեզի կը դարձնէ հարազատ բանաստեղծը, որուն կարգ մը ստորագելիները անցան վերլուծումէ Հրաշալի Յարութիւնին առիթով: Հոն կը գտնենք չիւղ մը կանանչով անապատ մը ծաղկեւորող, պուտիկ մը ժպիտով դժոխք մը դառնութիւն քաղցրացնող արուեստագէտը: «Ես երազիս տիրեցի, սպաննելով անիկա» պարզ խորհրդապաշտութիւն մը չի պատմեր միայն, այլ մեր օրերու մարդուն ողբերգութիւնը, այն մարդուն որ կը սպաննէ սիրով:

Իմացապաշտ քանաստեղծը: Այսպէս կ'անուանեմ զինքը, ազատելու համար ձրի ու սխալ համբաւէ մը որ ընդհանրացած է մեր մէջ իր քերթողութիւնը որակելու ձգտումով: Վահան Թէքէեան խորհրդապաշտ բանաստեղծ մը չէ բառին եւրոպական առումով: Այս վարկածը ծնունդ մըն է իր ոտանաւորին արտակարգ խտութեան ու իմաստի տարրերէ արտակարգ հարստութեան: Խորհրդապաշտութիւնը շատ ընդարձակ վարդապետութիւն մըն է ուր կը գետեղուին իրարու աննման շատ մը քերթողականներ: Ատոնցմէ մէկն ալ իմաստի հանդէպ համակրանքն է, որ պառնասեան քերթողականին՝ արտաքին ու նկարչական ու կերպընկալ ու իմաստի հանդէպ անտարբեր, չըսելու համար թշնամական դիրքին դէմ հակազդեցութեան պարտքէ մը կու գայ: Մեր մէջ նման պարագայ գոյութիւն չունի: Սխալը արդիւնք է արտաքին հանգիստութեան: Մեր միամտութիւնը, կարճատեսութիւնը խորհրդապաշտ մկրտեց Սիամանթոն, պատրուելով անոր տողին ու Ֆրանսացի խորհրդապաշտներուն տողին միջեւ նմանութենէ մը, ինչպէս մկրտեցինք Միսաք Մեծարենցը, ոտանաւորը սկսող բառերը անգլխագիր տեսնելէն — պարագայ որ գործն էր բանաստեղծին մէկ բարեկամին քմայքին:

Վահան Թէքէեան իմացապաշտ քանաստեղծ մըն է:

Վասնզի իր քերթողութեան մէջ գերակշիռ տարրը ոչ գոյնն է, ոչ յուզումը, ոչ ալ երաժշտութիւնը, այլ ընթերցողը խորհրդածելու մղող հոգեկան փորձառութիւն մը, որ պիտի բերուի արուեստի կալուածին: Այս փոխադրումը անիկա կը կատարէ բանաստեղծներու կողմէ անսովոր միջոցներով: Հոնտորութիւնը, լայն կերպով լուսաւորումը (հոգեվիճակին), փչումը, գոյնի հրախաղութիւնները, սանթիմանթալիզմ, երբեմն քնազանցական սարսուռ ու հետեւանք՝ տրտմութիւն, շրջուած ու նորոգուած ռոմանթիզմ կամ բոլորովին հակադիր մեթոտը պառնասեաններուն, որոնք վիճակը պիտի փորագրեն մարմարի վրայ:

—այս եղանակները ժամանակակից քերթողականներէ, կշիռ չունին անոր մօտ: Անիկա իր փորձառութիւնը պիտի նուաճէ, ըսել կ'ուզեմ մեզի մատչելի պիտի ընծայէ իմաստին, մտածումին պարունակով: Ու հոս է իր ինքնատուութիւնը: Ու անիկա առանձին է այս թէքնիկին հետ մեր մէջ:

Անշուշտ ծանօթ է վտանգը որ կախ է նման փորձի մը գլխուն: Մենք բանաստեղծներուն կը դիմենք, չմտածելու համար: Մարդոց ստուար տոկոսը արուեստէն (Բանին) յուզում, երաժշտութիւն, երբեմն ալ ծիածանում կը պահանջէ: Բայց կան ուրիշներ, թիւով քիչ, որոնք նոյն արուեստէն պիտի պահանջեն հոգեվիճակներ, ընկերացուած՝ իմացական գոյով մը, մտածելու գործին ːստուկ լրջութեամբ մը, նորութեամբ մը որոնք չլրջութեամբ վերածուին քերթողական յուզումին:

Քերթողական յուզումը, այսպէս տաղաւարած, առաջնորդել իմաստին պողոտաներէն, զգուշանալ զայն չափազանց անգայտելէ, տողերը ազատել տրամաբանութեան *engrenage*էն*, միւս կողմէն չորս հինգ տուննոց կառոյցի մը մէջ ամբողջական ողբերգութիւններ պարփակել, ինքզինքը պատմել բայց խորհուրդի վարչամականերով մեղմելէ ետքը ամբողջ տրտմութիւնը, դառնութիւնը, զրկանքն ու աղտը ապրիլ ըսուած երեւոյթին: —Տակաւին փնտռել ու գտնել երեւոյթներու շարանին ետին անտիպ շաղկապումներ, պոտլէռեան բառով մը դաշնակութիւններ, տեսանելի աշխարհը [կարկառուն] բայց մանրանկար պատկերներու մէջ քանդակներու վերածել, ամպէն ու խարակէն հոգի հարցնել ու աստղերը երկինքին մէջ մարմինին համար աչքերու փոխել: Տակաւին՝ միւս, ներսի երկինքէն պուտ պուտ ցաւ ու հաճոյք բիւրեղացնել ու բերել բառերու խորհուրդին ծրարելիւլ բայց անձրեւել: Ասոնք խորապէս իրական ու բոլո-

(*) — Ատամնագոյցէն:

րովին նոր, մեր քնարերգութեան մէջ, անցան աննշմար: Բախտ է որ նոր տղաք, որոնք արեւմուտքի արուեստին նոր ջուրերը ճանչցան ու անցան այն յուզումներէն որոնք տարադիր քերթողինը եղած էին քառորդ դար առաջ, այսօր կ'աշխատին հասկնալ վայելչութիւնը այս կէս ըսուած բաներուն ու կը սիրեն:

Ե

Արուեստը: Բանաստեղծի մը ուսումնասիրութեան մէջ, արուեստը երբեմն հոմանիշ է թէքնիկի: Տուէք պահանջուած բոլոր տարրերը (սիրտ, միտք, ջիղ, եղելութեանց տարափ), առանց փորձ ու կիրթ թէքնիկի, բանաստեղծ մը դժբախտ արարած մը պիտի մնար: Օրինակներ: —Ալիշան, Թէրգեան, Չրաքեան: Մեծ անուններ են ասոնք: Բայց դատականիքին տակն են վրիպանքին: Դուք մի տարուիք Բլիշէ հիացումէն ու չհասկցուած փառքէն որոնցմով պատմուածանուած դեռ կը յամառին այդ անունները դիմանալ իբր բանաստեղծ: Ոտանաւորն ալ դիտութիւն մըն է ու զայն արհամարհելը (Չրաքեան) ինքզինքը վտանգել կը նշանակէ: Միւս կողմէն հաւասար դժբախտութիւն է ապաւինիլ միայն ու միայն թէքնիկին: Անուններ: —Որբերեան, Սիպիլ, Չօպանեան:

Այս օրինակներէն կը պարզուի տարողութիւնը ոտանաւորի թէքնիկին որ տաղաչափութեան բորբոսած օրէնքներուն բոլորանուէր յարգանքը չէ հոս: Այլապէս լաւագոյն քերթողները լաւագոյն վարժապետներէն պիտի սերէին: Ու դուք գիտէք որ շատ տարբեր է իրականութիւնը:

Հոս կը բաւականանամ քանի մը տարրեր ուշադրութեան յանձնելու վահան Թէքեանի թէքնիկէն:

ա) — Կշռականութեան հզօր զգայարանք, որ իրեն թելադրած է մեր մէջ բոլորովին նոր չափերու ալ կիրառում: 5 + 5 + 5-ը իր ստեղծումն է:

բ) — Գնացի Բաղրուքիւն, որով տողերը կը սահին փոխանակ պողալու: Խառնուածքին արձագանգը:

գ) — Խորիքի բխող դաշնակութիւն, որ ուրիշ բան է բուրովին քան մեր գրագիտութեան դասագիրքերուն սորվեցուցած դասական շնորհը: Կարգացէք Գեղջկականը եւ Գիւղիս նամբան: Տարբերութիւնը կը տարադէ ինչ որ կը դնեմ այս բարակրաֆին ներքեւ:

դ) — Բառերու զգայարանք, որ փաստ մըն է չատ բաներու, ամէնէն առաջ ազնուական իր խառնուածքին: Ոչ մէկ խոշոր, պոռոտ դարձուածք որմէ այնքան ախորժ ունի մեր նոր քերթողութիւնը, ոչ ալ փափկութենէ փրթելու չափ բարակ ժանեկափունջը որ համբաւի տարաւ հասարակ պատմողներ, վիպումը փոխարինելու աստիճան ստեղծագործումին հետ:

ե) — Ձեւի եւ խորիքի համերաշխ զարգացում:

զ) — Քերթուածին կրկին հէնքը, որով արտաքին ու ներքին իրականութիւնները անհասելի ճարտարապետութեամբ մը իրարու հիւսուած կը քալեն մեր առջեւէն: Ամէն մէկ բառ ատաղձ մըն է որ նոյն հրաշքով կը շինէ դուրսին պատկերը եւ կ'ըլլայ նոյն ատեն ներքին իրականութեան մէկ անհրաժեշտ տարրը: Մեծ մասը իր տաղերուն այս զոյգ երեսով իրացումներ են որոնց յօրինման գաղտնիքը իրմէն զատ ուրիշի քով չեմ գտներ:

է) — Դասական տարագներու մէջ սեղմուելու առաձգականութիւն: Ամէնէն քիչ չեղողն է անոնց կաղապարներէն: Ամէնէն քիչ զառաժողը ազատ չափի թէքնիկովը: Ու խորհիլ որ անոր տաղանդին կազմաւորումը զուգադիպեցաւ Փրանսական սէնպոլիզմին* տիրական շրջանին: Այս երանգէն կը փորձուիմ զայն նմանցնել Մօրէասին որ մնաց, այսինքն լաւագոյն տաղերը տալու համար դարձաւ դասական կաղապարներուն:

(*) — Խորհրդանշապաշտ քանաստեղծութեան դպրոց:

ը) — Պոտլէռեան զգայնութիւն. մեր մէջ մինակն է ան որ Պոտլէռով յայտնաբերուած հոգեվիճակներէն չվախցաւ ու մօտեցաւ անոնց արտայայտումին:

թ) — Եւրոպական քնարերգութեան մէջ Ռոմսարեան ձեւերու ամէնէն յաջողակ փոխադրիչը մեր մէջ: Իր Գեղօնները հոյակապ իրացումներ են իբր թէքնիկ ալ, յուզումի եւ մտածման ամէնէն բարձր տարրերը պարփակող ըլլալէ ետք:

ժ) — Ամէնէն քիչ հոետորը մեր նոր քերթողութեան:

2

Տարրերը իր զգայնութեան: Յիշել ինչ որ ըսած եմ ձեզի իր կեանքին ճամբաներէն, որոնց փոշիին ու ծուխին, արեւին ու ցելսին, ձիւնին ու ոսկիին մէջ կազմուեցան, կը կազմուին ջիղերը բոլոր վաւերական բանաստեղծներուն: Շեշտել մանաւանդ դերը, տեղը, նկարագիրը, ճակատագիրը իր սերունդին որ աշխարհը ստացաւ իր ջիղերն ի վար (թող ներուի այս քիչիկ մը փնտռուած նախադասութիւնը) մեր պատմութեան անօրինակ, եղբրական մէկ դարձուածքին երբ արեւմուտքը մեզ կ'ողողէր իր լոյսովը, արուեստովը, ազատ ու գեղեցիկ կենցաղի իր համապատկերներովը ու Ասիան կոխած էր մեր պուկին, փրցնելու համար մեզմէ ինչ որ ձգեր էր մեզի իբր կեանք: Այնպէս որ արեւմըտեան զգայնութեան զանակները ու մեր ժողովուրդին ապրելու խոր ու խուլ բնազդները այդ սերունդին վրայով իրարու վազեցին. բայց թուրքին ուրուականէն կամարուած:

Այս հաստատումները կը ճշդեն գլխաւոր երեսները անոր զգայնութեան:

Ահա քանի մը յատկասուններ.

ա) — Ազգայնականութիւն: Մի անցնիք արագ այս բառին վրայէն ու մի վախնաք անոր ընկերացող արդի ֆիթ ու պոչէն մեր հայրենիքին մտաւոր ընտրանիին կողմէ: Այդ

բառը առնուազն տասնըհինգ դարու խորութիւն կ'ընդգրկէ ու կը լեցնէ մեր նոր զոյգ գրականութիւնները մինչեւ նոր կարգերու սեմը: Ատկէ կու գան մեր հզօր քերթողներուն ամէնէն սրտառու հառոյցները: Ըսի թէ ոչ մէկ բանաստեղծ գերծ է անկէ:

բ) — Արուեստականութիւն: Ճակատագիրն է ասիկա այն գրականութիւններուն որոնք ճնշումի տակ կը մեծնան: Թուրքերու գրաքննութիւնը հսկայ ազդակ է մեր գրականութեան ամէնէն բախտորոշ շրջանին: Փոխադրեցէք — ըսել կ'ուզեմ փրցուցէք բանաստեղծ մը իր իսկ ժողովուրդին ծոցէն ու նետեցէք զայն օտար դաշտերու: Բոյսն անգամ կ'ազդուի նոր իր պայմաններէն: Մայրաքաղաքէ մայրաքաղաք, մանսարտէ մանսարտ* իր երազը փախցնող ու իր արմատէն կտրուած ամէն խլեակ կերպընկալ կ'ըլլայ: Անոնք որ Վահան Թէքէեանի մօտ օտարոտի համ մը կը գտնեն, թող կենան այս հաստատումին առջեւ:

գ) — Քաղաքականութիւն: Իր սերունդին բոլոր աշխատողներուն նման ան ալ իր ուժերը ի սպաս դրաւ մեր քաղաքական պայքարին: Կուսակցական այս գործունէութիւնը ի վերջոյ կ'ազդէ հոգիին ալ վրայ: Եղան շատեր որ անդարձ կորսուեցան արուեստին համար, անգամ մը պայքարի կըրկէսը իջնելէ վերջը:

դ) — Քաղաքական խռովք: Նոյնը չեն երկու բարակրաֆները, իբր տարողութիւն: Կուսակցական գործունէութիւնը արուեստի ուղղակի գրգիռներ չի ստեղծեր. բայց պատճառ է մթնոլորտի մը կազմումին: Բանաստեղծները, պայքարի գօտիէն դուրս գտնուելու պայմանով, կ'օգտուին անկէ. ներշնչումի նիւթ ճարելով զանգուածը խորապէս դղրդող ամէն յուզումէ: Ու մի մոռնաք մերինին բացառիկ նկարագիրը:

(*) — Ֆրանսերէնով՝ ձեղնախուց:

ե) — Արեւելիք: Այս բառն ալ գրական տարազ մը չէ հոս: Վահան Թէքէեան իր պատանութիւնը անցուցած է Պոլիս: Յետոյ Եգիպտոս որ աւելի փարթամ արեւելք մըն է: Կրական (affectif) մասը իր քերթողութեան մեծ չափով ծնունդէ կ'առնէ հոն ստացուած զգայութիւններէ: Ու հոս է ինքնատիպ կողմը այս ազդեցութեան: Մինչ շատ ու շատ ուրիշներու մօտ այդ արեւելքը նկարչական յուզումներ թելադրեց, Վահան Թէքէեան անկէ հանեց ցեղային օօլօ-րիս* . մեր լեզուին ամէնէն քնքուշ մէկ քանի մեղեդիները: Անոր Հանըմը մուշկի վերածուած արեւելքն է ինքնին: Իր տաղանդին լիութիւնը արեւմտեան զգայութեանց մէջ կատարած բանաստեղծի մը համար, այս հաստատումը կը բարձրանայ արժէքի:

զ) — Մտքի գրգիռներ: Անշուշտ նկատի չունիմ իր օրով արեւմուտքի քերթողներէն գործածուած զանազան միջոցներ, հաշիշ, ալքոլ, կին, եւ ուրիշ գրգռիչներ, որոնք լայն չափով մոտաք ունին կարգ մը զգայութեանց յառնումին մէջ: Պոտլէռ շատ բան կը պարտի ասոնցմէ ոմանց: Վահան Թէքէեանի մօտ ճամբորդութիւնները, մշակոյթէ մշակոյթ անցքի պահուն տպաւորութիւնները, ընթերցումները, մեծ հրապարակի վրայ արձաններ, հնութիւններու թանգարաններ, մուսլ փողոցներու վրայ թափող երաժշտական անձրեւ. — ահա՛ քանի մը նախապայմաններ որոնք կարելի ըրին իր քերթողութեան մէկ կարեւոր գօտին: Քաղաքի բանաստեղծ: Ապահովաբար գէշ հնչող այս բանաձեւին մէջ ճշմարտութեան բաժին մը կայ: Ու այդ քաղաքը նշանակ մըն է այդ տաղերուն վրայ . մթնոլորտ:

է) — Քիչ մը քննութիւն: Վասնզի ուրիշ քիչ բան ըրին իր շրջանի քերթողները: Վահան Թէքէեանի զիջումը այդ բնութեան՝ կը տարբերի զայն իրենց անմեղ լայթ-մոթիֆ

(*) — Գունագեղութիւն:

ընտրողներու անկարող դարպասէն: Մի մոռնաք անոր մըշտակարօտ հոգին որ օտար մայթերու եւ մանսարտներու գառագեղէն զինքը անդադար պիտի փոխադրէ երազին գաւառները: Ու դաշտի, գիւղի, ջուրի տեսիլները երբեմն մեր ջիղերուն վրայ յիշատակներ չեն, այլ անմիջական լինելութիւն մը, այլացում մը: Հայրենաբաղձութիւնը պզտիկ հիւանդութիւն մը չէ, երբ մեր ջիղերը կը հանդերձեն զայն: Ու մենք կ'ապրինք գեղի առտուն, զոր օր մը ունեցեր ենք մեր հոգիին առջեւ, իր տուներովը, դռնակները բացող աղջիկներովը, ու անոնց ժպիտովը կրկին. երբ կապարացած երկինքի մը տակ, օթլի մը կիսագարշ ու նողկալի խոնաւութեան ընդմէջէն գգայութեան շիւղ մը մեզի կամուրջ ըրած, կը քալենք դէպի անցեալը որ, հրաշքով ներկայ մըն է այս անգամ: Վահան Թէքէեանի քերթուածներուն բոլոր նկարագրականները այս գիծով վերապրուած պահեր են ու ատով հոգեկան պատկերներ նոյն ատեն: Այդ է պատճառը որ անոնց գոյնին, գծագրութեան, տեսողական տուրքերով հարստութեան չենք իսկ խորհիր:

ը) — Քիչ մը գոյն: Որ ճարտար տնտեսումով մը գործածուի, հոգեպահները իրենց օր մը ապրուած երանգին մէջ սեւեռելու համար: Որուն արժէքին վրայ չմտածէ ինչպէս կ'ընեն այդ շրջանին ու տակաւին այսօր ուրիշներ. բանաստեղծական յուզումը կամովին հաւասար բերելով նկարչական վայելքին: Միսաք Մեծարենց եւ Կոստան Զարեան կը նկարեն, նկարելու վայելքին անձնատուր. Վահան Թէքէեան կը զգուշանայ այս մսխումէն: Ատկէ շատ ժուժկալ մարդը ժուժկալ եւ աչքերով ալ:

թ) — Քիչ մը կիւն: Ինչպէս է արդէն մարդոց բաժինը անոնցմէ: Բայց բաւական՝ որպէսզի պահը մարմնանայ: Ըսել կ'ուզեմ՝ բանաստեղծի մը զգայարանները խռովող տեսիլքներէն ամէնէն փափուկը, խորը, մարդկայինը սեւեռուի մեր ալ աչքին: Երբ անիկա, կինը ամբողջական բարեխառնութիւնն է գործի մը, կը յոգնեցնէ: Երբ երեւակայութեան թեւերով նուաճուած պարիկ մըն է չի տաքցըներ, վասնզի մշուշը, կապոյտը ջերմութիւն չունին: Կարդացէք այս երեւոյթին ապացուցումը Մեծարենցի տա-

ղարանին մէջ ուր անհկա օղային տաք մըն է: Ու պիտի հասկընաք տժգունութիւնը անոր սիրոյ տաղերուն: Վահան Թէքէեան չ'արհամարհեր զայն, բայց չէ անձնատուր:

Ժ)— Բնածին Թախիծ: Մենք կը ծնինք ժպիտը կամ արցունքը մեր հետ բերելով: Տարիները ուրիշ բան չեն ըներ, եթէ ոչ իրենց շուքը նետել զաղփաղփուն կտաւին: Ու ահա, տունէն ելլելէ ետքը առած ենք կերպը, կազմը անոնցմէ մէկուն, ժպիտին կամ արցունքին: Այսպէս կնքաւոր, պիտի քալենք դէպի երիտասարդութիւն որ անկարող է հերքելու կախարդ պաստառին գոյնը: Ու պիտի խնդանք կամ պիտի լանք: Արուեստի գործը, իբր հեղում մը մեր ամէնէն խոր, ներքին զգայարաններուն, իր կարգին կնիքը կ'առնէ այդ պաստառին: Միշտ զայրացկոտ, միշտ անիծելու պատրաստ Սիամանթոն հակառակ խորունկ տրտմութեան, մեզ կը տպաւորէ տրտմութեան հակադիր տուրքերով: Դուրեանին Թախիծը խառնուածքի հեղում մը չէ. այդ է պատճառը որ անոր վիշտէն կը յուզուինք, բայց զայն իբր այդ չենք արժեւորեր: Վահան Թէքէեանի հոգին գորշ պրիսմակէ մը ներս կ'առնէ արտաքին աշխարհը ու անկէ ճարած քերթողութիւնն ալ գո'րչ է մեծ չափով: Կ'ըսեն թէ սեւ ու թունաւոր մեղրեր կան, արդիւնք՝ ծաղիկներու տեսակին: Ինչո՞ւ չըլլայ ճիշդ ասումը, քերթուածի մը համար որ տարիներու ապրումին մէկ հրիտակն է քերթողին անձէն դուրս:

Ժա)— Իմացապաշտ խառնուածք: Մէկէ աւելի անգամներ այս բացատրութիւնը գործածուեցաւ այս դասի ընթացքին: Այս յաճախանքը անոր համար, վասնզի մեր օրերու արուեստը շահագրգռող բարդ հարցեր կապուած են այդ յղացքին: Կարատեն մը երբ մարդիկ արուեստի շուրջը մանրամասնութեանց մէջ միայն տարակարծիք էին իրարու: Միջին Դարուն ոչ մէկ արուեստագէտ կասկածի տակ է ձգած շրջանի գերագոյն զգայութիւնը, երկինքին ու դժոխքին խուլ պայքարը: Ժէ. դարու դասականները թէքնիկի հարցերու շուրջ միայն կը տարբերէին իրարմէ: Այսօ՞ր: Հաւատայեղձ Հիւբշմանսին դէմ՝ լէգէոնը նոյնիսկ իրապաշտ ուրացողներուն որոնք արուեստի նոյն դրօշակին

տակ խմբուած եղան: Այնպէս որ ամփոփելով վէճը իր գլխաւոր գիծերուն, կը հարցնեմ:

—Արուեստը եւ մտածումը, այսինքն՝ աւելի հասկնալի ու արտայայտիչ տարազով մը կրօնն ու գիտութիւնը, այսինքն աւելի թէքնիկ բառերով՝ զգայութիւնն ու տրոհող կարողութիւնը մեր միտքին իրարու հակոտնեայ իրողութիւններ են, թէ կրնան առնթերադրուիլ իրարու, ներդաշնակ միացումով մը, իբր մարդկային հոգիին զոյգ երեսները:

Չեմ կրկներ, ինչ որ ըսեր եմ վերը, զանազան բարակրաֆներու մէջ: Բայց կ'աւելցնեմ:

—Դասական ու հինցած այդ վէճը բառերով լուծելու փորձը ամուլ է որքան ինքը յղացքը, երբ դիտուի այդ անկիւնէն: Ամէն քանաստեղծ կնիքին տակ է իր խառնըլածֆին: Չունինք իրաւունք Միսաք Մեծարենցէ մը իմացական հասունութիւն, մարդերու ճանաչողութենէն յառաջացած իմաստութիւն պահանջելու: Նոյնը՝ մեր միւս քերթողներուն: Սիւսանթոյի ամբողջ գործին մէջ մէկ հատիկ մտածում հանդիպելի չէ: Բայց ատիկա պատճառ մը չէ տապալելու պատկերի եւ բանի հսկայ անոր տուրքը: Ու ասիկա այսպէս Դուրեանին, ինչպէս Վարուժանին մօտ: Բայց ձեր ուշադիր նկատառումին կը յանձնեմ քերթողութիւնը Վահան Թէքէեանին, վասնզի անոր գործը թանկագին փաստն է կարելիութեան մը որուն համեմատ ոտանաւորը՝ իր սահմանովն իսկ ցարդ զգացական, յուզական, զգայարանական՝ կրնայ առօրեայ ապրումէն թելադրուած ու զգայարաններէ աւելի միտքի ճամբաներով հայթայթուած խռովքներ ծծել, իւրացնել, առանց տուժելու քնարական իր նկարագրէն: Ի վերջոյ մէկ է արարչութեան խմորը, բայց բազմամիլիառ՝ անկէ գոյաւոր ձեւերը մեր իմանալի ու անիմանալի տիեզերքին:

Վահան Թէքէեան մարդն է մեր մէջ որ քերթուածի մը կեանքին համար բան չի սեպեր ջիղերու սարսուռը, ատկէ աւելի՝ այդ սարսուռին՝ առանց իր միտքէն այլացման, նորոգման, առնուազն իմաստի կերպափոխման, բառերու վերածուիլը: Երբ ուրիշներ զգայութիւնները նոյնու-

Թեամբ կը փոխադրեն թուղթին, այդ աշխարհին հաւա-
 տարմութեան մէջ ընդունելով կշիռն իրենց տաղանդին,
 Վահան Թէքէեան զգայութիւնները կ'ենթարկէ ուղեղային
 ալշիմիի մը: Ամէն քերթուած անոր տաղարանին մէջ մուտք
 ունենալու համար կ'անցնի այս գործողութեան: Անոր
 քերթուածները իրենց իբր հիմ, յատակ, գոյութեան
 պատճառ, կը պահեն իրենց սկզբնական կորիզը ՈՐ ՄԻՇՏ
 ԶԳԱՅՈՒԹԻՒՆ ՄԸՆ Է. (մի մոռնաք այս տարազը, վասնզի
 բանալին է անոր քերթողութեան ու հիմնատարը անոր
 տաղարանին, զինքը խոր, մարդկային, քեզի մօտիկ
 ընծայող առաքինութիւնը: Առանց ատոր՝ քերթուածը
 ուղեղային յղացք մը ու հետեւաբար ցուրտ, անհաղորդ
 ճարտարանք մը պիտի դառնար): Բայց որ միտքին մաղե-
 րէն անցնելով կը կերպադրուի իբր ուղեղային ճարտարա-
 պետութիւն: Զգայական սարսուռը որ ուրիշներու մօտ
 վախճանն է արուեստի գործին, անոր մօտ սկիզբ մըն է
 իմացական կառոյցի: Յաճախ այս մայր տարրէն դուրս, որ
 քերթուածը կը հանէ ոտքի, կ'աշխատին այդ կառոյցին
 համար ուրիշ տարրեր, երկրորդական բայց նոյնքան
 արժէքաւոր: Այս տարրերը կը կազմեն անոր բաժանում-
 ները: Այսպէս պատկերացուած. Վահան Թէքէեանի
 իւրաքանչիւր քերթուածը մարդ կը փորձուի նմանցնել
 միջնադարեան մայր եկեղեցիներուն որոնց մայր կամարը
 կը պաշտպանուի բազմաթիւ ուրիշ փոքրերով, այնպէս մը
 որ կառոյցին դաշնակութիւնը ապահովուի այդ միութեանց
 գումարովը: Յօրինման այս թէքնիկը մեր մէջ յատուկ է
 Վահան Թէքէեանի: Աւելի'ն: Երբեմն տունները կազմող
 տողերն ալ իրենք իրենց անկախ, ներքին գեղեցկութեամբը
 արժող, առածաճեւ խտութիւններ են որոնք մինակնին
 պիտի բաւէին մեզի հայթայթելու իմացական այն հաճոյքը
 որ ամբողջին պարագրկումը կու տայ մեր միտքին: Այս
 կարգի տողեր մինակ հնչեալներու մէջ չէ որ հանդիպելի
 են: Անոնք հարիւրներով կը բուսնին, պարզ ու բնական ու
 բարձրօրէն յատկանշական, նոյնիսկ ամէնէն քնարական
 գեղումներու ընթացքին ու պաշտօնը ունին, քերթուածով
 կազմուելիք չէնքէն անկախ, մասնակի յուզումներ խոր-

հրդանշելու. ըսել կ'ուզեմ՝ ամուր, գրեթէ *plastique*^{*} շրջագիծով արձանագրութեան մը պէս զանոնք ցայտուն ընծայելու ոտանաւորին մարմինին մէջէն: Ըսի թէ չատ էր թիւը այդ տողերուն: Կ'աւելցնեմ. այս նկարագիրը պատճառ է որ անոր ոտանաւորը չենթարկուի քնարական տարազին այնպէս ինչպէս Մեծարենցինը ու հրէ ետ սահմանները չափուած բարբառին, անկէ ներս հիւրընկալելու համար իմաստը, իբր անկախ յատկանիշ:

Պատգամը այդ իմաստներուն:

Հարցումով կ'ընդարձակուի սահմանը այս բառին: Ու ես պարտաւոր եմ ամփոփուիլ: Ահա քանի մը յատկանշական թելադրութիւններ.

— Ժամանակակից կտրուկ, առածաձեւ, սուր ու ցայտուն դատումները, որոնք գրելը կ'ազատագրեն աւանդական փաթաթներէն ու ընդլայնումը անկարելի կ'ընեն դասական պարբերութեան:

— Նշմարներու նորօրեայ հունձքը, որ մեծ ապրողներու, դիտողներու, դատողներու հոգեբանական փորձարկութիւնը կը դիզէ սեղմ էջի մը բանտին, բայց այնքան ալ տարբեր է ռոմանթիքներով վարկաբեկուած որձեւէգ գրելու ձեւէ մը. [յոխորտէն^{**}] ինքզինքը անուանող գրական եւ իմաստասիրական խառնուրդ:

— Վաւերական մտածողներու կողմէ նախասիրօրէն գործածուած ափորի՞զմը^{***}, որ զգայութիւնն ու մտածողութիւնը այնքան յաջող կը շրջանակէ ու Նիչէի պէս իրական իմաստասէր մը բանաստեղծի պէս պատկերուն կ'ընծայէ:

— Հիներուն ֆառեակնե՞րը:

— Նորերուն *stance*ներ^{****}:

Կարելի է:

(*) — Գեղակերտ:

(**) — Հաւանաբար պիտի ըլլայ՝ յոխորտօրէն...

(***) — Առածաբանութիւն:

(****) — Բանաստեղծութեան ձեւ մը:

Ամէն պարագայի, մեր ոտանաւորին բլաստիք զեղեց-
կութեանց վրայ թանկ յաւելում մըն է իմաստին սա
լրջութիւնը, հեռագդող խորութիւնը: Ու ահա բարիքը, զոր
հեռու էք կասկածելէ, դուք որ բանաստեղծութիւնը սիրե-
լու տարիքէն դեռ չէք բաժնուած: Ծաղիկ մը կախ ձեր
ձեռքին մատներէն, կրնաք թափառիլ կածանէ կածան եւ
ուրդէ ուրդ, ոգեկոչել Միսաք Մեծարենցը, անոր հետ՝
ձեւի ու գոյնի ու մրմունջի կախարդ այն աշխարհը որ
կապուած է անոր անունին: Նոյնը, Դուրեանին, Սիա-
մանթոյի, Վարուժանին համար, համաձայն իրենց գործին
խառնուած հոգեկան տրամադրութեանց: Այս մեծ դէմքե-
րուն հետ մենք չենք հեռանար զգացումներու գօտիէն:
Անոնք մեզ կը յուզեն, կը շլացնեն, մեր ջիղերը տանելով
իրենց ետեւէն: Բայց մեզ չեն դարձնել մեզի: Ուրիշի մը
մէջ ինքզինքը գտնելու այս բացառիկ վայելքը կամ ցաւը
մեզի կու գայ իմացապաշտ բանաստեղծներէն: Մեր մօտ
Վահան Թէքէեանը միայն մեզի կ'ընձեռէ նման կարելիու-
թիւն: Տազնապի, յուսաբեկման, spleenի* պահերու (մի
մոռնաք մեր հայութիւնը, հայրենազրկութիւնը, որբու-
թիւնը, ու ձեզի սպասող աշխարհին անհուն օտարութիւնը,
ատելութիւնը որպէսզի այդ վշտի պահերը ձեզի չթուին
գրական տարազ) բացէք անոր հասունութեան քերթուած-
ներէն որը որ կ'ուզէք: Գրեթէ միշտ, ձեր մօայլամած
հոգիին վրայ պիտի յառնէ, բացուի ու փայլի հպարտ ու
բարի, ձեզմէ աւելի մեծ խորհուրդ մը, տառապանք մը, ու
պիտի մեղմօրէն, առանց հռետորութեան, տեղաւորուի ձեր
մէջը: Անշուշտ անիկա պիտի չտարտղնէ ձեր տազնապը:
Բայց ձեր լքումին, ցաւի մէջ ձեր առանձնութեան պիտի
բերէ այլապէս մեծ ու ատով սփոփիչ օրինակը իր ալ
լքումին ու տառապանքին: Ու ցաւին կամ հաճոյքին մէջ

(*)— Զանգրախտ:

այս եղբայրութիւնը, այս անգամ իմաստութեան համեստ, անհերքելի տարազներով պաշտպանուած, պիտի անցնի աւելի անդին քան կրաւորական յուզումը որ կը բխի մեր միւս քնարերգականերէն: Ոչ ոք պիտի ուզէր հիւծախտաւոր տրտմութիւններով օրօրել ինքզինքը, ինչպէս ըրած է Պետրոս Դուրեան: Բայց ամէն մարդ, կարդալէ յետոյ Թէքէեանի Կոռի Երթը պիտի խորհէր սեպհական դժբախտութեանն ու պիտի կենար ըսպէ մը, մտածելու համար բանաստեղծին եւ իր անձնական աղերսին: Եւ որովհետեւ ամէն քերթուած գերեզման մըն է իր մօտ, կը հասկցուի թէ տաքնապը, փոքր ինչպէս ամէնէն անտանելին: Ի վերջոյ պիտի ընկղմի ու լուծուի մահուան մեծ խաղաղութեան ծոցը: Սրտագին ընդունուած սա հաշտութիւնը որ մեզ տանելի կ'ընէ մեզի ու մենէ դուրս անարգանքն ու ողբերգական տրտմութիւնն ալ այնքան ապարժէ կ'ընծայէ մեզի: Ի՞նչ բան կը դիմանայ մահուան վեհափառութեան: Ո՞վ՝ իր բոլոր ուժովը, պիտի ազատի անոր բազուկներէն: Այնպէս որ մենք մեր զրկանքն ու արցունքը կ'աղուորցնենք անոր անմեկնելի հրապոյրին ընդմէջէն անցընելով զանոնք: Մահը երգողներու շնորհն է ատիկա մեր աղկաղկութեան նուիրուած: Վասնզի մի մոռնաք, սէրը, այսինքն քնարերգութեան ամէնէն մեծ մոթիֆներէն մէկը, անձնական է, ու իր դժբախտութիւնը՝ չ'անցնիր ուրիշին: Գռհիկ է վայելքը ու զգուելի, երբ կը փորձենք ուրիշին անցընել: Ընկերութեան անհաւասար օրէնքներով մեզի պարտադրուած տառապանքը ուրիշներուն չ'արձագանգեր: Այս ամէնուն դէմ հպարտ համակերպութիւն: Հարիւր տարի առաջ ատիկա ըսած է Ալֆրէտ տը Վինսին: Մահուան մէջ՝ դաշնակցութիւն: Մենէ մեծերուն օրինակը այդ ճամբուն վրայ քաղցրագոյն բարիքն է մատուցուած մեր տկարութեան:

Ժբ) — Պոտլեքականութիւն: Մեր նորագոյն սերունդին մէջ, որ մեծ քաղաքներու ծուխն ու մուրը իր թարմ, այլընկալ ջիղերուն ու ապականութեան, սառնութեան շղարշը՝ իր հոգիին անդրիին, Վահան Թէքէեանի վարկը կը փորձուիմ բացատրել, Պոտլեքին ու իր քերթողութեան մէջ

հաստատելով նմանակ տարրեր: Տարրեր բուրորովին բացառիկ, ինքնայատուկ որոնք Ֆրանսական բանաստեղծութեան այնքան մեծ անուններուն մէջէն Les Fleurs du Mal-ի* դժբախտ, լքուած ու մարմինէն անգամ դաւաճանուած հոյակապ բանաստեղծը մահէն յետոյ վերցուցին, քերթողական կիսագունդին վրայ, մեր օրերու ամենամեծ համբաւին: Երեւոյթին սա անսպասելի պայծառութիւնը մարմին առաւ ընթացիկ բառով մը, պոտիբրականութիւն, որ նոյնքան արտայայտիչ է իբր գրական տարազ որքան րոմանթիզմը: Ու անկէ աւելի բախտաւոր, վասնզի անցեալի մը չպատկանելու առաքինութեան կը միացնէ տարօրինակ արդիականութիւն մը: Բացի լրբութեան ու ընկերութեան յարաճուն թշուառութեան աղտերէն, քիչ բան մեզ կը զատէ այն օրերէն երբ Ֆրանսայի մեծագոյն բանաստեղծը, բարոյականի ախոյեաններուն կողմէ դատարան կը կանչուի իր անմեղ քերթուածներուն հաշւոյն, հասարակաց անտարբերութեան ու իրեն տաղանդակից համբաւներուն չարակամ լռութեանը մէջ: (Չէ՞ք փորձուիր Վահան Թէքէեանը կղզիացնող լռութիւնը հաստատել սա եղելութեան առջեւ): Այդ բառով տարազելի է ձեւի, խորքի, երաժշտական լռութեանց կամ աղաղակող հծծիւնի, ներամփոփ մտածման ու դառնահամ մեծութեան, հազուադէպ համերու եւ շաղասփիւռ հոտի համախառնուրդ գորշ այն զգայութիւնները, որոնք նուէրն են արդի քաղաքակրթութեան, անոր բացառիկ, ախտավարակ, որդնագեռ ալքերէն յառնող, երբ շատոնց մեքենան սեւած է մեր երկինքը ու գորշաւորած մեր հոգին: Էջեր չեն բաւական սպառելու համար մեր աղերսը պոտլերեան ձանձրախտին: Նոյն ատեն տիեզերքը կրելու, (զուտ հասկցէ՛ք՝ հանդուրժելու) զայն սիրելու աննուաճ անոր կարօտով՝ որուն

(*)— «Չարին Մադիկները» խորագրեալ բանաստեղծութիւններու հատորը Շարլ Պոտիբրի:

ասեղներուն տակ անիկա կ'երկարէ իր ջիղերը դէպի մթին դաշնակութիւնները, առնչութիւնները Բանին ու Տիղմին, Մեղքին ու Տառապանքին: ... Պոտլերականութիւնը նմանելի է ցուցատախտակի մը, դրուած ընդմէջ երկու աշխարհներու, որոնցմէ մէկուն խորը ռոմանթիքներու հերարձակ ստուերները ալ խաղաղած են, իրենց ծիծաղելի յաւակնութեանց մոխիրէն նուաճուած ու մարդերը առաջնորդելու իրեց հաւատքէն ալ հիասթափ: Որոնցմէ միւսին մէջ, ուրիշ բանաստեղծներ, սառն ու հպարտ, բայց զգոյշ իրենց բացազանչութեանց ու շարժուձեւերուն պարունակէն, կը քանդակեն իրենց զգայութիւնները, ջանք ընելով անոնց տալու հնչեղ ու ժուժկալ տարազ, թելադրելով ձեւերու, գիծերու, գոյնի, բարբառի յաւիտենական աղերսները, անտարբեր՝ հիներուն մանտայիմ, ու կը կարծեն ամէնէն խելօք բաները ըսած ըլլալ մարդոց որդիները հրաւիրելով աներկիւղ, պարզ, սրտագին ընդառաջուած Բորոտի մը, մահուան մեծ իշխանին նախազահութեամբ: Ալֆրէտ տը Միւսէէն՝ Լը Գոնթ տը Լիլ: Պոտլէռով սկսած նոր սարսուռը, իբր անէծքի (կարդալ հոյակապ մուտքը *Les Fleurs du Mal* ին որ օրհնութի՛ւն վերնագիրը կը կրէ ու ամէնէն խոր անէծքն է նետուած ապիրատ ընկերութեան մը երեսին), տարրալուծման, քայքայման հոսանք, տարբեր երանգի տակ ճիւղաւորուելով դէպի տեսամու Ռէնպօն ու կրկնադէմ սաթիռը, Վերլէն, արդի քերթողութեան մէջ ծնունդ է տուած առօրեային, իրականին, փոքրին ու փուճին, հոտածին ու որդնոտին այնքան եղերական տիրապետութեան: Հիմա քերթուած մը կարդալու համար ծառի մը չուքն անգամ մեքենայի իւղ կամ բրնձափոշի կը հոտի: Հիմա քերթուած մը գրելու համար բանաստեղծը չի փնտռեր լիճերն ու անտառները: Ներկուած զարդախուցերը կը բաւեն անոր զգուանքին ու ներշնչումին: Հիմա փողոցն է որ կը փռուի տողերուն ներսը, պարզ ու անվարչամակ: Անշուշտ չեմ ականարկեր իրապաշտ ու ընտանի ու տափակ կամ սանթիմանթալ շաքարկառոյց ոտանաւորները օրինակի մը համար Ֆրանսուա Գորբէի, կամ մերին-

ներէն Որբերեանին, Սիպիլին: Այլ ձեր յուշադրութեան կը յանձնեմ դառնադառն կորանքը որ ճակատագրուած է ամէն արուեստի սպասաւորին երբ անիկա իր տաղանդին լծակ չի տար ուրիշ, աճարարական առաքինութիւնները, անունը ըլլայ Պոտլէռ կամ Վահան Թէքէեան: Այլ նկատի ունիմ անորակելի վիճակը մարդուն որ կեանքը արհամարհել չկրնալու այլապէս եղբրական դժբախտութիւնը չի ներեր իրեն, ապրելու իր զգայարանքները բեռ մը նկատելով: Որ չի վախնար մահէն, վասնզի անկէ անդինը չունի ու զայն սիրելու համար կեանքին բոլոր ազդերը խառնել, խուզարկել կը ցանկայ...: Կ'ըսեմ ասոնք, փոքր չափով մը, ուրուային չափով մը, ձեզի մատչելի ընելու համար մեծ ողբերգութիւնը բոլոր անոնց որոնց հոգին ընդարձակ է ինչպէս կաթողիկէ, բայց ոտքերը՝ ազագուն ինչպէս ճնճուղինը: Տակաւին, այդ տարազը դրօշակ ալ է այն հագուածիւ ուխտաւորներուն որոնք քաղքենի ու տափակ գոհակութեան դէմ մեծ մոնազին յիշատակին մէջ իրենք զիրենք կը սրտապնդեն: Այս ամէնը մի կարծէք որ օտար բանաստեղծի մը հաշույն պարզեցի ձեզի: Անոնք գրեթէ բառ առ բառ կը պատշաճին Վահան Թէքէեանի հոգեբանութեան: Այդ պայմանները յաւելեալ ուրիշներով ի զօրու էին, են մինչեւ այսօր. այսօր մանաւանդ, երբ մեզի ընդոծին թշուառութիւններուն բարդուած կը զգանք ցեղային մեր աղէտին ալ հակահարուածը, թոնաւորումի մեր հոգիին օտար, ամլացնող ամբարձու վրայ ցիրուցան մեր ժողովուրդէն: Կ'անցնիմ...: Հիմա, Ամերիկա կամ Սուրիա, Ֆրանսա կամ Եգիպտոս, մեր դպրոցաւարտները որոնք թուրքին դժոխքէն հեռու աճեցան, այդ երկիրներու վարժարաններէն ստացուած ապազգային, անզգած այլուրութեամբ, թերեւս ուս ալ թօթուելով կը կարդան Սիամանթոյի աղեխարչ, ատենին՝ ունկնդիրները տակնուվրայ ըրած ողբերը: Ասիկա արտանշան մըն է անշուշտ: Բայց կը խորհիմ թէ նոյն այդ տղաքը, եթէ բոլորովին չեն մեռած իրենց ժողովուրդին համար, երբ ըսպէ մը այցուիւն իրենց ցեղին հեռու, անաւարտ պատգամէն ու ակնարկ մը զիջին անոր արժէքներուն, ամէնէն շատ պիտի կենան Վահան

Թէքէեանի քերթողութեան առջեւ: Ու առանց նուաստութեան պիտի թափանցուին անոր խռովքէն: Վասնզի, կը խորհիմ թէ անկարելի է հարազատ ամերիկացի ըլլալ ու չսիրել Էտկար Ալան Բօն: Նոյն մակածութեամբ, այդ երիտասարդները պիտի գործովին մեր բանաստեղծութեան անկեղծութեան, խորութեան, եղբայրութեան առջեւ:

Պէտք է, աւաղ, վերջացնել այս բարակրաֆը, որուն մէջ այնքան բաներ դնել ուզեցի, հասնելու համար սա քիչ տողերուն: Մեր տաղաչափութիւնը Թէքէեանէն զատ ուրիշ անուն չունի այդ ոգիին յայտարարութիւն: Մեր արձակը՝ պատառիկներ:

Մեր Պոտլէռն է անիկա:

Ժգ) — Երեւակայութիւն: Բանաստեղծի մը արուեստին տարրերը առանձնացուցած (isoler), քննադատը հարկին տակն է զբաղելու ամէնէն շատ անոր երեւակայութեամբը: Օրէնքը բացայայտ ըլլալէ առաջ արդիւնքը բացայայտ է ազգերու մեծ քերթողներու գործին առջեւ որ շատ մը բաներ ըլլալէ առաջ արդիւնք է արուեստագէտին այդ կարողութեան: Օրինակներ՝ — Իլիական, Ենեական, Դժոխք, Դրախտ կորուսեալ...: Ստեղծումին (ամէն մարդէ) ամէնէն զօրաւոր այս զգայարանքը, որով կը ճարտարապետուի Հիւկոյի հսկայ կառոյցը, ի՞նչ տուրք բերած է Պոտլէռի կամ Վերլէնի մը փոքրադիր բայց այնքան ալ մեզամերձ գործին: Հարցը փոխադրելով մեր մէջ, այդ զգայարանքը նոյն դերը ունի՞ Վարուժանի մը կամ Սիւսմանթոյի մը ստեղծումին որքան Վահան Թէքէեանին մօտ: Պատասխանը պարզ է: Չէ՞ք խորհիր որ կեանքէն առնուածը, ինքնին, առանց երեւակայութեան նպաստին ըլլայ բաւող որպէսզի, մնալով մեր փոքր կամ խորունկ ցաւերու պարունակին, մենք ըսենք մեր կսկիծը, հեւքը, յոյզերը ու խռովենք ընթերցողը: Իմ կարծիքով կեանքէն վերցուածը ոչ միայն կը բաւէ, այլ կ'աւելնայ իսկ, իբր ատաղձ ծառայելու այն փոքր կտորներուն որոնք բանաստեղծին զգայութիւնները կոկ բայց մնայուն քանդակներունման կը յաջողին արձանագրել: Դարը իսկութեանց (essence) դար է արդէն: Վասնզի այսօր մարդկութիւնը

ունի բաւական լեղի փորձառութիւններ հաւատալ կարե-
 նալու համար բանաստեղծներուն: Կը խորհիմ թէ անվե-
 րադարձ անցած պէտք է համարել դերերը յաւակնոտ
 քնարերգակներու որոնք իրենք զիրենք իբր փարոս
 ներկայացուցին մարդոց տանջանքի ծովերուն վերեւ: Ինչ
 որ Լամարթինն ու Հիւկոն համբաւի տարաւ, այսօր հեռու է
 դպրոցի տղան իսկ խանդավառելէ: Հիմա ամբոխները
 ունին երգը երկաթին որ սուր չէ մինակ, այլ եւ քէֆնիկա-
 կան աշխատանք: Ունին ռատիոկայաններ ուրկէ կը պատ-
 գամեն բառերուն ինքնակալութիւնը: Ունին հազարաւոր
 օրաթերթեր որոնց պաշտօնն է ոչխարութիւնը օրինաւո-
 րել: Ամէն մարդ փորին պաշտամունքը հասցուցած
 է իրական պաշտամունքի:... Ու անցած է ժամանակը
 հսկայ ֆերթողականներուն: Այս երանգէն անկախաբար,
 ուր գետեղել փորձեցի զանգուածին անտարբերութիւնը
 իմաստին ու արուեստին դէմ, նոյնիսկ Ղեւտացիներուն
 սերունդը հաճոյք չունէր մեծակառոյց գործերէ ուր
 պատկերը, փոխաբերութիւնը, հռետորութիւնը, անէծք ու
 օրհնենք, կարճ՝ ռոմանթիք ոճը կը տիրէ: Անոնց ուզածը
 պուտ մը խելք է կամ շերտ մը արիւնոտ միսն է թուղթերէն,
 ուր, գերզգայուն բայց իր զգացածը խտացնելու ընդունակ
 մարդ մը մեզի կը պատմէ իր արկածը, առանց սուրի եւ
 երիվարի, կրակի ու փոթորիկի, դղեակի ու իշխանուհի
 բանտող աշտարակներու, ոճիրի եւ արիւնի, առանց
 մանաւանդ յաւելեալ, փչուած, թացիկ թախիծի կամ
 շրջուած փողարութեան: Պո'ւտ մը արկած, սանկ պարզուկ,
 սանկ որոշ, տէգորի մը ընդմէջէն որ աւանդութեան լիճը
 կամ անտառը չըլլայ, այլ անկիւն մը մեր փողոցէն,
 տունէն, աշխատանոցէն: Այո', պատուհանէ մը թափող
 ձայնին թելիկը, ծառի մը տակէ նայուածք մը, ձեւը որ կը
 քալէ մեր առջեւէն իբրեւ հոտի եւ գոյնի ալիք,
 տրամութիւնը՝ անձրեւէն քամուող, տանիքին վրայ
 ճօճուող ճիւղը, կատո'ւն որ մեր ծոցին մէջ կը լարէ իր խուլ
 նուագարանը, թռչունները, ագռաւը ինչպէս ալպաթրոսը
 (Բօ եւ Պոտլէռ) որոնց յիմարութեանը խորէն անհուն
 խորհուրդի եւ իմաստութեան կը հասնին մէկ երկու

քուրմեր, ու հոտերը, ձգուած մեր շուրջը՝ ոսկի ճամբաներ, տարիները ակնթարթի պէս մեզի ետ բերող... երկար է այս թուումը՝ ինչպէս է առօրեան: Մեզի լայնօրէն խառնուած սա պատկերներուն, ծուէններուն, հեւքերուն, հէնքերուն անդրադարձն է որ կը հայթայթէ որովորէն արդի քերթողութեան, մանր, կցկտուր, բայց իրական: Ու դեռ չեմ մօտեցած միւսներուն, դժոխային որակուած զգայութեանց, մեր օրերուն միայն քաղաքացիի իրաւունք ստացած, որոնք արուեստի ցարդ որոշ ճակատը պատառ պատառ կ'ընեն ու վերլուծումի կ'առաջնորդեն անմերժելի ալքերը, ուր կը ծփան մեր մեղքերը, նրբացած, հիւանդ, «վերջալուսային»: Այս ամէնը պարագրելու համար մարդիկ հարկ չեն զգար թեւ իսկ պարզելու, երկինքն ու երկիրը իրար խառնելու, պոռալու կամ լալու: Այդ ամէնով արդէն պարուրուած կը պտտինք:... Կարճ՝ այս ընդլայնումը կը բաւէ ճշդելու համար շրջագիծը Վահան Թէքէեանի երեւակայութեան: Որ փոքր է, սահմանափակ, բայց տարօրէն յստակ, ներշնչումին աղբիւրը ցայտեցնող պարզութեամբ մը: Որ չի կառուցաներ, չի դիզեր, նախանիւթեր չի ձեւադեղծեր, տաշելով կամ իրարու հիւսելով, փափկութիւն եւ կարկառ ճարելու հեւքով. բայց կրնայ չեշտօրէն, անմոռանալի պայծառութեամբ մը ողողել, երանգել բանաստեղծօրէն ընտրուած հոգեկան անկիւնը: Որ ինքզինք խստօրէն կը սանձէ, յորդումի, հեղեղումի հարկին առջեւ իսկ. ու միշտ ցեղին կոտորածը կը բերէ երկաթ սահմաններու, վեց եօթը տունի մէջ զետեղելու քսան տարու տարածութիւն ու միլիոնէ աւելի մարդերու ողջակէզը:... Ու կու գամ միւս կարեւոր հաւաստումին: Հակառակ քիչ ու համեստ իր ծաւալին (ներուի այս անյարմար բառը) այդ երեւակայութեան բաժինը օգտակար է չափազանց անոր քերթողութեան, որուն կարելի հաղորդականութիւնը չնորհն է անոր: Վասնզի մեր զգայութիւնները միջոցին մէջ ճամբորդելու համար կարօտ են անոր թեւին: Աւելի՛ իմաստին չորութիւնը մեղմող, զայն արուեստի իրականութեան վերածող թանկագին ոլորտն է անիկա որ, նման օդին կամ ջուրին,

զգայութեանց բեկորները կ'ողողէ անդադար մարդկային հեղանուտով: Առանց այդ փոքր բայց պայծառ լոյսին (ռոմանթիքները սիրայօժար զայն պիտի վերածէին Ջաիին) կը խորհիմ թէ Վահան Թէքէեանի քերթուածները, մտածամաժր սպառազէն, չոր, վերացեալ (abstrait) մեհենագրութիւններ ճակատագրուած էին մնալու: Ծանօթ է պարագան քանի մը Ֆրանսացի քերթողներու մօտ: Սիւլլի Բրիւտոմ անընթեռնելի է իր փիլիսոփայական քերթուածներու մէջ հակառակ անոր որ հաստատ, գիտական կալուածէն դուրս չէ ելած: Ու վերջացներու համար այս բարակրաֆը, կ'աւելցնեմ. արդի քերթողը առանց տոյժի կրնայ ինքզինք անկախ ընել երեւակայութեան գերիշխանութենէն: Փոխաբերութիւնը փոխարինելի է անվերածելի իրականութեամբ մը որ խիտ կեանքին շնորհն է մեր մտքին: Պատկերը կրնանք զանցել, տեղը դնելով սարսուռին փայլակները որոնք կան մեր աչքերուն ու հոգիին հորիզոններուն: Զիղերը կը բաւեն մեզի:

Ժդ) — Թէէեանի տեղը մեր ֆնարերգութեան մէջ: Ատիկա ճշդելէ առաջ հարկ կը զգամ խօսելու այն մեծ, անիրաւ, անբացատրելի լքումէն ուր պահեցինք ու կը պահենք այս իմաստուն, ազնուազգի, մեծ բանաստեղծը, երբ չենք վարանիր համբաւին գործաւորները վարձատրել այնքան սրտառուչ ու բարեհաճ երախտագիտութեամբ: Այս տողերը չունին չարութիւն: Անոնք կու գան մէկու մը կողմէ որ ամէնէն շատ կը հասկնայ հայ արուեստագէտին (տաղանդաւոր կամ անտաղանդ հոգ չէ ծանրութիւնը հարցին) ճակատագրական դժբախտութիւնը:

Ծանօթութիւն. (Անցեալ տարի խօսուած այս դասը տպագրութեան համար յարդարած պահուս, հաճոյք է ինծի արձանագրել հոս, յապաղած բայց վերջապէս ալ իրացած սթափումը իմացական մեր աւագանիին: Կ'ըսեմ այսպէս վասնզի բանաստեղծին հանդէպ մեր տմարդութիւնը, ամբօխէն առաջ, գործն էր իր գրչի ընկերներուն. աւելի ուշ կու գայ անոր խառնուածքին ալ բաժինը իր շուրջը կազմուած ամայութեան մէջ: Դարմանումը, անշուշտ, պիտի գտնէ լայնքը որ մոռացումինը եղաւ: Ուրիշ հաճոյք մը,

ա՛ն, որ իր յոբելեանը (ծրագիր՝ այս տողերը գրուած պահուն) կը համախմբէ անոր շուրջ մեր միտքին բոլոր աշխատաւորները, հինը որքան նորը, ու ան միւսները, սիրողները, որոնք տակաւին կը յամառին հաւատք ունենալ մեր ընդունակութեանց: Իր անունին, վաստակին, արժէքին դիմաց միապաղաղ սա համակրանքը արդար սփոփանք է մէկու մը համար որ քառասուն տարի միապաղաղ հալածուեցաւ իր ընկերներէն, նախատուեցաւ անխնայ դադափարի հակառակորդներէն բայց զարմացուց բարեկամի եւ թշնամիի համբերութիւնը, պահելով իր ազնուական մեկուսացումը, ոսկի վանդակի մը ետին: Դիտել որ վերջին հատորը, Սէր*, վերնագրին թելադրանքովը, կը խորհրդանշէ անհուն այն կարօտը զոր մեր վիշտէն ածխացած սիրտերը ունին դէպի այդ զգացումը: Կը խորհիմ թէ սա ակնարկը քիչերու մատչելի պիտի չընէ հեղինակին այս հեռանկեալ պատգամը: Այսքան հսկայ կորուստներէ ետքը, որոնց լծակներէն մէկ քանի կարեւորները եղան մեր իրերադիտութիւնը, դասական անմիութիւնը, կա՞յ աւելի գեղեցիկ տարազ մը մեզ իրարու կանչող: Կա՞յ աւելի անհրաժեշտութիւն մը՝ սա պայմաններուն մէջ մեր ցեղային կարիքները դիմաւորող, երբ աշխարհի չորս ծագերէն թուղթէ մատնոցներու ետին անցած իրարու զլխուն կը տեղանք ինչ որ պիտի զգուշանայինք մեր թշնամիին վրայ արձակելէ: Սէ՛ր: Սրտառուչ, վսեմ կո՛չը չսիրուած մարդու մը շրթներէն:)

Դիւրի՛ն, բացատրել սա լքումը պատրաստ տարազներով:

Յաջողած իմաստունները այնքան առատ են մեր մէջ ու այնքան ալ ճարտար, փորձառական իրենց պատգամները տարազելու: Գաղափարի իր ընկերներն էին որ խեցեվճիռ հանեցին անոր քերթողութեան դէմ, զայն յայտարարելով

(*) — «Սէր», Բեքուածներ, Փարիզ, 1933:

մութ, անայժմէ, անհաղորդ: Ու ըստ գեղեցիկ վճռին, ուրիշներէ առաջ բանաստեղծը ինքն էր պատասխանատու իր լքումին: Այսպէս կը տրամաբանէին անոնք որ կ'աշխատէին անոր հետ նոյն սիւնակներուն վրայ, ու այդ իմաստութիւնը insinuer կ'ընէին իրենց շարքերուն:

Անհաղորդ:

— Բայց ասիկա լրումն է փղշտացիութեան:

Ձեզի ըրած ընթերցումներու մէջ դուք զգացիք սակայն պարզ, մարդկային անպարագիծ ջերմութիւն որ պահուած կը մնար մեհենագիր այդ տողերուն ներքեւ: Ո՞վ ըսաւ թէ կրակը միշտ կ'այրի բաց օդին:

Անհաղորդ:

Բայց ձեր հոգին ինչ խորունկ յուզումով բաբախումի ելաւ, երբ կը մտնէր շփումի բառերէն անդին, չըսուած, արտայայտուելու հարկէն ամօթահար զգացումներու ի հաշիւ որոնք մութ, չոր, անաւիշ որակուած այդ տողերէն հրաշքի նման կը քակուէին փունջ փունջ ու ճամբայ կ'առնէին դէպի ալքերը ձեր ազնուագոյն զգայարաններուն: Ընթերցումի մը պահուն երբ քսան տղու աչքերը միաժամանակ կը մշուշուին եթէ ոչ արցունքով, գոնէ ժպտաւէնովը նրբին յուզումին, նոյն այդ աչքերը հերքած կ'ըլլան անամօթ վարկածը անհաղորդութեան: Ծանրացայ քիչ մը այս առարկութեան, վասնզի պարզութիւնը հիմատաղանդի ստորոգելի է մեր հրապարակին վրայ, փոխանակ աղքատութեան հոմանիշ ըլլալու:

Ասկէ դուրս, հարկ է չըջել դերերը ու ծանրանալ մեր իսկ մեղքին: Ինծի համար, Վահան Թէքէեանի հանդէպ ցոյց տրուած այս անարդարութիւնը արդիւնք է մեր վարժարաններուն: Մեր, ընթերցողներուս [Թաղապիսակ] խորժակները, դիւրաստաց նախասիրութիւնները ուժգնօրէն կը

(*)— Կը սպրդեցնէին:

միջամտեն անոր կազմումին: Մեր ժամանակը որ չի բաւեր մեզի, քանի որ զայն կ'սպառենք սոսառ որքան անիմաստ զբաղումներու: Մեր սեղանները որոնք խճողուած են մելանէն թաց գիրքերով, թերթերու հակերով եւ հանդէսներով: Մեր փառասիրութիւնը, շատ մը մարգերու վրայ համաժամանակ երեւալու մեր ունայնամտութիւնը որ մեր ներքին, խոր ապրումին տրամադրելի ոչինչ կը թողուն ու մեզ խամաճիկներու նման ուրիշներու մղումին սպառողներ կ'ընեն: Ասոնք ու տակաւին լռուած շատ մը ուրիշ մեզավայել վարժութիւններ մեզ ըրած են հիմա տարբեր մեզ կանխող սերունդէն որ կարդալու համար թրամվայ ու շոգեկառք չէր շահագործեր ու սեղանի մը գլխուն անցած, քիչ շատ հանդարտ ուղեղով կը ջանար հասկնալ առջին բացուած էջը: Ստոյգ է որ հիմա ապրելու տեղ կը սուրանք, մետաղին թեւերովը: Ու կարդալու տեղ կ'ոնտոստենք աչքերով, էջէ էջ ու գիրքէ գիրք: Հապա ներկայացումները, ընդունելութիւնները, հրաւերները, բամբասանքները, յօդուած գրելու յիմարութիւնը: Այս պայմաններուն մէջ լուրջ ու թափանցող ընթերցումը այլեւս անկարելի է դարձած: Աստիճան մը բարեմիտ ենք վէպին: Կը փնտռենք ալ բանավէճը, քննադատին շաղփաղփութիւնները: Բայց քերթուածը: Ու կը ձգենք զայն մեր ձեռքէն երբ մեր նայուածքը մէկ թարթումով չի հասնիր տառին ու իմաստին միանուագ ընդգրկումին: Ինչպէս կը տեսնէք պարզութեան կամ մեծութեան հարց չէ որ կը ծեծեմ: Չենք ներեր մեր յապաղանքը, ճիշդ մեր վրայ ամփոփուելու, ուրիշին մէջը իջնելու զոհողութիւնը. հերոսական գինով վճարել հարկադրելով մեր դէմինին ու կը վտարենք հեղինակը մեր համակրութենէն, յետոյ մենէ դուրս, ուրիշներու պարունակէն, հաստատելով անամօթ քառանքիւն*:

(*) — Պարտադրուած մեկուսացում:

Անշուշտ, խաղաղ, ինքնանուէր աշխատողին համար արտաքին այս խաժամուժը կշիռ չունի ի վերջոյ, չի կրնար ունենալ: Բայց ե՞րբ տուինք տարրական հանգիստ մեր գրողներուն որոնք առնուազն օրուան հացին մղձաւանջովը կը մաղաղկին, ստեղծումի, մնայուն գործի լծուելէ առաջ: Ինչե՛ր ստանալի չէին օրինակի մը համար Սուրէն Պարթեւեանի մեծափառ տաղանդէն, զոր անիծեց թշուառ(ական) գրագէտը, նախանձելով Բիւզանդ Քէչեանին ու դէմի նպարավաճառին երբ կը խօսէինք Պոլիս, սեղանի մը շուրջ ուր օտարին գթութիւնը ճաշարանի քառնէ* մը տրամադրած էր իրեն: Այս տխուր դրուագը կրնաք տարածել ամէնէն աւելի բախտաւորներուն վրայ, որոնք իրենց հացը կը հանեն սա գգուելի գինով:

Ե՞րբ ունեցանք քիչիկ մը խելք հարցնելու վիճակը մարդոց որոնք ամօթէ, զգայութենէ, խառնուածքէ հարկադրուած, անկարող եղան ուրիշին կռնակը շոյելու ու մնացին իրենց մռայլութեան խորը, մարդատեսաց ու վսեմ, հակառակ ամէն բանի, փորձելով հպարտութիւնը իրենց տաղանդին, հանդուրժելով ուրացումը, նախատինքը, հալածանքը բայց չընդունելով զիջում մը իրենց հանգանակներէն: Զիրենք այդպէս հարուածող սա պայմանները չեն անշուշտ որ այդ մարդերուն գործը կ'ընեն քիչերու մատչելի, խոնաւ կամ չոր օրեր, տարիներու կրկնումով, զարդանկարին գիծերը կ'այլալեն: Ու ճի՞շդ չէ վարկածը հոգեկանին ալ վրայ: Տրտո՛ւմ է գործը Վահան Թէքէեանին: Ու կը լռեմ:

Ինչպէս կը տեսնէք, ամբոխին իջնելու կամ չիջնելու, գովուելու կամ անարգուելու, նեղուելու կամ փառաբանութեանց հովերէն ներշնչում ճարելու հարցեր չեմ յուզեր: Ասոնք, խոր իրենց մարդկայնութեամբը, կ'այ-

(*) — Պարեմատումս:

ցելեն այդ արուեստագէտներուն ալ դուռը, կը բարձրանան անոր սանդուխներէն, բայց կանգ կ'առնեն անոր սեմին, արգիլուելով ներսի մարդուն գերազանց այլուրութենէն: Պարագան ուրիշ չեղաւ Վահան Թէքէեանի մօտ որ մօտ կէս դար դիմադրեց այդ պայմաններու գրոհին:

Մեր բանաստեղծութիւնը չունի երկրորդ անուն մը որ այս խստութեամբ իր արուեստին յարգանքը պահպանէր վատասերող, քայքայող ազդակներու հասողութենէն: Աւելի՞ն: Կատարելութեան պահանջը զինքը տառապեցուց այնքան որքան վերի պայմաններու երկաթէ շղթան: Եւ սակայն մարդն է անիկա որ քերթուածները ամիսներով, տարիներով չի դադրիր յղկելէ, փոխելէ, մինչեւ որ գոհացում ճարէ արուեստագէտի իր խղճմտանքին:

Մեր բանաստեղծութիւնը չունի երկրորդ անուն մը որուն քերթուածները ներկայացնեն հաստատ, խստապահանջ ճարտարապետութիւն մը, կառուցուած զանակ զանակ, տեւողութեան շատ ընդարձակ պարունակներէ բայց ամբողջին մէջ հաւատարիմ ինքը իրեն: Չունի ուրիշ տաղարան մը ուր մեզի տրուէր կեանք մը, անոր գլխաւոր իրադարձութիւնները, անոր համայնական «գոլորի»ն, այնքան հարազատ որքան է անիկա Վահան Թէքէեանի քերթողութեան մօտ: Մարդիկ կ'ընեն ստիկա, այսօր, մեծ բանաստեղծներուն վրայ: Վէլչէնի դժնդակ ճակատագիրը լուծելի առեղծուած մըն է, իր գործերուն ընդմէջէն: Մեր մօտ նման փորձ մը Վահան Թէքէեանի տաղարանին վրայ, պիտի պսակուէր տրտում յաջողութեամբ մը: Կ'ըսեմ ասոնք, վասնզի հոս է անոր ինքնատպուլթիւնը: Բանաստեղծը ան է որ իր կեանքը այսպէս կ'աստեղացնէ, այսինքն այդ կեանքին թանձրութիւնները թօթափելէ յետոյ, անոր աստեղային (sideral), գոգմիկ մասը բառերու պատմութեանին մէջ կը յաջողի գետեղել: Գիտցէք, կեանքը չի դադրիր: Այս օրէնքին դէմ է որ կը գործեն բանաստեղծները, իրենց մասնիկները փրկելով այդ հեղեղէն: Ուշադիր

վերլուծում մը, «Հոգեր»էն մինչեւ «Սէր»ը ու մանաւանդ միւս քերթուածները, որոնք հատորի բախտը չունին տակաւին, մեզի պիտի տար ամբողջական կեանք մը, խորապէս տխուր, վշտոտ ու վախկոտ, զոր ակօսեցին մարդոց զգայնութեան մեծ խոփերը, սէրն ու հաւատքը, յոյսն ու խանդավառութիւնը, ցեղային մեծ սարսուռները ու ասոնց արդիւնք աղէտին ամբողջ երկրաշարժը:

Մեր բանաստեղծութիւնը չունի ուրիշ տաղարան մը ուր զգացումներու, հոգեկան ողբերգութեանց ու մեզայատուկ տիրութեանց քովէն, կարդայինք նաեւ իմաստին պաղպաղուն տախտակները, մեզի համար այնքան հազուադէպ: Ու տախտակներու այս ցուցադրումը ըլլար կատարուած նոյնքան խստապահանջ, ժուժկալ լրջութեամբ, ձեւի ու արարմունքի աննշան պարզումով, տէգոռի մը մէջէն որ ընտանի էր անոր երբ կ'առարկայէր հոգեկան, զգացական կայքեր, նկարներ: Անոր իւրաքանչիւր քերթուածը կորիզ մը, մասնիկ մը կը պարունակէ իմացական արարչահիւթէն որ իրական է այնքան որքան բնախօսականը: Գաղափարը ի՞նչու չբաղդատուի աշխարհը կազմող միւս ուժին:

Զինքը յատկանշելու համար պիտի զգուշանամ ընթացիկ եղանակէն որ բաղդատութիւններ, հանգիստութիւններ, տարբերութիւններ կը սիրէ ճարել՝ այդ մերձեցումներով, հակադրումներով ցայտեցնելու համար ուսումնասիրուած դէմքը: Կը խորհիմ թէ նման աշխատանք մը կարող է սխալներու առաջնորդել մեզ: Մարդէ մարդ նմանութիւնը ձեւախօսական (morphologique) է, քիչ անգամ՝ հոգեխօսական: Բանաստեղծութիւնը (մեր ըմբռնած ձեւով) գերազանց խօսքը ըլլալով հոգիին, անկախ է ինք իր մէջ ու չի շահիր բաղդատուելով: Հանել զուգակշիռը Դուրեանին եւ Պէշիկթաշլեանին, Վարուժանին եւ Սիամանթոյին (լուս իջնէ գերեզմանը Մինաս Չերազին որ կէս դարէ աւելի առաջ ըրեր էր այդ փորձը զուգակշռելով Ալիշանն ու Պէշիկթաշլեանը) կատարել է հոգտորական աշխատանք երբ տաղանդներու ճշդումը ունինք նկատի:

Վահան Թէքէեան մէկն է մեր նոր քնարերգութեան ամէնէն խոր բանաստեղծներէն, եթէ ոչ ամէնէն խորը:

Վասնզի առաջին անգամ ինք մտցուց խորութեան զգայարանքը, dimensionը անոր մէջ:

Իր ժամանակին մեծ յուզումներէն մշտապէս կոծուած, անիկա քիչերու շնորհուած զգայարանքը ունեցաւ այդ յուզումները սանձահարող իմացական խառնուածքին ու զանոնք թուղթերուն յանձնեց արուեստով մը որ քնարական է, այսինքն՝ հաղորդական: Անոր գործը խորապէս անձնական, նոյն ատեն մարդկային է (չեմ ըսեր գէշ բառը՝ համամարդկային) ինչպէս է արդէն նկարագիրը զինքը արտադրող ցեղին, այսօր արհամարհուած, կործանած, բայց կրելով սերմը իր անայց արգանդներուն խորը՝ մեծվայելուչ գեղեցկութեանց ու հսկայ նուիրումի: Անոր գործը վիրաւոր է ցեղին հանդէպ գործադրուած անկարեւիր անարդարութեամբ, որ հեգնութեան մը պէս կը սաւառնի անոր ամբողջ պատմութեան վրայ ու վերջին աղէտին հասաւ անըմբռնելի չափերու: Վերապահ է անոր գործը, վախկոտ, պիտի ըսեմ շիկնող՝ ինչպէս է զգացումը մեր հարսներու ծոցին ու ասով՝ արտայայտութիւնն է ցեղային քանի մը շատ գեղեցիկ տուրքերու: Մեր եկեղեցին, մեր երաժշտութիւնը, մեր գեղջուկներուն խոր, հաւատաւոր լրջութիւնը, մեր դաշտերուն քաղցրութիւնը ու մեր լեռներուն նրբաւարտ ճարտարապետութիւնը, բոլորը տրտում, կարմիր, սրտառուչ մշուշին մէջէն որ շամանդաղն է մեր ապրումներուն, ասոնք կան մեր ժողովուրդին ու Վահան Թէքէեանի տաղարանին մէջ:

Քառասուն տարիներու,—ու ի՛նչ տարիներ, դուք դժուար կը հասնիք անոնց պարագրկումին, քանի որ ատոնց վրայէն կը հոսի մարդկութեան գերագոյն ամօթը ու մեր ցեղին կէսին ողջակէզ բնաջնջումը— վրայ երկարող իր ջիղերը ժամանակին ծոցէն առին ահաւոր, անտարագելի զգայութիւններ, ինչպէս մեզի դժուար մերձեցող իմաստի փայլակներ, ծրարելով անոնց փունջը պարզ, խստակառոյց քերթուածներու խորը, որոնցմէ մէկ քանին կը հաւասարին մեր լեզուով իրացած ամէնէն քաղցր մեղեդիներուն իբր ձայն ու յուզում ու կ'անցնին զանոնք իբր իմաստի գեղաքանդակ տաճարներ, կաթողիկէներ:

Իր մէջն է Արեւելքը, ընդարձակ ու խռովիչ, իր կիներովը, հոտերովը, երանգովը: Նկարները՝ որոնց վրայ կը ծփան տրտմութիւն ու արիւնի գոլ: Ու ի՛նչ որ անոր անփոխարինելի թափանցումը կու տայ մեր ջիղերուն: Արեւելք մը, իմաստուն այնքան որքան Խայեամինը, հեշտայոյզ՝ որքան Թակորինը, խոր ու քաղցր՝ որքան մեր ժողովրդական երգերունը: Ու պատիւ իրեն, տարաշխարհիկ զգայութեանց ետեւէն արշաւին պակասը, պարագայ որ արեւմտեան քերթողներուն սեւեռածը կ'ընէ այնքան փնտռուած, բռնազբօսիկ ալ:

Իր մէջն է Արեւմուտքը, մտածման, լրջութեան, կառուցման տուրքերով՝ որոնք անոր քաղաքակրթութեան ողնասիւնը եղան ու ապականութեան, դրամին, ասոր կապուած նուաստութիւններուն, վճարովի յուզումին ու սառնասիրտ հեգնութեան միւս ստորոգելիներով՝ որոնք այդ Արեւմուտքը ծիրանեզեղ դժոխքի մը կը վերածեն: Արեւմո՛ւտքը, իր երաժիշտներովը, քերթողներովը, լրբութեամբը, դեղին ձանձրոյթովը, արուեստին ու իմաստութեան բազմաբեղուն աղբիւրներովը:

Իր մէջն է մեր ցեղին մղձաւանջը, կատարեալ այնքան որքան չվիճակուեցաւ մեր ծիրանափառ քերթողներուն, որոնք յոյսին վրայ գոցեցին իրենց սուինախոց աչքերը: Իր մէջն է անլուր ողջակէզը բոլոր այն գեղեցիկ խօսքերուն, երազներուն որոնց կը հաւատային մարդիկ տակաւին քսան տարի առաջ, երբ քաղաքակրթութիւնը չէր ենթարկուած անլուր ու ահաւոր փորձին:

Իր մէջն են մեր յեղափոխութիւնը, մեր վրիպանքը, մեր յուսաբեկումը՝ կարմիր ու հոծ սարսուռներով՝ որոնք մեր միսերը աքցանեցին եղբրական թուականէն առաջ. որոնք շարունակեցին տրորել ամէն հայու տղու հոգին օտարութեան ճամբաներու մէջ, հողէ ու տանիքէ զուրկ ամբօխի մը վերածելով ցեղ մը որ 3000 տարի վարսուած մընաց իր արտին ու գետնափորին, սպասելով, յարակամ, աննուաճ գէթ իր երազէն. որոնք այսօր, տարիքին մոխիրին տակէն կը շարունակեն դղրդել սիրտը բոլոր մեզի պէսներուն՝ ծեր ըսուելու իսկ անարժան, քանի որ

գերեզման չունինք մեր պապերու կողքին հանգչեցնելու մեր բազմախոց գլուխները:

Իր հետն են արուեստի ուխտաւորը կրունկ առ կրունկ հետապնդող աշխարհիկ արհամարհանքը, ուրացումը, որոնք հէքեաթին փուշէ պսակն իսկ չեն արժեր: Որոնք հասան անոր ազնուագգի զգայարանքներուն, մահուան տարրերու նման՝ բայց փոխուեցան անոր սրտին հոսումովը թանկագին մարգրիտներու, — աւա՛ղը որ ոստրէն մեռցնելու համար ճամբայ էր ինկած: Որոնք անոր ներչնչեցին բարութեան, ներողամտութեան, ազնուութեան այն քանի մը անմահ տաղերը, մեր մէջ անզոյգ, ու բաւական կատարեալ՝ մտնելու համար իմաստի մեծ տաճարներէն ալ ներս:

Իր մէջն են, այս ամէնուն արդիւնք, արիութիւն, հպարտութիւն, համեստութիւն ու հաւատք, սրբազան մշո՛ւշ, որով փաթթուած ան պիտի յօժարի իր ճամբուն, աւելի տխուր քան Գողգոթան, քանի որ, կը կրկնեմ, գերեզման չունի:

Ու, փոխելու համար,

Իր մէջն են մեր քաղքենին, մեր «ամօթական» տխրութիւնները, Նարեկացիին տարազը սրբագրելով. ըսել կ'ուզեմ մեր կողմէ բանաստեղծին հարկադրուած դանդաղ նահատակութիւնը, մատնանիչ ընելով բառին ընդմէջէն:

Իր արուեստը: Քիչ մը բարդ, արտաքնապէս յարդարուն բայց խորքէն տարօրէն պարզ ու պարկեշտ: Որ զերծ է Ջրաքեանի մը կամաւոր ռազմախաղերէն, ընտանի եղանակ՝ իմաստներու հասարակութիւնը փրկելու եւ փղշտացիները չլացնելու: Որ զերծ է դարձեալ Պարթեւեանի բռնի խոյանքէն, աղմուկէն ու փարթամ բարատէն*, որոնց կը

(*) — Շփեթ, ցուցադրում:

դիմէ մարդ ըսելիք քիչը բազմասարուած արարողութեան մը վերածելու փոյթով: Որուն տարողութիւնը պիտի աճի ժամանակին հետ, իբր ամէնէն ժուժկալ, անհռետոր իմաստնայեղց կառոյցը արդի աշխարհաբարին:

Իր թախիծը, լուրջ ու շնորհալի, զոր սեւ վերարկուի նման պտըտցուց ուստանէ ոստան ու վերածեց ճերմակ պատմութեանի:

Իր իմաստութիւնը, դառն բայց մարդկային, զոր զգուշացաւ քնարերգելէ, ռոմանթիք քարոզներու չարափոխելէ:

Իր ստոյիկութիւնը, ուրացուած մարդու, որ զինքը ամուր պահեց բոլոր պատրանքներուն դիակին վերեւ:

Իր աննուաճ կարօտը դէպի բարութիւն, գեղեցկութիւն, արդարութիւն, սէր, ու հայրենաբաղձ երազանքը մեր ազատութեան:

Իր միւս կարօտը, ծարաւը որով անիկա կանչեց ու կանչեց մեր միտքին մատչելի միակ բնազանցութիւնը, Մահը, իբր մեծ աւազան «ուր ամէն քան կը մտնէ ու կը ջնջուի»:

Իր Աստուածը որ սրբագրութիւնն է մահուան:

Ու վերջապէս՝

Իր քառսուն տարիները որոնց ամէն մէկին մէջ անհամար անգամներ հարուած ու խոց առաւ անոր սիրտը աշխարհին բախտաւորէն ու անբանէն, անզգամէն ու կեղծաւորէն, ու մնաց մաքուր, խաղաղ, սուրբի, նահատակի անցոյց, անօթի համեստութեամբը...:

Պէտք է կենալ սակայն:

Ասոնք հաստատումներ են որ գերեզմանի մը վրայ չեն փրաւորեր: Ու գերեզման է անիկա որ քառսուն տարի տառապելէ վերջը կը յիշէ Աւետարանին մէկ խօսքը. «Զի Մարդուն Որդին չունի տեղ մը իր գլուխը դնելու»:

Ինծի կը մնայ վերջացնել այս ողբերգութիւնը, կրկնելով հոս ալ իմ խորունկ սէրը, հիացումը ու յայտարարել:

— Խաղաղութիւն քու վրդովուած հոգիիդ:

Ու աւելցնել:

— Ապրեցար ու քեզի տրուած քանքարը չթաղեցիր հողին մէջ:

ԳԼՈՒԽ Գ.

Այս դասի մուտքին Վահան Թէքէեանի գործը ես զետեղեցի քերթողութեան պարունակին մէջ: Ըրի այդպէս, վասնզի զինքը ապագային հանող երեսը հող կ'ընդունիմ:

Ի՛նչ ողբերգութիւն է սակայն ճակատագիրը հայ բանաստեղծին որ քառասուն տարի իր խառնուածքին օտար, իր տաղանդին անարժան զեղումներու վրայ սպառեց իր կորովը: Այնպէս որ վիպողը, քրոնիկագիրը, հրապարակագիրը որոնք իբր գիծ զատեցի իր դէմքէն, չեն դիմանար վերլուծումի:

ա) — Վիպողը: Քիչ է գործը իրրեւ քանակ: «Բարձրավանք» հանդէսին մէջ անաւարտ վիպակ մը, «Արեւ» օրաթերթին մէջ «Եթէ Տէրը կամենայ» վէպը ու քանի մը ուրիշ տիալոկի էջեր կը կազմեն անոր վաստակը այդ ուղղութեամբ:

Անշուշտ այս գործերը անարժան չեն անոր տաղանդին: «Մարք Ֆուրթունի արկածը» հոգեբանական վերլուծման յաջող փորձ մըն է, որուն մէջ շահեկանութեան կեդրոնը նոր օրերու սիրական ինֆնագննութիւնը կը գրաւէ: Ըսելու, զիտելու նոյն զուսպ եղանակը:

բ) — Քրոնիկագիրը: 1880-1920 տարիներուն, մեր լրագրութեան ծաւալումին հետ կը զարգանայ նոր օրերու սեռ մը որ տարբեր է հրապարակագրութենէն: Արփիար եւ Տիգրան Արփիարեաններ, Հրանդ Ասատուր, Լեւոն Բաշայեան, Տիգրան Կամսարական, Արշակ Զօպանեան, Հրանդ,

Երուանդ Օտեան, Թլկատինցի, Զարդարեան, Տիկիններ
 Եսայեան ու Սիպիլ ու մեծ մասը մեր զրիչ շարժողներուն
 գրելու այդ ձեւին մէջ դրած են կարելի արուեստ ու
 զգայութիւն: Անիկա, բրոնզիկը, հաճելի, համով, քիչ մը
 կճան ու վայելուչ իբր կառոյց, օրուան եղելութիւնները
 կ'ազատագրէ լրագրական ցամաքութենէն եւ պատեհութիւն
 կու տայ որպէսզի իր վրայով, հանրային երեւոյթի մը
 ընդմէջէն երեւան գան գրողներու տուրքերը: Երգիծանք ու
 humeur*, խանդ ու քաշքշուք, սուր ու խոր դիտողութիւն,
 երբեմն բարոյախօսական թափանցումներ, յաճախ
 ընդարձակ զգայնութիւն կը միջամտեն որպէսզի այդ սեռը
 տարբերի Պէրպերեանի, Զերագի, Մամուրեանի, Եղիայի
 գուտ գրքունակ յօրինումներէն: Գրիգոր Օտեանով սկսած
 այս համեստ սեռը անշուշտ չհասաւ բացառիկ բարձրու-
 թեան: Բայց հոն է խտացած մեծ չափով արուեստի տարր:
 Վահան Թէքէեան ոչ աւելի, ոչ պակաս է իր սերունդէն:
 Դիտողութիւն մը:

Մինչ Զոհրապ մը, իր «Ուղեւորի էջերով» պատեհու-
 թիւնը գտաւ իր տաղանդին ամբողջ տարողութիւնը ճշգրելու
 ու արեւելքին ու արեւմուտքին խառնուրդը մեր մօտ կարե-
 լի յստակութեամբ մը յանձնելու թուղթին, Վահան Թէքէ-
 եան չունի վճռական էջ մը ուր մեզի տրուէր հաճոյքը իր
 մտածողութիւնը իր խորքին մէջ կերպաւորուած տեսնելու:
 Առաւելապէս իմացական երեւոյթներու շուրջ այդ քրոնիկ-
 ները ունին սակայն դատումին սրութիւնը, պայծառու-
 թիւնը, անկախութիւնն ու անկեղծութիւնը: Այնպէս որ,
 մեր օրերու միւս կարեւոր ստորոգելին որ որքան յաճախ
 կ'ընկերանայ վիպողին, թատերագրին, քերթողին, ըսել
 կ'ուզեմ՝ ֆննադատութիւնը, իր մօտ ապաստանած է
 քրոնիկին:

գ) — Հրապարակագիրը: Մեծագոյն իր զբաղումը:

(*) — Սրամտութիւն, գուարբախտութիւն:

Վարած է Շիրակ հանդէսը, երկու անգամ, Պոլիս ու Գահիրէ: Խմբագրած է Հայրենիք (Շահնապարինը-1909), Ժողովուրդի Ձայնը, Արեւ օրաթերթերը: Եթէ այս գրողումներուն վրայ աւելցնէք ազգային երեսփոխանի, ուսուցիչի, կուսակցական գործիչի իր միւս հանգամանքները, կ'ունենաք իր դիմագծութիւնը ամբողջ: Այս վերջիններով հետաքրքրուիլը դուրս է այս փորձին սահմանէն:

Վահան Թէքէեանի մէջ հրապարագիրը ենթակայ է՝

ա) — Իր իսկ տաղանդին ննշումին: Քերթողական, հետեւաբար անհատապաշտ իր խառնուածքը շատ դժուարաւ մերձեցման եզր մը պիտի ճարէր զանգուածին հետ որ կը պահանջէ հաւաքական, հաստ, առօրեայ մտածում, իմաստութիւն: Նուրբին, խորունկին, հազուադէպին դժբախտ աշխատաւորը հարկին տակը եղաւ ամէն օր ինքզինքը փշրելու, հասնելու համար այդ պահանջին:

բ) — Մեր հրապարակին, որ բախտին տարօրինակ մէկ տրամադրութեամբը իր խմբագիրէն կը պահանջէ ամէն բան: Ամէն օր խմբագրական գրելը սովորական մղձաւանջ մը չէ մարդու մը համար որ ատոր վախը չունի. խօսքին, մտածումին կշիռը չունենալուն: Մեր բախտը կ'ուզէ որ մեր թերթերը ձեւուն եւրոպական մեծ ազգերու կազապարներէն, բայց մեր կեանքը ըլլայ գուրկ անոնց ընդարձակութենէն: Ի՞նչ ունի ըսելիք մեր խմբագիրը ժողովուրդի մը որուն հանրային գործունէութիւնը եկեղեցիին ու դպրոցին շրջանակն իսկ չի կրնար լեցնել:

գ) — Մեր նորագոյն պատմութեան, ուր գրիչը այնքան քիչ դեր ունեցաւ:

Ասոնցմէ անկախաբար անիկա եղաւ հաւատարիմ իր խղճատանքին: Սուտ չըրաւ երբեք: Չշողոքորթեց: Չվախցաւ ազնիւ «չուքերէ» ու մեծ համբաւներէ: Արտայայտեց իր մտածումը երբ համոզուած էր ատոր ճշմարտութեամբ: Պոռաց իր գայրոյթը միջակապաշտութեան դէմ որուն թաթը իջած էր անոր ալ օձիքին...: Ու պատժուեցաւ:

Անիկա վեր է խմբակցութեան մը ծառայել կարենալու սովորամտութենէն:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՎԱՀԱՆ ԹԵՔԷԵԱՆ
ԵՒ ԻՐ
«ՀՐԱՇԱԼԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ»Ը

*Մտնելէ առաջ Պ. Թէքէեանի գործին վերլուծմանը մէջ,
կը ներկայացնեմ քերթուածներ, առնուած գիրքին զանա-
զան տեղերէն. —*

ԱՆՏԱՌԻՆ ՄԷՋ

Ես կը նանչնամ անտառին մէջ ուր գարուն է,
Ձոր մը պզտիկ, ձոր մը ծաղկած, ուր երիցուկ
Եւ շուշաններ ձիւն կը տեղան, ուր կ'արիւնէ
Կարմիր հարսնուկը շիթ առ շիթ վերք մը ծածուկ...:

Մանուկ գարնան ան օրրոցն է հոն կարծես...
Երկու նկուն ուռնիներ՝ մէն մի ծայրին,
Թեքի հովին տակ կ'երեքան երբ յամրապէս՝
Ժանեկապատ ձորակն օրբիլ հոն կը թըլին...:

Եւ հոն, տեսէ՛ք, երկու մանուկ, ուրկէ՞ եկած,
Անտառին ո՞ր երկու մուտքէն հանդիպակաց,
Կը կամրջեն ձորը սերով մը լըռակեաց...:

Երկու մանուկ օրրոցին վրայ գարնան
Իրենց անքիծ սէրը կ'օրրեն...: Օ՛հ չնանչնա՛ն
Տերևաքափն եւ տրամուրիւնն իր անսահման...:

Ուրիշ մը՝

ԱՂՈՒՈՐՆԵՐԸ

Աղուորն ա՛ն է յաւիտեան՝ որ անցաւ օր մը քովէդ
 Եւ աշուրներդ օծեց, աստուածային այցելո՛ւ,
 Գեղեցկութեամբ մը որուն ա՛լ չըդարձար նայելու,
 Եւ չուզեցիր հանդիպիլ անոր անգամ մըն ալ գէթ...:

Աղուորն ա՛ն է տակաւին, յաւիտեանէ՛ յաւիտեան,
 Որ նայուածքիդ արեւին տակ կը մեծնար յամբօրէն,
 Որ գերդ ծաղի՛կ մ'օրօրուող գարնան անոյշ հովերէն,
 Երբ մեկնեցար՝ մտքիդ մէջ մընաց միշտ թարմ, մի՛շտ
 քուրեան...:

Եւ աղուորը — դուն գիտես օրհնեալ անո՛ւնը անոր —
 Անկիա՛ է՝ որ կարծես պիտի կրնար քեզ սիրել,
 Որ սերդ անշուշտ գուշակեց եւ ըսպասե՛ց ակընկոր,

Որուն սակայն լաւ է որ չուզեցիր սի՛րտը խռովել...
 Աղուորն անո՛նք եմ միայն՝ որ տեղանքիդ ընդմէջէն
 Անցան գացի՛ն ու հիմա քեզ հեռուէ՛ն կը կանչեն...:

Ուրիշ մըն ալ՝

ԵՐԿՈՒՄԱՀԵՐ

Ես այս երկու մահերն ալ, ո՛վ Տէր, սիրով կ'ընդունիմ...
 Կա՛մ ունենալ գիւղական խրճիթ մ'ուր սէրը տիրէ,
 Շարժի՛լ շունչին մէջ կընոջ մ'ու գիրքերու մըտերիմ,
 Եւ իրիկուն մը մարի՛լ շրջապատուած վարդերէ...:

Եւ կա՛մ յանկարծ վըրայէս անցնող հովէն մարտագոռ՝
 Տարուիլ դաշտե՛րը կռուոյ, վըրիժաբորբ, հըրաչուի,
 Թափելով մերկ սուսերիս ծայրէն վերքեր բիւրաւոր,
 Եւ իյնալով անոնց մէջ՝ գերդ անկողնո՛յ մը վարդի...:

Օ՛հ եթէ կեա՛նքս եղաւ պարտեզ մը զոր ոտնակոխ
 Ըրին դիպուածն ու ահեղ ճակատագիրը դժխեմ՝
 Գոնէ քոյլ տո՛ւր, Աստուած իմ, որ ելֆն անոր ե՛ս ընտրեմ:

Այս քերթուածները ընդհանուր ձեւի մը տակ կը ներկայացնեն Պ. Թէքէեանի գիրքին մէջ ցրուած, ճիւղաւորուած հոգեկան այն կացութիւնը որուն սեւեռումը հետապնդած է բանաստեղծը իր միջոցներով:

Թերեւս քիչ մը կամայական ըլլայ պարզեցումի այս աշխատանքը քննադատին մօտ որ սակայն իր տպաւորութիւնները կը սիրէ միշտ պտտցնել քերթուածէ քերթուած, շեշտերու նոյնութենէն, գոյներու հանգիստութենէն, պատկերներու նման կտորներէն ջանալով վերանալ, հասնելու համար քանի մը մեծ ու վճիտ նկարներու վայելքին:

Թէքէեանի գործին մէջ այդ տեսակէտէն, կարելի է հանդիպիլ բնութեան պատկերներու, երբեմն առանձին, միմիայն աչքին համար կենդանի, երբեմն ալ խառնուած բանաստեղծին, ներքնապէս, նուրբ ու հազիւ նշմարելի գիծերով:

Այդ գործին մէջ կը փչէ նորէն հովը մեծ, տիրական զգացումի մը, որ էջէ էջ կը թռի, հարցումի, տարակոյսի, զգլխումի ու խորունկ կսկիծի փայլակներով լուսաւորուած: Զայն կը տեսնանք, իր վազքին թեթեւութեանը մէջ վիրաւո՛ր, բայց անկեղծ, բայց իրական ու համակրելի: Կնկան զգացումն է ան:

Այս երկու գլխաւոր երակներէն դուրս կայ Պ. Թէքէեանի մօտ անխուսափելի ազգայնականութիւն մը, որ յաճախեց մեր բոլոր բանաստեղծներուն հոգին՝ քսան տարիներէ ի վեր, երբեմն տալով անոնց գործին հզօր զեղեցկութիւն մը, հայկական տռամին արիւնէն առաջացած, բայց շատ անգամ ալ իջեցուց զանոնք հռետորական հրահանգներուն ողբալի միջակութեան:

Դարձեալ Պ. Թէքէեանի գործին մէջ կան զանազան պիտակով քերթուածներ, կայ մտածման բանաստեղծու-

Թիւնը անշուշտ գեղջուկ խորքով, կայ վարդապետական
գնացքով քերթուածը, երկայն տողերէն սարուածին մէջ
լրջացած ու խոժոռ:

Գործին այս ամփոփ տարբադադրութիւնը մեզ կը դնէ խառնուածքի մը առջեւ որ այնքան ալ անդատ չէ: (Սիւսմանթօի գործէն երակ մը միայն ձեռք կու գայ):

* *

Թէքէեանի գործին մէջ բնութեան տեսարանները կը ներկայանան չբեղուլեամբ մը որ ժուժկալ է շատ անգամ: Անոնց շրջանակը գրեթէ միշտ հնչեալն է, քնարերգական գեղումներու համար շատ նեղ. անտեղի ընդլայնումներու, հանճարեղ շեղումներու անընդունակ այդ անկիւնէն բանաստեղծը կը տեսնէ:

Գաղջ իրիկուն՝ ձմեռուան դեռ...:Փողոցեն՝
Ուր ըստուերնեբը կ'երկարին դուռն է դուռ,
Դանդաղաֆայլ կ'անցնին մարդիկ...: Ժամը լուռ
Լապտերնեբը՝նն է որ մութը կը խոցեն...:

Ահա ուրիշ իրկուէն մը՝

Ձըմեռ գիշեր...: Լուսինն, ինկած գեմիթեն
Փողոցներում կ'օժէ փարերը լոյսով...
Ցանցառ ու ջիմջ աստղերը սառ կը կաթեն...

.

Ուրիշ իրկուան մըն ալ՝

Լուռ իրիկուն միապաղաղ դաշտին վրայ,
Ճերմակ ծառեր կը խոնարհին մինչև գետին
Դեպի ֆաղաֆ նամբան անհետ կը ֆնանայ...
Վերադարձող կուսութեան ի՞նչ մըն է յետին...:

Ահա իրիկունի պահեր: Անոնք դիտուած են տարբեր պայմաններով, տարբեր տարողութեամբ աչքերու կողմէ: Բայց անոնք իրենց կտրուածքին (coupe), յարդարումին եղանակովը, իրենց իրականացուցած նկարին ձեւովն ու խորքովը, իրենց արթնցուցած զգայութիւններուն տեսակովը չեն հեռանար իրարմէ:

Հանդարտ, համակերպող նայուածքն է անորը. որ իրերուն վրայէն կ'առնէ կարգ մը գիծեր, կարգ մը գոյներ, գրեթէ վախով, միշտ զգուշ մնալով իր հպումներուն մէջ, հոգ տանելով չծանրանալու երկրորդական մանրամասնութեանց բեռէն: Դարձեալ, այդ տարրերը իրարու կը բերէ ան շատ թոյլ կապերով, գրեթէ խուսափելով զանոնք ամուր սեւեռելու թէքնիքէն որ պառնասեաններունը եղաւ: Տողերը իրարմէ կը բաժնէ լայն միջոցներով, կախման կէտերով որոնք անոնց մէջ բաւական լոյս ու ինքնութիւն կը դնեն:

Արուեստի այս եղանակը անշուշտ կամաւոր ու գիտակցուած պակասութիւն մը չէ:

Պ. Թէքէեան իր խորքին մէջ խորհրդապաշտ բանաստեղծ մըն է, որ սակայն չէ ազատած պառնասեաններուն տիրական ազդեցութենէն:

Իր պատկերներուն կը պակսի մշուշը, վեհագոյնին (grandiose) համեմատութիւնը, փոխաբերութեանց ու այլաբանութեան փոթորիկը. տարրեր որոնք առաջին յաճախումի մը իսկ բարձրադադակ կը յայտնուին սէնպօլիսթ բանաստեղծին մօտ:

Միւս կողմէ անբացատրելի տաքութիւն մը որ բառերը կը պարուրէ. կարճ ըլլալու, բռնի հատկըտուն մնալու ջանքը որ կ'ընդնշմարուի իր քերթուածներուն մէջ. թելադրական դառնալու իր ձգտումը որ տեսիլքները կը վարագուրէ, զինքը կ'ընեն թերի պառնասեան մը:

Թէքէեանի համար դժուար է առարկայական մնալ, որքան դժուար է իրերէն դուրս, անոնց վերեւ, երեւակայութեան ուժովը իր հոգին կամարել:

Ես մէջ կը բերեմ՝

ԳԵՂՋԿԱԿԱՆ

Պզտիկ տուններ հեռո՛ւն ինծի կը ժպտին...
Գիւղ մ'է՛ թաղուած մեծ ծառերու շուֆին տակ,
Անտառախիտ լերան մը կո՛ղը ետին
Եւ առջեւէն հոսող ջուրով մը յստակ...:

Եւ կը խորհիմ... Ե՛ս այդ գիւղին բընակիչ,
Մեմաւորիկ եւ մոռցըւած հոն կ'ապրիմ,
Հոգիս յանձնած իր անդորրին ամոքիչ,
Հովին, հողին եւ ծառերուն մըտերիմ...:

Ի՛նչ անոյշ է գիշերն այնտեղ բընանալ...
Կեանքն հոն կանո՛ւխ, արշալոյսին կը սկսի.
Մըշուշաւօղ հեռուի լեռն ու դաշտն ալ
Յօրանջելով ոտքի կ'ելլեն մեկուսի...:

Առուակն այգուն կ'ըսէ աղօ՛թք մը կարծես՝
Ալեակներուն համբիչն անվերջ փաշելէն.
Կը բուրվառեն ծառի ճիւղերն, եւ անտես
Ճըպուռներն ալ առուակին դէմ կը բռնեն...:

Օ՛ր անոնցմէ, որոնք մէկ-մէկ կը բանան
Արեւին հետ դուռը իրենց տընակին,
Որոնց միտքը թերեւս հողէն ալ խոպան՝
Սակայն հարուստ, քարի ու պա՛րզ է հոգին,

Անոնցմէ մէկն ալ ջինջ առտու մը հարկաւ
Կը դարձընէ փողցըր նայուածքը վըրաս,
Եւ դիպուածաւ իր լոյս ժըպի՛տը անքաւ
Ինձ կը նետէ՝ ինչպէս միրգ մը նորահաս...:

Անո՛ր, ո՛վ Տէր, լուսաբացի այդ պահուն,
Ես ալ հոգիս ի վեր ընծայ կը դրկեմ,
Եւ օրերուն վըրայ առկախ, օրօրուն՝
Կը տեսնեմ միշտ անոր պատկերն այգադէմ...:

...Օ՛հ այն գիւղը՝ մեծ ծառերու շուփին տակ,
Որում, ո՛վ Տէր, ես ըլլայի բընակիչ·
Ան քայլերու ըլլար սահմա՛ն բովանդակ,
Հոնկէ ի մա՛հ ընթանայի քիչ առ քիչ...:

Այս զմայլելի խաղաղութիւնը, առարկաներուն այս որոշ սակայն կապոյտ մշուշի մը մէջ նրբացած, երազացած շրջագիծերը, ու անոնց մէջ բարախող հոգիի մը շունչը, որ ներքնապէս կը շաղկապէ ծառերուն շուքը ու ալեակներուն համրիչը, Պ. Թէքէեանը մեր մէջ, համեմատութիւնները պահելով, կը նմանցնեն Վէուէնին:

Հրաշալի Յարութիւնը առատօրէն ունի այն նկարներէն որոնք կ'իրականանան մէկ երկու տողի մէջ, առանց ճիգի, իրենք իրենց վազող բառերով, պահելով անհրաժեշտ աղերսը որ զանոնք կը կապէ հոգիին խուսափուկ վայրկեաններուն հետ:

Թէքէեանի գործին մէջ կնկան զգացումը առանձին չէ միշտ: Ան կ'այցելէ բանաստեղծին առանց ինքզինքը յայտնելու. փողոցի մը անկիւնը, որուն վրայ արեւը ճերմակ է դրեր. սենեակի մը քառակուսիին մէջ որ կը կարմրի լամպի մը արիւնէն. անտառի մը սիրտը, ծանրօրէն տրոփող՝ թրթռուն վերջալոյսի մը տակ:

Սէրին երգը անսանձ, կատաղի հոսանք մը չէ անոր մօտ: Փափուկ, ցած ձայնով մնջուած, երգ ըլլալէ աւելի դաշնաւոր հեկեկում մըն է, ու ատոր համար իսկ սրտառուչ:

Բանաստեղծը մեղմ բառերով կը մօտենայ անոնց, որոնք չգիտցան «իր սրտի խորանին վրայ ծխուող խունկ»ը, որոնք «իբրեւ առեղծուած» մը զայն տեսան: Անոնց հանդէպ պահանջկոտ չէ. վասնզի կը ճանչնայ կիները, առած է ինչ որ կրնային տալ եւ

... Իրենցմով հիմա շէն է ամային:

Գիշեր: Սիրածին յիշատակը գաղտնաբար ետ կը դառնայ: Անոր պատկերը կը թրթռայ բանաստեղծին աչքերուն մէջ, ու անոր շունչը քաղցրութիւններ կը

*վազեցնէ իր երակներէն: Ու բանաստեղծը երեսին վրայ
անտես մատներուն նուազը կը զգայ:՝ Ու կը շարունակէ
ըսել՝*

Ետ կը դառնան մի առ մի մեր հին ժամերն անկորուստ,
Կարաւանին հետ աստեղց անոնք կու գան վերըստին
Հոգիս փարախն է բացուող ընդդէմ իր քաղցր հոտին...:

Յիշատակովդ, այս գիշեր կը զգամ այնչափ զիս հարուստ,
Այնչա՛փ բարի, երջանիկ...որ զըթութեամբ մը անհուն՝
Կը մտածեմ գայն բաժնել երկրի բոլոր խեղճերուն...:

*Կ'ուզէ՛ր ճանչնալ տարիքը անոր որուն յիշատակը
այդքան քաղցրութիւններ գիտէ բերել, որուն խորհած
ատեն բանաստեղծը Աստուծոյ մը չափ մեղմ ու անուշ կը
դառնայ.*

Նուրբ ինչպէս փող մը սաթի եւ ինչպէս մուշկը՝ բուրեան,
Մարմինն ամբողջ հոգի էր եւ աչուրններն ամբողջ շունչ.
Կը տեսնէիր իր տարիքը գերդ թոշուն մ'ուսին վրան.
Միւռնագոծ դեռ այտեր եւ սրբողորկ ունէր դունչ,

*Ու երազի այս դիմաստուերը կը պտտի գրքին մէջ: Անոր
կը հանդիպինք՝ հանդարտ արդուզարդին մէջ մեղամաղձոտ
ու աղուոր: Ու իր գեղեցկութիւնը չի կերտուիր վերա-
դիրներուն թուղթէ ճերմակութեամբը: Աւելի՛ իր մար-
մինին դաշնակութիւնը, իր քայլերուն նուազը եւ իր
շունչին մեղեդին է որ կը տպաւորէ մեզ: Իր խենդութեան
պահերուն բանաստեղծը կ'իջնայ անոր վրայ*

Զերդ տատրակ մը զանգակատան քարձուցէն.

- *զայն կը մերկացնէ, կը գտնէ անոր անութները, կողերուն
փայփայող ու սնդուս մորթը, կը փարի անոնց ու կը
շարունակէ իր գգուանքը*

Երկարօրէն, վախկոտօրէն... մինչեւ հո'ն
Ուր կը սարսի, կը տապալի կիսանդրիդ
Կուրծքիս վրայ, եւ կ'ունկընդրեմ՝ երգեհո'ն
Մարմնիդ հեւոտ խոր նուագին հեշտառիք...

Սրունքներուդ ողորկ ու պինդ սիւններուն
Թեւեռս իրրեւ դափնեպսակ կը փաթտեմ,
Ու դնելով նակատըս գիրգ լանջքիդ դէմ՝

Կը զգամ ուսիս վրայ՝ ինչպէս ոլորուն,
Աղուամագէթեթեւ, ներմակ կարապի
Քու պարանոցդ՝ որ հոն յոգնած կը պտկի...:

Բոլոր այս քերթուածներուն մէջ քնարերգութիւնը կը մնայ շատ զսպուած, շատ տնտեսուած զգացումի մը ժուժկալութեանը մէջ: Այս պարագան չորութիւն մը չէ սակայն, վասն զի կիներուն մօտենալու, զանոնք վայելելու, անոնցմով գինովնալու ձեւերը վերջ չունին: Կը բաւէ հաստատել միայն թէ բանաստեղծին մատները հարկ եղած սարսուռը կը քալեցնեն երբ կ'իյնան անոնց «մէջքին չուրջը», անոնց «ազդրերն ի վար իրենց սահանքին մէջ»:

Բայց ահա ուրիշ դրուագ մը: Ամէնուս ալ պատահած է տեսնել զայն, խորհուրդի մը չափ հմայիչ այդ քերթուածը որ Արեւելքի մէջ միայն կը բուսնի.

Միակըտուր սեւ-անփայլ մետաքսն ամբողջ զինք ծածկած
եւ քայլերուն մետաքսէ խոր շրշիւնո'վը թեթեւ՝ .

Որ ազդրներուն քնարին կարծես նըւա'գն ըլլար ցած,
Կ'երթա'յ Հանըմն՝ յուզելով մուշկի ալիք մ'իր ետեւ...

Ժանեկայորդ թեւէն դուրս կը քղի ձեռքը պզտիկ՝
Զոր նախանձոտ սեւ ձեռնոց մը կը պահէ կիսովին,
Մինչ ուղղանկիւն նակատէն ինկած ֆօդն ալ լուսանցիկ,
Ծանրածարիր աչքերուն կ'անթեղէ հուրքը խորին...:

կամուրջին վրայ, յորդագեղ վերջալոյսի մը ներքեւ,
կ'երթայ Հանըմը այսպէս, հորիզոնէ հորիզոն,

կ'երթա՛յ Հանըմն՝ անմատոյց, փոթածածուկ, հոյածեւ,
կի՛ն կամ ոգի, պահ մ'նլած պալատներէն Պոլիսի,
Պոլսոյ Ոգի՛ն, խուսափուկ, անգննելի՛, սխրալի՛....:

*

* *

Պ. Թէքէեանի մէջ ազգայնական քերթողը անակնկալ մը չէ: Մեր գրագէտներէն շատ քիչերը միայն կրցած են պահել իրենց հաւասարակշռութիւնը հանդէպ այն արհաւիրքին որ մօտաւորապէս քառորդ դար սաւառնեցաւ մեր երկրին վրայ:

Տաղանդաւոր բանաստեղծներ մօտեցան անոր ու անոնց գործէն որոշ մաս մը հասաւ իրական մեծութեան: Դժբախտաբար, ուրիշներ ո՛չ նուազ տաղանդաւոր, տուժեցին այդ նախնիքի քնարերգութիւնը փորձելով:

Այս վերջիններէն է Պ. Թէքէեանը:

Զեմ ուզեր երկար զբաղիլ Թէքէեանի հոգիին այդ երկրորդ երեսովը: Արդէն իր խառնուածքին, հակումներուն բերումովը, իր մտածող, վերապահ մարդու հոգեբանութիւնովը ան օտար մըն է այդ գետնին վրայ: Մեր կարողութիւնները սահմանափակ են: Ուզելով զանոնք լայնցնել, տարածել ներկայէն դուրս անցեալին ալ վրայ, արտակարգ յանդգնութիւնը կը դիմաւորենք հազուադէպ ուղեղներուն:

Իր զրոյցները, իր տաղերը, իր վրէժը, իր կռիւները, իր բարկութիւնը, իր գեղօնները զիս անտարբեր կը թողուն, վասն զի հոգ հաւատարիմ չէ եղած իր զգայնութիւնը որ կնկան ու բնութեան տաղերուն մէջ անուշ հեշտանքը ծորեց խուսափուկ նրբութիւններուն:

Բայց նորէն, արդար ըլլալու համար, պէտք է աւելցնել որ
 Պ. Թէքէեան կրցած է զատուիլ ընդհանուր արահետէն, որ
 արիւնի ու կրակի մէջէն կը քալէ եւ որուն վրայ մեր
 բանաստեղծներուն ողբերը կամար կը նետեն, գտնել
 գաղտնի շաւիղներուն տխրութիւնը ու անոնց ստուերին
 մէջ ըսած է քանի մը պարզ ու սրտի խօսքեր: Յեղափո-
 խական գրկանութեան տուած ամբողջ շքեղանքին,
 փաղփոլն պատկերներուն եւ արիւնավառ տեսիլներուն մէջ
 քիչ կայ հատուած որ զաղափարին բարձրութեամբը, ձեւի
 նորութեամբը, թելադրած խռովքին քաղցրութեամբն ու
 արթնցուցած յուսահատութեան խորութիւնովը հաւասարի
 «Գեղօն Սօսեաց անտառին» քերթուածին:

Հայոց երկրին մէջ մի՛շտ կ'ապրին
 Մեծ սօսիներն արմէնաւանդ...
 Եւ լռութեանն ու ըստուերին
 Մէջտեղ անոնց՝ անարգաւանդ
 Օրէ մը ետք քերթոյն երբ խանդ
 Ու ներշնչում խնդրել կու գայ,
 Խրոնվայոյզ միւղերն աստ անդ
 Կը փսփրսան.— «Դո՛ւն ես, արքա՛յ...»

Կ'անցնին, կ'անցնին օրն ու տարին
 Հալածական...: Դաշտ, դարաւանդ
 Եւ լեռներուն ալ կատարին
 Զիւնը մաքուր գերդ աղամանդ
 Կը կըրեն հետքն անոնց հիւանդ,
 Ծանր քայլին...: Մինչ հոս հսկայ
 Ծառերն, յոյսով մի՛շտ անվկանդ՝
 Կը փսփրսան.— «Դո՛ւն ես, արքա՛յ...»

Սեւ աղէտի մը նախօրին
 Անտառն յուզուած է մանաւանդ,
 Եւ տխրութեամբ սօսիք կ'օրրին...
 Օ՛հ, թշնամոյն ըստուե՛րը ժանտ.
 Տունե՛րն, հիւղե՛րը քարուքանդ...

— Բայց մինչ քառուտքը կը սըգայ,
Ահա ձայներ անհրճազանդ՝
Կը փսփրսան.— «Դո՞ւն ես, արքա՛յ...»

205

Իշխա՛ն, անյայտ դեռ քու անուանդ
Հայորդիները ապագայ
Ուխտած պաշտում մը մոլեռանդ՝
Կ'աղաղակեն.— «Դո՞ւն ես արքա՛յ...»

Անշուշտ շատ բան կը պակսի այս տողերուն, անոնց
աղքատութիւնը, գունաթափութիւնը, գնացքի դանդա-
ղութիւնը չեն փախչիր ամէն դիտողէ. ասոր հետ մէկտեղ
անոնք կ'իրականացնեն մեր երազին կաղապարը, պա՛րզ,
ճիշդ եւ յուսադրիչ ձեւով մը:

*

* *

Պ. Թէքէեանի գիրքը լեցուն է ուրիշ շարք մը քեր-
թուածներով: Ասոնք զանազան պահերու տպաւորութիւն-
ներ են, պատահական ազդակներու ներքեւ արթնցած,
վայրկեանի մը թռուցիկ կենդանութեանը մէջ յղացուած:
Բանաստեղծին ներքին անգիտակցութիւնը կը բացակայի
անոնց շատին մէջ: Կը զգաս որ իր հոգին ակօսող այդ
յուզումները շատ տարտամ, քիչ խորացուած գիծերէ կը
փրթին ու անոնց արտայայտութիւնն ալ մեզ կը շահագրգռէ
միմիայն ձեւական հրապոյրէն:

Այդ քերթուածները անյաջող են. վասն զի անոնք զգա-
ցում համադրելէ, գոյներ սեւեռելէ աւելի՝ հակումներ
կ'ուրուագրեն, չբացատրուող միտումներ դէպի մահը,
դէպի խորհուրդը, դէպի տեսիլները, չըջանականեր որոնք
իրենց կեդրոնը չունին բանաստեղծին սիրտին մէջ: Բայց
անոնք նորէն մեր կեանքին եղկելի միջակութիւնը խռովող,
քիչ մը թրթռում բերող դրուագներ են:

Ու անուշ բան է գիտնալով խարուիլը: Արուեստագէտը իր բաժակը կը բռնէ տպաւորութեանց անձրեւին դէմ: Շատ անգամ անձրեւը ժլատ է ու սպասելու առաքինութիւնը միշտ ուժով չէ մեր մէջ: Մենք բաժակը կը պարպենք յաճախ ժամանակի հաշիւով, պատրուելով իրական ծանրութեան վրայ: Տխուր է անշուշտ երբ բաժակին տակ թել մը բան միայն կը գտնենք:

Այսպէս Կասկած, Վեռլէնին, Շոքէնի մահաֆայլերգ, Ծերութիւն, Անկարեկիր քնարը, Հրայրֆի պահեր, Հեծեծանք, Ներկան անապատն է, մեծագոյն մասը Տաղերուն, ոտանաւոր են միայն, աւելի կամ պակաս յաջող ձեւերով եւ որոնք շատ անորոշ բաներ կ'ըսեն մեզի:

Դարձեալ պիտի չուզէի Թէքէեանի այդ երեսին վրայ ծանրանալ, վստահ ըլլալով թէ իր թարթափումները այդ մարգերուն վրայ անկեղծ խուզարկութիւններ են, զերծ թաքուն մտադրութիւններէ եւ ատով իսկ արդարանալի, հոգ չէ թէ այդ փնտռումները զինքը չառաջնորդեն բարձունքներ:



Թէքէեանի լեզուն իր առաւելութեանց մօտ ունի որոշ թերութիւններ:

Գրաբար հոլովներ, ռամկութիւններ (տեսնել Գայլին հսկումը, էջ 100, վերջին տողը), անճաշակ ու բռնազբօսիկ կերտով բառեր (համբուրասով, սիրացան, եւ ուրիշներ), կամաւոր մթութիւններ (Մտածումս, էջ 56, առաջին քառեակը), քերականական անճշտութիւն (հիմա նորէն Մէկ փափաք ՄԸ ունիմ ալ) կ'երեւան իր մօտ:

Ասոնցմէ դուրս, արուեստի տեսակէտէն իր լեզուն կը մնայ միշտ ընդունակ կատարելագործուելու: Մեծ հանդարտութիւնը որ մթնոլորտն իսկ կը շինէ իր բանաստեղծութեան, կ'ենթադրէ խղճամիտ աշխատանք ձեւին իրականացումին մէջ: Ինք հզօր զգացումէ մը չէ մտրակուած, բուն քնարերգութիւն մը չէ կրակած զինքը: Իր պտոյտ-

ներուն մէջ հանդիպած է իր քերթուածին ու զանի պչրանքով իր տունը տարած է:

Վայել արդուզարդը մենք կը փնտռենք անոր վրայ: Ատիկա ցանկութիւն մը ըլլալուն չափ պահանջ մըն է մեր մօտը: Եթէ երբեք յանգի համար հագցուած ածականներ ցանցառ են, արձակունակ է սակայն իր տողերուն սանձարձակ փաթթուքը արդէն տկար պատկերի մը երկայնքին, ինչպէս հոս,

Ա՛յսչափ ետքը՝ հիմա նորէն, ո՛վ Աստուած,
Մաքուր սիրոյ մը յոյսն ինձի ներելուդ,
Այս նառագա՛յթն իմ դժոխքիս մէջը մութ
Երկարելուդ համար վերէ՛ն՝ նեղ բացուած

Շընորհներուդ պատուհանէ՛ն.— քեզի փա՛ռք
Եւ օրհնութի՛ւն.

Թէքէեանին մէջ ոտանաւորը շատ ամուր կերտ ունի բառական հիւսքի տեսակէտէն: Իրարու ետեւէ շարունակուող խիտ տողեր, շատը հայկական ըսուած ծանրատաղտուկ չափէն, որոնք մտածումը կամ պատկերը կը հալածեն, իրենց յաճախումովը վերջ ի վերջոյ կը յանգին միօրինակութեան. բանաստեղծի մը էն քիչ ներուած թերութեան:

Ինչո՞ւ կը կարգանք զանոնք: Մենք առաջուց գիտենք թէ անոնք մեզի բան չեն սորվեցներ. վստահ ենք թէ անոնք մեզ պիտի փոխադրեն տափակ, հետեւակ իրականութենէն տարբեր, նոր քօլօրիով, նոր սարսուռներու ոլորտի մը մէջ: Ու մեր տեղափոխութեան պատրանքը կատարեալ կ'ըլլայ միայն ա՛յն ատեն, երբ անոնք մեր շուրջը ստեղծեն այն տարտամ մեղեդիին, անբացատրելի նուազը որ անոնց բառերուն ազուցուածքէն կը բխի:

Մեր բանաստեղծութեան մէջ վերանորոգումի փորձ է եղած 90էն ետքը՝ պատկերներուն գետնին վրայ: Մեր իրապաշտները չեն իսկ անդրադարձած մեղեդիին աւագ կարեւորութեան վրայ: Ազատ Բտանաւորը շուտով իջաւ անտաղանդ քերթողներու սրբապղծումին:

Մեր քերթողական չափը կը մնայ աւելի քան երբեք խիստ ու վարդապետական: Ու կը զարմանամ թէ ի՛նչպէս չենք փնտռած անոր ծագումը մեր մէջ: Ան օտար կ'երեւի:

Ժողովուրդի բանաստեղծութեան մէջ հատկըտուն, թեւաւոր, ազատ է այդ չափը: Ան մեր շարականներուն մէջ կը ծփայ ոսկի երիզի մը նման, ծայրայեղ հոսանուտութեամբ մը, հետեւելով երկինքներու համերգին, դաշնաւորուելով անոր զարկին, նուաղումներուն ու ցայտքներուն հետ:

Միջին դարու երգիչները բառերուն տարողութիւնը կը լայնցնեն իրենց երգին եղանակովը: Տակաւին այսօր երբ ժողովուրդը իր երգերը կը ստեղծէ, նախապէս կը չարչարուի անոր եղանակին վրայ:

Ինչ որ մեր անցեալը, ինչ որ մեր ցեղին բնագոյրը աշխատած է իրագործել, մեր պաշտօնական դրագէտները հեռու են հասկնալէ: Մենք առաջարկը կը բերենք հայկական Նոր Քրիստոսականին:

Յակոբ Քիւֆէճեան

ԿԷՍ ԳԻՇԵՐԷՆ ՄԻՆՁԵՒ ԱՐՇԱԼՈՅՍ (Վ. ԹԵՔԷՆԱՆ)

Պ. Վահան Թէքէեան մեր մէջ ներկայացուցիչն է բանաստեղծութեան մը որ քիչ մը օտար կու գայ աժան հռետորութեան կամ հերարձակ քնարերգութեան վարժուած մեր ճաշակներուն:

Անիկա ստորագրած է մէկ քանին այն քերթուածներէն (Հրաշալի Յարութիւն) որոնք յուզումի եւ շեշտի իրենց զուսպ ազնուականութեանը մէջ, պիտի մնան մեր լեզուին ամէնէն կատարեալ էջերը:

Չեմ գիտեր ինչէն, մեր բանաստեղծները կը շատցնեն իրենց քերթուածները ու հատորներ հատորներու կը կցեն ըսելու համար բաներ որոնք մէկ անգամէն, անկեղծութեան կամ գերազանց սարսուռի պահերուն, ձեւակերպած էին արդէն այնքան վերջնական եղանակով մը:

*

* *

Պ. Թէքէեանի նոր գիրքը անշուշտ ոչինչ կ'աւելցնէ անոր արժանիքներուն վրայ: Ես գիրքը վրիպած պիտի ենթադրէի, եթէ երբեք երկու կամ երեք իսկապէս կատարեալ քերթուածներ, դժուար գտնուած ու ատով իսկ մեծվայեւ լուչ հաճոյք մը չբերէին իմ փնտռողքիս:

Բայց ատոնց երթալէ առաջ հարկ է հաստատել որ Պ. Թէքէեան ճշմարիտ յանդգնութիւն մը կը փորձէ ազգայնական լարին մատ նետելով: Ու ի՛նչ մատներ:

Մատներն են ատոնք մարդու մը որուն ձեռքերը գողունի պարտէզներուն մէջ խուսափուկ հեւքեր, համբոյրներ հետապնդած են, աշխատելով միսերուն միջոցովը իւրացնել կամ առարկայացնել գրեթէ անկարելի զգայութիւններ:

Մատներն են ատոնք մարդու մը որ իրերուն կը նայի, անոնցմէ անդին տեսնելու յամառ ու կանխապատրաստ մտահոգութեամբ, որ տեսարաններուն սիրտը մտածումներ կը հանգչեցնէ, եւ հոգիներէն ներս իմացական յուզումներ դահել կը սիրէ:

Ասոնք են գլխաւոր գիծերը անոր տաղանդին:

Ու եթէ մեր ցեղին մեծ եղբերեղութիւնը անպատճառ իր կարմիր ստուերը պիտի ձգէր մեր արուեստին ու ստեղծումին վրայ, ու եթէ այդ եղբերեղութեան ամէնէն ահաւոր դրուագը պիտի պահանջէր իր երգահանը, ես պիտի ուզէի որ անիկա ըլլար Վարուժան մը օրինակի համար, կամ բոլորովին անտիպ մէկը, բայց ոչ Պ. Թէքէեանը:

Վասնզի տռամին լայնքն ու տարողութիւնը ճնշող ուժով մը կը խորտակեն անոր զգայութեանց սարուածը որուն համար շատ նիհար կու գայ ան:

Ասկէ՝ գիրքին առաջին կէսը կազմող էջերը որոնք տիտղոսուած են վայել խորհուրդով, կը ներկայանան մեզի կոկիկ, թերեւս տեղ տեղ աղուոր, բայց հեռու կը մնան պատկերելէ ամբողջ սարսափը այդ կէս-գիշերին որուն վրայ խորհիլը հիմա խելքի պտոյտ կու տայ մեզի եւ զոր չհասկցան աշխարհի բոլոր բարիները ու թերեւս բոլոր սուրբերը:

Օտարներէն աւելի մեզի կ'իյնար այդ աղջամուղջին վրայ գոնէ արիւնոտ ծակէ մը, վարագոյրի պէս բան՝ մը բանալ...: Չեմ կրնար երեւակայել յուզում մը որ կարենար մօտենալ ատկէ բղիտոյ սարսուռին:

Ու մեր գրագէտները, մեր բանաստեղծները այդ պատկերին մօտիկ թափառական օտարներու հետաքրքրութիւնը միայն կրցան բռնել իրենց դէմքին:

Պ. Թէքէեան բախտաւոր չէ միւսներէն աւելի:

Քերթուածներուն ներքեւ կարմիր, կայծակէ գծուած տարիները խաչի մը պէս կը լուսաւորեն զանոնք: Անոնք յայտ կը բերեն սովորական թրանքով հոգի մը որ կը սիրէ իր զգայութիւնները անպատճառ մտապատկերի (մտածողական) վերածել ու փոխանակ անմիջական կիզումին տակը գալարուելու, ու զգայութիւնը հարազատ երանգով մը արտաբերելու, կ'անցընէ զայն գրագէտի իր ընդունարանէն, առնելով այսպէսով անոր ամբողջ վայրագ շեշտականութիւնը, մեղմելով անոր անկիւններն ու խստութիւնները, ներկայացնելով զայն վերջապէս կոկիկ, քիչ մը ողբերգական ու արցունքոտ տարագի մը տակ որմէ անպատճառ անցան իր մտքին բոլոր գաւակները:

Արդի՞ւնքը:

Ան կ'ըլլայ որ դիրքին առաջին կէսը կը լեցուի լաւագոյն լեզուով մը գրուած, քիչ մը եղերական շունչով տրտմահար, բայց ստեղծուած ըլլալէ աւելի մտածուած, աւելի ճիշտը որոճուած ոտանաւորներու տողանց մը:

Ու այդ տժգոյն դամբարաննե՛րը մեր անպարփակելի ցաւին, կը գոցեն մեր աղէտը՝ հանդարտ, քիչ մը մանուածոտ ոճով այն յիշատակարաններուն նման, որոնք ոճիրին կամ արիւնին գերազանց քնարերգութեան ու աստուածօրէն բարձր սէրերուն վրայ, ճերմակ կամ դեղին՝ կը նստին քառակուսի կամ կամարով եւ որոնք ոչինչ կը պատմեն կեանքէն զոր մեր աչքին այսպէս ծածկելու պաշտօնը ունեցան:

Ընդհանուր այս տպաւորութենէն ետքը, տեղ տեղ ես հանդիպեցայ քարոզի մօտեցող ոտանաւորներու:

Արդար ըլլալու համար հարկ է անմիջապէս աւելցնել որ ազգայնական լարը երբեք պոռոտ չէ իր մօտ: Քնարերգութեան բարակութիւնը եթէ նիհար կը ձգէ քերթուածները, միւս կողմէն կը խնայէ անոնց՝ կոշտութիւնը գիւղացի լեցունութիւններուն:

Ոգեկոշումի անընդունակ այդ բանաստեղծը երբեմն կը յաջողի (Միջնորդութիւն) խմբագրական նիւթերուն տալ

անհրաժեշտ գնացքը (ալլիւր) ու քանի մը տունի մէջ իմաստութիւններ պատմել մեզի:

Դժբախտութիւն է դարձեալ որ ամէնէն աւելի գրականութիւն կենայ առաջին այդ մասին մէջ երբ բնաւ պէտք չունէինք անոր:

Իր չափուած յուսահատութիւնը, ինչպէս նաեւ ամբոխային տարրեր շարժելու (մանիէ) իր վերապահութիւնը, դարձեալ շնչատ իր լաւատեսութիւնը, հակառակ իր թէքնիքի բոլոր նպաստին, չեն փրկեր որ գիրքը գրականութիւն չդառնայ ու ընթերցողը չի բաժնուի անկէ գեղեցիկ քերթուած մը կարդալու հաճոյքովը, բայց տխրած անոր համար որ չտեսաւ ինչ որ սպասած էր հոն, ցաւելով անշուշտ, բայց քիչ մըն ալ համակերպած:

Գիրքին միւս մասը, Աստղեի ու ամպեր վերնագրին տակ մեզ կը դարձնէ իսկական Թէքէեանը, այսինքն այն բանաստեղծը որ զգալի աւելի մտածել սիրեց, որ զգալու համար հեռացաւ կեանքին մեծ պողոտաներէն ու սիրեց անկիւններուն ու խորշերուն մթազին քաղցրութիւնները:

Այդ գետինին վրայ, ան ունէր տեսակ մը վախկոտ հպարտութիւն որ իր շարժումներուն լայնքն ու չափազանցութիւնը կանոնաւորեց, անոր գեղումներուն մէջ դրաւ ազնուական անկեղծութիւն մը ու խնայեց անոր աւելորդ կամ խոշոր յորդումներուն աղմուկն ու ճահիճը:

Այդ գետինին վրայ ան ունէր մտածելու եղանակ մը որ քիչ անգամ քնարերգական, բայց բարձր մտահոգութիւնն ունէր բոլոր այն տագնապներուն որոնք մեզ կը յուզեն:

Ան երգեց սէրը հանդարտութեամբ մը, որ զգացումներուն այդ ամէնէն կատաղին վերլուծումի մօտեցուց եւ անոր արիւնն ու մոխիրը յաջողեցաւ բուրվառել (խնկամանել պիտի ըսէի, եթէ երբեք կարելի ըլլար ընդունիլ այս նոր բառը):

Ու երգեց մեծ տրտմութիւնները, հոգիի մեծ սուգերը, տռամները, բոլոր այս խորտակումներուն վրայէն վերցնելով աղմուկն ու փոշին, ու աւերակներ դրաւ մեր աչքին, պարզ, լքումի վերմակով, բայց արեւով, բայց իսկական

մեծութեամբը այն տեղերուն, ուրկէ՛ որ մը քաղաք մը իր պալատները անկիւնեց հորիզոնին վերեւ եւ մարդեր սէր ու սիրտ վազեցուցին:

Ինչ հարկ այս վերլուծումը, Պ. Թէքէեան նոր մը չէ հոգ: «Ամպեր ու աստղեր»ը հոգեբանական շարունակութիւնն են Հրաշալի Յարութիւնին:

Հարկ է փնտռել յաւելումները ու ստացումները:

Ատոնք քիչ են դժբախտաբար ու վերջացնելէ առաջ այս համառօտ փորձը չեմ կրնար չարտագրել սա՛ քերթուածը, ուր հին բանաստեղծը երեւան կու գայ իր բոլոր անկեղծութեամբը, շփեղութեամբը եւ թափանցող յուզումովը.—

ԵՍ ԵՐԱԶԻՍ ՏԻՐԵՑԻ

Ինչպէս տիրեց Շամիրամ իրմէ փախչող Արային
Ես երագիս տիրեցի, մեռցընելով զանկա,
Եւ տարփավառ թագուհւոյն պէս որ լացաւ դառնագին՝
Իր դիակին վրայ ինկած կը հեծեծեմ ես հիմա...

Ամէնուրեք, աղօտած մահադաշտին վրայ մտքիս
Կըռուէն յետոյ խենդի պէս փնտռեցի զայն երկա՛ր,
Գտայ ըզբեզ հետքերէն վարդ արիւնիդ, սիրելիս,
Զարդուզէնիդ մէջ պառկած ու ճիշտ սըրտէդ նետահար...

Համբոյրներովս հիմա գու՛ր կենդանացնել կ'ուզեմ քեզ,
Եւ կը կանչեմ յուշերուս հընօրեայ գունդն յարալէզ
Լիզել վերքերըդ անբոյժ.— դուն արդ մեռած ես իսպա՛ռ...

Բայց ո՛վ երագ, գոր կ'ուտեն արդէն որդերը քանդիչ,
Կ'ուզեմ խաբել ես աշխարհն, ինչպէս ինքզինքս ալ մի քիչ
Թե՛ դուն կ'ապրիս՝ միշտ աղուոր, հոգիիս մէջ՝ միշտ պայծառ...

Առանց «սիրելիս»ի անիմաստ երեւումին ու յանգի համար սպրդած «մի քիչ»ին այս քերթուածը բացարձակ

գլուխ գործոց մը պիտի ըլլար, անոնցմէ որոնց վարժուած ենք հանգիպելու Կիւյօյի կամ Սիւլլի Բրիւտօմի գործերուն մէջ:

Յ. Օշական

ՏԵՂԵԿԱԳԻՐ* ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՁԱՑ — ԴՈՒՐԵԱՆ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ 1935—1936 ՇՐՋԱՆԻ

Այս երկրորդ անգամն է որ Առաք. Ս. Աթոռոյս հովանւոյն տակ տեղի կ'ունենայ պարզեւաբաշխութիւնը «Սրբոց Թարգմանչաց — Դուրեան Գրական Մրցանակ»ի. առաջինը կատարուած ըլլալով երկու տարի առաջ. 1934 հոկտ. 28ի Սրբոց Թարգմանչաց կիրակիին:

Այդ առաջին անգամին մրցանակի ներկայացուած էին ութ գործեր, որոնցմէ մին միայնակ, Բրոֆ. Հրաչեայ Աճառեանի «Պատմութիւն Հայերէն Լեզուի»ն ստացաւ լիազումար պարգեւը: Միւս եօթնէն չորսը, թէեւ արժէքաւոր գործեր, բայց ամէն մասամբ համաձայն եղած չլինելով Մրցանակի կանոնադրին ինչ ինչ տրամադրութեանց, թողուած էին աննկատ. մնացեալ երեքէն առաջինը Պ. Կ. Բասմաճեանի «Հայկական Դրամագիտութիւնը», թէեւ արժանի դատուած էր մրցանակի, բայց, առ ի չգոյէ տրամադրելի գումարի, պարզեւատրութիւնը յետաձգուած էր յաջորդ պատեհութեան, այսինքն այս անգամի. երկրորդը՝ Պ. Յակոբ Օշականի «Վահան Թէքէեան եւ

(*)— Կը քաւականանանք արտատպելով այստեղ տեղեկագրին ա'յն մասը, որ առաւելաբար կը վերաբերի Յ. Օշականի «Վահան Թէքէեան եւ Արեւմտահայ ժամանակակից Գրականութիւնը» խորագրեալ աշխատութեան: Վ. Ղ.

Ժամանակակից Արեւմտահայ Գրականութիւն»ը, կարելի չեղաւ նկատի առնել, զի Քննիչին տեղեկագրութիւնը պարզեւաբաշխութեան հանդէսին իսկ դեռ չէր ստացուած. երրորդը՝ Տ. Գարեգին Արքնպս. Յովսէփեանի «Հոգեւոր Կեդրոններ եւ Գլաճորի Բարձր Դպրոցը Պոսշեանց Իշխանութեան Մէջ», մրցանակի առաջին շրջանի փակումէն յետոյ միայն ստացուած ըլլալով՝ հարկադրօրէն թողուած էր այս անգամի:

Իսկ յընթացս այս երկրորդ շրջանի, մրցանակի ներկայացուեցաւ միակ գործ մը, «Քաջանց Տուն», զոր ղրկած էր Պ. Ստեփանոս Կանայեան, Հայաստանէն:

Հետեւաբար, Ուսումնական Խորհուրդը, որ, ըստ կանոնագրի, «Գրական Յանձնաժողով»ի հանգամանքով, պաշտօն ունի կատարելու մրցանակի այս գործին պատկանեալ բոլոր տնօրինութիւնները, այս անգամ սեղանի վրայ ունեցաւ Պ. Բասմաճեանի, Պ. Օշականի, Տ. Գարեգին Սրբազանի եւ Պ. Կանայեանի յիշատակեալ չորս գործերը:

Ասոնցմէ առաջինին մասին քննողական, տեղեկագրական եւ գնահատական աշխատութիւնք լրացած էին արդէն, նախորդ շրջանին, գործին բաղկացութեան եւ արժէքին վերաբերմամբ եւս մանրամասնութիւնք հաղորդուած ըլլալով Ուսումն. Խորհուրդի առաջին տեղեկագրութեան մէջ. այս գրութեան մէջ ոչինչ ունինք անոր նկատմամբ ըսելիք՝ բացի պարզելի պարտազայէն, որ այս անգամ միայն որոշուեցաւ. ինչպէս պիտի յայտնենք յետոյ, իր կարգին:

Յաջորդ տողերուն մէջ ուրեմն, պարտականութիւն ունինք խօսելու վերջին երեք գործերու մասին միայն, որոնցմէ առաջինին (Օշականի գործին) քննութիւնը յանձնուած էր, ինչպէս կը յիշէք, Պ. Միք. Կիւրճեանի՝ յԱղեքսանդրիա, իսկ երկրորդինը՝ (Գարեգին Սրբազանինը) յանձնուեցաւ Պրոֆ. Ն. Ադոնցի՝ ի Պրիւքսէլ, եւ երրորդինը (Ս. Կանայեանինը)՝ Պ. Ն. Աղբալեանի՝ ի Պէյրութ, որոնք, երեքն ալ, շնորհապարտ զգացմամբ կը յայտագրենք, սիրով կատարեցին ինչ որ խնդրած էինք

իրենցմէ, յօգուտ հայ գրականութեան եւ բանասիրութեան:

Պ. Օշականի գործը, գրական ուսումնասիրութիւն մըն է՝ սիրով բայց լրջօրէն քննական ոգով գրուած: Թէեւ «Վահան Թէքէեան եւ Արեւմտահայ ժամանակակից Գրականութիւնը» խորագիրն ունի ան, բայց ժամանակակից այդ գրականութեան նուիրուած է 17 էջերէ բաղկացած առաջին գլուխը միայն, որ՝ այսպէս՝ շրջանակ մըն է միայն գեղեցիկ պատկերի մը, որ Թէքէեանի հոգւոյն եւ բանաստեղծական գործերու վերլուծական զննութիւնն ու նկարագրութիւնն է: Ամբողջ գործը, ընդամէնը 189 մանրատառ մեծադիր էջեր, կը բաժնուի, բացի յիշեալ առաջինէն, չորս գլուխներու. «Բանաստեղծը եւ իր գործերը», «Հրապարակագիրը», «Քրոնիկագիրը», «Վիպողը», իւրաքանչիւրը, առաջինը, մասնաւորապէս, իր ստորաբաժանումներով եւ ի հարկին ասոնց եւս ենթամասերով: Այսպէս, լայնագոյն մասը, ինչպէս արդարութիւն պիտի ըլլար անշուշտ, կը տրուի բանաստեղծին: Յաջորդաբար նկատի կ'առնուին Թէքէեանի չորս գործերը, «Տաղարաններ»ը, իր բառով, «Հոգերը», «Հրաշալի Յարութիւնը», «Կէս-Գիշերէն Մինչեւ Արշալոյսը» եւ «Սէրը»: Բազմաթիւ մէջբերումներով այդ ամենէն՝ կը պատկերազարդուի՝ այսպէս ըսենք՝ ամբողջ ուսումնասիրութիւնը: Միւս երեք գլուխներուն մէջ հարեւանցի բայց ճշտադատ գնահատումներով մամլոյ մշակին, վիպողին եւ քրոնիկագրին, կը ներկայացուին Թէքէեանի գրական գործունէութեան միւս քանի մը երեսները, որոնց մէջ միշտ բանաստեղծը կամ քնարերգակը, աւելի ճիշդ՝ «Իմացապաշտ քերթող»ն է որ իր արձակին քնքուշ յուզականութեան մէջ ալ կը զգացնէ միշտ ինքզինքը:

Օշականի այս գործը, իր ամբողջութեանը մէջ, իսանդավառ տարփողանք մըն է մեր ժամանակի ամենէն մեծարժէք հայ բանաստեղծներէն մէկուն, գրուած յորդհամակրանքով եւ անվերապահ հիացումով, ուր սակայն միտքը չի պատրուիր բնաւ սիրտէն, զոր՝ ընդհակառակն՝

ինքն է որ կը տաքցնէ չսակարկուած դատողութեան մը անկեղծ շեշտովը, յատկութիւն՝ որ ամենէն մաքուր յատկանիշն է քննադատական առողջ եւ բարձր ոգիի, եւ որուն համար Օչականի այս գրուածքը, հակառակ՝ ոչ թէ իր ոճին՝ որ անստգիւտ է՝ այլ իր գրելու կերպի երբեմն մէգին, որ իր ձեւն է այլեւս, գրական քննադատութեան ընտիր նմոյշ մըն է մեր ներկայ մատենագրութեան մէջ:

.

Պ. Միքայէլ Կիւրճեան, որուն յանձնուած էր քննութիւնը Պ. Օչականի գործին, զայն կը համարի «իր ծաւալովը պատկառելի եւ որակովը թանկարժէք բազմամասն ու խղճամիտ ուսումնասիրութիւն մը», կատարուած՝ անթերի ձեռնահասութեամբ արուեստագէտի զգացողութիւն եւ արտայայտութեան մեծ կարողութիւն ունեցող գրագէտ քննադատի, որ խանդավառ հասկցողութեամբ կը սիրէ բանաստեղծը եւ կը հիանայ անոր վրայ, եւ իրեն համար խղճի պարտականութիւն մը կարծես կը համարի (ինչպէս Պոտլէռ իր ուսումնասիրութեամբը՝ հանճարի եղբօր մը՝ է. Բօի մասին) Թէքէեանը անգիտացողներուն ճանչցնել զայն, իբրեւ մեր ամենէն ազնուական, խորզաց, անձնական, կատարեալ, իմացապաշտ. «հետորութեան սկզբնական մեղքէն զերծ մնացած» բանաստեղծը եւ նոյն ատեն մեծագոյն վարպետը մեր աշխարհաբար ոտանաւորին: Կիւրճեան ութ մեծադիր էջերու մէջ կը վերջացնէ այնքան յստակամիտ արդարադատութեամբ տողած իր տեղեկագրութիւնը՝ քանի մը դիտողութիւններով ի մասին Օչականի մերթ ընդ մերթ խրթնաբան ոճին, ինչպէս նաեւ Թ. Թէրզեանի, Ռ. Պէրպէրեանի եւ Տ. Զրաբեանի վերաբերմամբ իր դատաստաններուն, զորս կը գտնէ անիրաւ եւ անհարկիօրէն արհամարհոտ:

.....

... Քննիչներու դատաստաններուն այս ամփոփ համառօտումէն վերջ կը հասնինք մրցանակի պարգեւներուն բաշխման հարցին, որ, առանց այլ եւ այլի, ամենէն փափուկ կէտն է հարցին. փափուկ՝ անոր համար որ մտքի

եւ սրտի արդիւնքները նիւթական ւփոխարինութեամբ կշռելը դիւրին գործ չէ, երբ մանաւանդ ներկայացուած արժէքաւոր երկերուն հանդէպ՝ մեծ չէ տրամադրելի գումարը. ու պատմութեան մէջ ալ յաճախադէպ չեն եղած օգոստական պարգեւատրութիւնները, որոնցմով Ոկտաւիանոս կը վարձատրէր Վիրգիլիոսը, Ենէականին մէն մի տողին ի հաշիւ:

Այս պատճառաւ Ուսումնական Խորհրդոյ մէջ առանձին ուշադրութեան առարկայ եղաւ դրամական այս պարագան: Մատուցուած բոլոր երկերը արժանի էին մրցանակի, թէ՛ Քննիչներուն վկայութեամբ եւ թէ՛ Ուսումն. Խորհուրդի տպաւորութեամբ եւ համոզումով. անոնցմէ իւրաքանչիւրը առաջնակարգ արժէք ունէր «ըստ իւրում սեռի»․ մին իբրեւ հնապատմական, միւսն իբրեւ զրագիտական, երրորդն իբրեւ եկեղեցապատմական–հնախօսական, չորրորդն իբրեւ բանահիւսական. այնպէս որ եթէ այս սեռերէն ամէն մէկին համար ուրոյն մրցանակներ եղած լինէին, իւրաքանչիւրը պիտի շահէր իրենը ամբողջ: Միւս կողմանէ գործնական չթուեցաւ որ մրցանակը մէկի մը միայն, ինչպէս անցեալ անգամ, կամ երկուքի բաշխուելով, պարտական մնայ միւսներուն. ու աւելի պատշաճ երեւցաւ մերձաւորաբար գործադրել պարգեւաբաշխութեան կերպը Կ. Պոլսոյ Իզմիրեանց զրական յանձնաժողովին, որուն սկզբանց վրայ արդէն կազմուած էր մերինը եւս, նոյն ատեն ի նկատի ունենալով մեր կանոնադրութեան եւս այն տրամադրութիւնը, որ կը յանձնարարէ նախապատուութիւն տալ աւելի բանասիրական–հայագիտական ուսումնասիրութեանց: Այս հայեցողութեամբ, մրցանակի սեղանին վրայ եղած գործերը շարակարգուեցան հետեւեալ դասաւորութեամբ. 1.– «Հոգեւոր Կեդրոններ եւ Գլխորի Բարձր Դպրոցը Պոռթեանց Իշխանութեան Մէջ». 2.– «Հայկական Դրամագիտութիւն»ը. 3.– «Վահան Թէֆէեան եւ Արեւմտահայ Ժամանակակից Գրականութիւնը». 4.– «Քաջանց Տուն (Արշակունիք) Ժողովրդական Վէպ». եւ անոնցմէ իւրաքանչիւրին հեղինակին համար սահմանուեցաւ մրցանակ՝ ըստ նոյն կարգի՝ 40, 30, 25 եւ

25 ստերլին, որոնց համագումարն է այս շրջանի մրցանակի ամբողջ գումարը 120 ստերլին: Կը մտածենք թէ, տուեալ պայմաններու եւ բացատրուած պարագաներու նկատմամբ, անարդար չէ այս պարգեւաբաշխութիւնը:

Կը շնորհաւորենք պսակուած այս գործերուն յարգելի երկասիրողները, Գեր. Տ. Գարեգին Արքեպս.ը, Պ. Յ. Օշականը եւ Պ. Ս. Կանայեանցը, հայ բանասիրութեան եւ գրականութեան մատուցած իրենց ծառայութեան համար:

Ջերմագին շնորհակալութիւն կը յայտնենք Պատ. Քննիչներուն, ազնուազգաց գրագէտ Պ. Մ. Կիւրճեանի, մեծանուն Պրոֆ. Ն. Ադոնցի, եւ պատուական բանասէր Պ. Ն. Աղբալեանի, յօժարամիտ պատրաստակամութեան համար, որով յանձն առին իրենց առաջարկուած աշխատանքը դարձեալ յօգուտ հայկական դպրութեանց. եւ լաւագոյն մաղթանքներով յառաջիկային համար առաւելագոյն արդիւնքներու, փակուած կը յայտարարենք Սրբոց Թարգմանչաց—Դուրեան Գրական Մրցանակի 1935-36ի շրջանը:

**Պ. ՕՇԱԿԱՆԻ «ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ
ՈՒ ՎԱՀԱՆ ԹԵՔԵՆԱՆ» Ի ՎՐԱՅ
Պ. ՄԻՔԱՅԵԼ ԿԻՒՐՃԵԱՆԻ
ՔՆՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ**

ՄԱՏՈՒՑՈՒԱԾ ԱՌ ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐԲ ՀԱՅՐՆ Ս. ԱԹՈՌՈՅՍ
ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՁԱՑ — ԴՈՒՐԵԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ

Յ. Օշականի այս երկը, Վահան Թէքէեանի գործին ու արուեստին նուիրուած, իր ծաւալովը պատկառելի եւ որակովը թանկարժէք՝ բազմամասն ու խղճամիտ ուսումնասիրութիւն մըն է, արժանի մեծանուն բանաստեղծին, եւ պատիւ բերող՝ հեղինակին:

Մեր գրականութեան մէջ ուր քննադատութիւնը սկիզբէն ի վեր այնքան քիչ ու գէշ մշակուած սեռ մը եղած է, կարելի է ըսել որ Յ. Օշականի աշխատութիւնը, իր համեմատութիւններով որքան իր ներքին (intrinsèque) արժէքովը, եզական, աննախընթաց երեւոյթ մըն է: Կարելի է, առանց սխալելու կամ չափազանցելու երկիւղի, հաւաստել թէ ո՛չ մէկ արեւմտահայ մատենագիր առարկայ եղած է այսքան լիակատար, բազմակողմանի, այսքան հմտալից ու խորաքընին ուսումնասիրութեան մը: Մեծագոյն կոթողը զոր հայ քննադատ մը կանգնած ըլլայ հայ գրագէտի մը փառքին համար:

Յ. Օշականի քննադատական երկը զետեղուած է սիրոյ նշանակին (signe) ներքեւ, — այն սիրոյն որ խորունկ հասկացողութենէ մը կը բղխի կամ անոր կը տանի: Ակներեւ է թէ հեղինակը եթէ ձեռնարկած է Վ. Թէքէեանի գործն ու

արուեստը ուսումնասիրելու (սքանչելի՛ բառը), ատիկա ըրած է ո՛չ թէ զուտ առարկայական ծրագրով եւ հակումներով (թէն) կամ վարդապետական (dogmatique) առաջադրութիւններով (Պռիւնըթիէռ), այսինքն երեւոյթներ եւ օրէնքներ ուսումնասիրելու համար՝ տեսաբանի (théoricien) մը նախանձախնդրութեամբ, այլ որովհետեւ սկզբնական համակրութիւն մը զինքը տարած կապած է ա՛յդ գործին ու արուեստին. ընտրել տուած է իրեն ա՛յդ քերթողը — ժամանակակից տաղանդներու խայտաբղէտ հոյլին մէջ — իբր ամենէն համապատասխանը բանաստեղծի մը մտատիպարին։

Յ. Օչականի երկը կ'ուզէ միեւնոյն ատեն ըլլալ — եւ այդ հանգամանքը կուտայ անոր զգացական կարեյոյզ (pathétique) տարրի մը հաղորդական ջերմութիւնը — արդարահատոյց արարք (acte de justice) մը հանգէպ քերթողին, զոր քննադատը չի սխալիր դաւանելով իբր յարաբերաբար անիրաւուած մը, անգիտուած մը, այսինքն մէկը որ չէ գրաւած մեր դպրութեանց մէջ այն առաջնակարգ դիրքը որուն արժանի կը կացուցանեն զինք՝ իր բանաստեղծի տաղանդն ու իր գործը։

Յ. Օչական այս գժուարին աշխատանքը — Վ. Թէքէեանի հասակով եւ որակով բանաստեղծ մը խորապէս հասկնալու եւ հասկցնելու — յաջողապէս, արդիւնաւորապէս կատարելու համար՝ անժխտելիօրէն ունի պէտք եղած գրական ճաշակը, հմտութիւնը, ընթերցմանց պաշարը. տեղեակ է տոհմային եւ օտար գլխաւոր գրականութեանց, անոնց յատկանշական հոսանքներուն եւ ներկայացուցչական գործերուն, ինչ որ կարող կ'ընէ զինքը բաղդատական ցուցմունքներով, մերձեցումներով եւ օրինակներով լուսաւորել եւ ամրացնել (corroborer) իր դատաստանները։ Աւելցուցէ՛ք ասոնց վրայ արուեստագէտի զգայնութիւն և արտայայտութեան մեծ կարողութիւն — Յ. Օչական ծանօթ է որպէս ինքնատիպ գրագէտ — բարդ ու բազմերանգ խորհողութիւն մը, հաւասարապէս ատակ մասերու եւ մանրամասնութիւններու նրբախոյզ վերլուծումին, ինչպէս եւ ընդհանրացումներու, դասաւորումներու եւ համադրումներու լրացուցիչ, եզրափակող աշխատանքին, եւ պիտի

կրնաք գաղափար մը կազմել խնդրոյ առարկայ ուսումնասիրութեան բաղկացուցիչ տարրերուն եւ բազմադիմի յատկութիւններուն:

Յ. Օչական խորապէս կը սիրէ բանաստեղծը եւ կը հիանայ անոր վրայ. ա'սիկա է ներշնչող ոգին, մայր-ակը՝ իր բազմաճիւղ բազմավտակ աշխատանքին, որ կը ծաւալի էջէ էջ, գլուխէ գլուխ, ընդգրկելով Վահան Թէքէեանի ստեղծած բանաստեղծական քէյզաժին բոլոր յոգնապտոյտ ափերը, բոլոր շրջագիծները, հաւատարմօրէն ցոլացնելով անոր բոլոր հրապոյրներն ու խորհուրդները:

Յ. Օչական տարփագինօրէն յամառ, համբերատար ճիգով մը ցոյց կուտայ, կը պարզէ ու կ'ընդլայնէ իր սիրոյն եւ հիացման պատճառները, բազմաթիւ մէջբերումներով, բաղդատութիւններով եւ հակադրութիւններով՝ ուրիշ երկերու: Խորապէս համոզուած, ան կ'աշխատի համոզել: Վահան Թէքէեանի տաղանդին ու հոգիին բոլոր երեսները, գործին բոլոր տեսակները ի վեր կը հանէ իր մտքին լուսարձակը ուղղելով անոնց իւրաքանչիւրին վրայ, ուղղելով եւ յամեցնելով, մինչեւ որ չձգէ չհետախուզուած ո'եւէ ալք:

Խանդավառ (passionné) հասկացողութեան — եթէ կարելի է ըսել — գործ մըն է ասիկա, հագուազիւտ ընտանիքէն անոնց զոր մեծ գրագէտներ, արհեստով ո'չ քննադատներ, կատարած են ատեն ատեն, խղճի քաղցր պարտականութիւն մը կատարելու պէս. (յիշել Պոտլէռի ուսումնասիրութիւնը՝ հանճարի եղբօր մը՝ է. Բոյի մասին) գործ մը որ անգիտացողներու կամ ցարդ անտարբեր մնացածներուն պիտի ըստ արժանւոյն ճանչցընէ, սիրցնէ բանաստեղծի մեծարժէք գործը. իսկ անոր վաղեմի հիացողներու ընտրանին աւելի խորապէս պիտի ամրացնէ իրենց զգացումին մէջ, անոր խորունկ պատճառները լուսաւորելով, գիտակցութեան պայծառութեանը հանելով ինչ որ չփոթ էր ու կերպիւ իւրիք բնագլական:

«Ամէն բան հասկնալ ամէն բան սիրելու համար» կ'ըսէր Կէօթէ. անկարելի է Վ. Թէքէեանը չսիրել — եթէ կան չսիրողներ կարդացածնից հասկնալու կարող ընթերցողներու

բազմութեան մէջ — անկարելի է կ'ըսեմ, Վ. Թէքէեանը չսիրել. հասկնալէ, ճանչնալէ յետոյ զինքը՝ այս նշանաւոր ուսումնասիրութեան լոյսովը:

Վ. Թէքէեան — այս եզրակացութեան պիտի հասնիք անվրէպ յաւարտ այդ ուսումնասիրութեան — մեր ամենէն ազնուական, խորագգաց, անձնական (personnel) եւ կատարեալ բանաստեղծն է: Եւ ամենէն «իմացապաշտը» Յ. Օշականի բառովը:

Իր կատարելութիւնը, անվիճելի, ժխտական չէ, ըսել կ'ուզեմ չի նշանակեր բնաւ բացակայութիւնը այն թերութիւններուն որոնք ուրիշ շատերու քով այնքան ակներեւ են, վնասաբեր, ստուերածող. այլ նաեւ ու մա'նաւանդ գոյութիւնը, ներկայութիւնը բոլոր այն վաւերական յատկութիւններուն եւ շնորհներուն որոնք յատուկ են հարազատ բանաստեղծին եւ անհրաժեշտ:

Որ, սարսուռն բայց զուսպ զգայնութիւն. երեւակայութիւն մը՝ հարուստ այլազան տարրերով. բայց առանց աւելորդ շռայլութեան եւ ցուցամոլութեան. զգայութենէն (sensation) զգացում եւ անկէ ալ ի խորհուրդ (pensée) բարձրանալու տիրական շնորհ եւ կարողութիւն, կիրթ, խստապահանջ, գրեթէ անսխալական ճաշակ, չափի (measure), ժուժկալութեան եւ վայելչութեան բնագդ — ինչ որ զինքը ամենէն «գասականը» կ'ընէ մեր ռոմանթիքներուն — կշռոյթի եւ ներդաշնակութեան խոր զգայարանք, խորշում ամէն outranceէ եւ զեղծանումէ, մանաւանդ այն հռետորութենէն, ճոռոմութենէն, պոռոտութենէն (emphase, declamation) որ մեր հին եւ նոր քնարերգներուն — Ալիշանէն ու Դուրեանէն մինչեւ Սիամանթօ եւ Վարուժան — մեծագոյն մեղքը եղած է, եւրոպական ռոմանթիզմին ամենէն յուրի մէկ ունակութեան նմանողութեամբն. եւ

(*) — Ռօմանթիկ՝ վերադիրը, Թէքէեանի կիրարկուած, թող չխրտեցնէ: Ֆրանսացի ամենէն ներհուճ քննադատներէն մին, Էտիեն Ժալու վերջերս իրաւամբ դիտել կուտայ որ ամէն ճշմարիտ քննաստեղծ ռոմանթիկ է, ռոմանթիկ կը ծնի: Դասականութիւնը (clacissisme) թերեւս աւելի ձեւի (forme) խնդիր է քան թէ խորքի (fond):

խոշորացումովը. զգացմանց արտայայտութեան մէջ տեսակ մը տոհմիկ ամօթխածութիւն, զսպում եւ վերապահում, որ այնքան կ'աւելցնեն իր տաղերուն թելադրական ուժն եւ յուզականութիւնը:

Ստուգիւ, Թէքէեան մեր միակ բանաստեղծն է թերեւս որ, բացի իր ազգասիրական կարգ մը քերթուածներէն ուր աստիճան մը արդարանալի է անիկա, զերծ մնացած է «Հոռոտորութեան» սկզբնական մեղքէն, եւ զոր՝ այս պատճառաւ իսկ կարելի է բաղդատութեան դնել եւրոպական իմաստով ու տարագով «արուեստագէտ» բանաստեղծներու հետ, ինչպէս Պոտլէռ, Մալառմէ, Ռէնեիէ, Սամէն, Մօռէաս, Ռօտէնպախ, նոյն իսկ Վէռլէն, նուազ «արուեստագէտ», որ սակայն իր «Արուեստ Քերթողական»ին մէջ զառաջինն պատգամեց նոր Հանգանակը՝

Prends l'éloquence et tords-lui son cou.

Վ. Թէքէեան մեր աշխարհաբար ոտանաւորին մեծագոյն վարպետը, մեծագոյն արուեստագէտը՝ միեւնոյն ատեն, ա'ն որ յաջողած է — ի գին ի'նչ աշխատանքի, շնորհիւ ի'նչ մշտասեւեռ ձգտումի մը դէպի կատարելութիւն, — խիստ ու թանձր հագագներով, բիրտ բաղաձայններու ոսկորներովը խշրտացող մեր լեզուն ընել կարելի եղածին չափ դաշնակաւոր եւ հեշտալուր — բանաստեղծական «երգ»ին յարմար — որ մեր հետ ու ապերախտ ոտանաւորին (բաղդատմամբ աւելի բախտաւորներու, օրինակի համար՝ իտալականին, անգլիականին, ֆրանսականին) տո՛ւած է ճկունութեան, հոսանուտութեան (fluidité), երաժշտականութեան առաւելագոյն չափը որուն ընդունակ է:

Ահա՛, հակիրճ թուումով մը որ յաւակնութիւն չի կրնար ունենալ նոյն իսկ ամենավտիտ մէկ schéma-ն ներկայացնելու քննադատին ստուար աշխատասիրութեան, ի'նչ որ Յ. Օշական իր շուրջ երկու հարիւր էջերէ բաղկացած երկին քաղմաթիւ գլուխներուն եւ ստորաբաժանումներուն մէջ երկարօրէն եւ խղճմտօրէն վերլուծած, ուսումնասիրած եւ ի վեր հանած է:



Վերջացնելէ առաջ այս ամփոփ տեղեկագիրը, թո՛ղ ներ-
ւի ինծի մէկ քանի դիտողութիւններ եւ վերապահումներ
արձանագրել հոս:

Նախ՝ իր ռեիմ մասին.

Յ. Օշական, —ինքն ալ ինքնատիպ գրագէտ— արտայայ-
տութեան մեծ կարողութեամբ մը օժտուած է, ինչպէս ըսի
արդէն. կը ցաւիմ ըսելու որ իր ոճը, որ ունի ջիղ, կորով,
պատկերներու փայլ եւ յանդգնութիւն, զերծ չէ թերու-
թիւններէ, իր քով՝ արուեստագէտը, կամ ոճի գործաւորը
(artisan) միշտ հաւասար չէ յղացողին, խորհողին: Իր լե-
զուն, յաճախ, կը թուի ինքնատուլութեան հասնիլ ի վնաս
յստակութեան, վայելչութեան եւ ներդաշնակութեան,
բռնագրօսիկ ու տաժանքոտ չես գիտեր ի՛նչ մը զգալի է հոն
տեղ տեղ: Շատ անգամ ամենապարզ բան մը ըսելու համար
այնպիսի մանուածապատ եւ անսովոր (insolite) ձեւեր ու
բացատրութիւններ կը գործածէ որ ընթերցողին կը հարկա-
դրուի հասկցողութեան թափանցումի աւելորդ ճիգ մը, ա-
ւելո՛րդ որովհետեւ չի վարձատրուիր թանկագին գիւտի մը
անակնկալին հաճոյքովը: Այո՛, շատ անգամ իր լեզուն պա-
րապ տեղը խրթին է. ձեւի խրթնութիւնը, «մթութիւնը» երբ
մտածումի բարդութեան կամ նրբանրբութեան (subtilité)
կը համապատասխանէ, ընդունելի է. այլապէս՝ ո՛չ. իր ու-
սումնասիրութեան մէջ շատ տեղեր՝ Յ. Օշական կը դիմէ
այդ խրթնութեան, առանց այս դիտողութիւնը կամ ստղը-
տանքը իր վրայ հրաւիրելու, որովհետեւ խորո՞ւնկ կամ
բարդ մտածում մ'է որ կը պահանջէ զայն, կերպիւ իւրիք կը
հարկադրէ, եւ ճիգը զոր ընթերցողը կ'ընէ՝ անարժէք ար-
դիւնքի մը համար չէ:

Յ. Օշական կը գեղծանի նաեւ փակագիծերու, միջան-
կեայներու ծայրայեղ գործածութեամբը: Երբ արդէն եր-
կարաձիգ նախադասութիւն մը կը խճողուի, կ'ընդհատուի

այդ տեսակ եկամուտ (adventice) — բռնամոյծ՝ չըսելու համար — մասերով, ընթերցման ընթացքը բնականաբար կը դանդաղի, ընթերցողին ուշադրութիւնը կը ցրուի եւ միտքը կը յոգնի: Իմ կարծիքովս՝ այս անպատեհութեան առաջը շատ դիւրաւ կարելի էր առնել այդ փակագծաւոր եւ միջանկեալ ֆրագմէնը — գէ'թ երկարագոյնները, որոնք այնքան ստուարաթիւ են — էջերու ներքեւ զետեղելով իբրեւ նօթ:

Յ. Օշական տաղանդաւոր եւ ինքնատիպ գրող մըն է անվիճելիօրէն, բայց իր գրելու ձեւը յաճախ կը պակսի տեսակ մը շնորհէ, հրապոյրէ, չեմ ըսեր պարզութեմէ (որ ամէն գրագէտի տրուած չէ, ոչ ալ պատշաճ է ամէն գրական իրաւունքի, մանաւանդ Օշականի խառնուածքէն գրագէտի մը):

Իր գրական դատաստաններու մասին.

Վահան Թէքէեանի սերունդը եւ միջավայրը ուսումնասիրած ատեն, քննադատը բնականօրէն կը բերուի խօսելու եւ կարծիք յայտնելու անոր երէցներուն եւ ժամանակակիցներուն մասին. ընդհանուր կերպով իր դատաստանները արդար եւ անաչառ կը գտնեմ. բայց չեմ կրնար լռութեամբ անցնիլ մէկ քանի մեծ անիրաւութիւններու վրայ զորս ան կը գործէ ո'չ թէ անցողակի, առանց շատ ծանրանալու, այլ հաստատօրէն, սիստեմատիկաբար (կը խորհիմ գէ'թ միոյն...) նախ զինքը չափազանց արհամարհոտ կը գտնեմ Թովմաս Թերզեանի մասին զոր դժբախտաբար շատ քիչ կը ճանչնամ, ինչ որ զիս զգուշաւոր կ'ընէ պաշտպանողականին մէջ. կ'անցնիմ. չափազանց արհամարհոտ՝ — եւ հոս համոզմամբ կ'ըսեմ՝ անիրա'ւ՝ Ռ. Պէրպէրեանի մասին. անոր Խոհեմ եւ Յուշեմ ըստ իս մեր արդի բանաստեղծութեան — մտերմիկ քնարերգութեան (lyrisme intime) արժէքաւոր գործերէն մէկն է, կարող՝ իր հեղինակին քաւել տալու կեղծ-ուսմանթիզմի եւ հռետորութեան իր բոլոր երիտասարդական մեղքերը: Բայց ապշեցուցիչ եւ ընդվզեցուցիչ կերպով անարդար կը գտնեմ զինքը Տ. Չրաքեանի մասին, որ իմ համոզումովս, եւ ինծի պէս մէկ քանիներու համոզումովը՝ որ ապագայ սերունդներո'ւնը պիտի ըլլայ

ապահով, մեր մեծագոյն հանճարն է, եւրոպական իմաստով մեր ամենէն «տիեզերական» հանճարը, մեր մեծագոյն արուեստագէտ-բանաստեղծ-խորհողը: Բանաստեղծ բառը կը գործածեմ հոս ո՛չ թէ խորհելով միայն «Նոճաստան»ին, ուր, հակառակ Յ. Օշականի անձնական կտրուկ վճիռներուն*, «իմացապաշտ», նոյն իսկ խորհրդապաշտ բանաստեղծութեան մէկ քանի գլուխ-գործոցներ կան, կա՛տարեալ թէ՛ խորքով թէ՛ ձեւով —այլ մա՛նաւանդ զարմանահրաշ «Ներաշխարհ»ին, Անհունի, Յաւիտենականի այդ անմահ աղօթագրքին, ուր իրացած է նկարչի մը, միստիք քնարերգակի մը եւ վերլուծող-խորհողի մը խառնուածքներուն ամենէն հրաշալի ձուլումը, զոր կարելի ըլլայ երեւակայել: Ու ի՛նչ անբաղդատելի ձիրքերով օժտուած նկարիչ, քնարերգակ ու խորհող, եւ որպի՛սի հզօր ինքնատպուլթեամբ: «Ներաշխարհ» անհաւասարելի գագաթ մըն է մեր գրականութեան մէջ, յաւերժական փառքով մը լուսաճաճանչ, ու մեծապէս զարմանալի ու ցաւալի է որ Վ. Թէքէեանը այդքան խորապէս հասկցող ու գնահատող քննադատ մը այդքան մեծ անիրաւութիւն մը գործէ ուրիշ մեծ ու վաւերական արուեստագէտի մը հանդէպ, թէ «Հրաշալի Յարութիւն»ի հեղինակին խոր հիացող մը ըլլալը չի կրնար ու պէտք չէ արգիլէ իրեն արժանավայել մեծարանքը մատուցանել Տ. Չրաքեանի հանճարին, ատոր ապացոյցն է այս տեղեկագիրը ստորագրողը:

Եւ ես վստահ եմ որ նոյն ինքն Թէքէեան, ինչ որ մասնաւոր կերպով անհաճոյ եւ քննադատելի պիտի գտնէ իր փառքին նուիրուած այս այնքան խանդաղատալից եւ ներհուն ուսումնասիրութեան մէջ, ճի՛շդ ուրացումի փորձն է

(*) — Ճիշդ՝ երբ կը վերաքերին կարգ մը ոտանաւորներու ձեւի թերութիւններուն, անցերդաշնակութիւններուն եւայլն. բանքը զոր սակայն կարելի է արդարացնել հոծութեամբը նիւթին (matière) որով անոնք բեռնաւոր են, խորացումի պէտքովը՝ պարտադրուած հեղինակին անձուկ շրջանակէն:

Հանդէպ անոր՝ զոր այնքան գեղեցիկ, սրտառու է և վեհի-
մաստ տաղով մը պանծացուցած է իր վերջին հատորին,
«Սէր»ին մէջ:

Աղէքս. 10 Փետր.

ՄԻՔԱՅԷԼ Ս. ԿԻՒՐՃԵԱՆ

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԷՆ

ԵՒ

ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆԷՆ

Գահիրէ 28 Սեպտ. [19]26

Սիրելի Օշական⁽¹⁾,

Կը տեսնեմ որ նամակդ 8 Սեպտ.էն է եւ այսօր 28ն է. նորէն բարկացած պիտի ըլլաս անփութութեանս դէմ. բայց հոգ չէ. բարկութիւնը վնասող կիրքերուն էն անվնասն է. իրաւունքի եւ գերազանցութեան տարր մը ունի իր մէջ եւ առարկայ մը իր դէմ՝ որուն վրայ կրնայ յագեցնալ. ասդին ո՛րչափ կիրքեր կան որոնք չեն արտաքնանար ասոր պէս եւ կ'ուտեն մեր ներսիդին. անտաշ էութիւններու, մեր ծնունդին կամ ժառանգականութեան, բախտին, ժամանակին, ազգին դէմ մեր ներքին անկարող, ընկճող ըմբոստացումներուն ո՛րքան նախընտրելի է զայրոյթը անուն ու միս ունեցող մարդու մը դէմ զոր կրնաս նախատել, երբ կրնաս զայն ծեծել՝ մանաւանդ: Քաղաքակրթութեան անկումը անկէ յառաջ պիտի գայ՝ որ մարդիկ իրարմէ իրենց կրած անձնական տհաճութիւններուն համար իրար չեն ծեծեր բաւական, իրենք զիրենք կը զսպեն, ոխ կը պահեն, կը դաւեն երբեմն, կը մոռնան յաճախ իրենց ոխին առարկան բայց դառնութիւնը անգիտակցաբար կը մնայ իրենց մէջ՝ մինչեւ որ վարպետորդի meneur-ներ* չահագործեն այդ

(*) — Պարագլուխ, խոովարար:

խմորումը, անհատականէն զայն վերածելով հաւաքականի, ամէնքը ի մի բերելով եւ ամէնուն միակ նշանակէտ մը ցոյց տալով, միակ Bastille⁽²⁾ մը քանդելիք՝ երբ անիկա երբեք նոյնը չէ երկու անձի համար:

Անստորագիր
նաեւ՝ անաւարտ(?)

1926 Նոյ. 24

Նիկոսիա

Սիրելի Վահան,

Նամակդ կարդացի քիչ մը տխրութեամբ: Յայտնի է թէ հող կ'անցնին բաներ մը որմէ տեղեկութիւն չունիմ: Շատ սպասեցի որ կու գաս, վասնզի աղան⁽³⁾ քու անունդ ալ աւելցուցած է Գահիրէէն թելադրուած հեռագրի պատճենին վրայ: Քուլիսներու աշխատանքը կը ծածկեն քիչ մը. ու չեմ գիտեր թէ ինչո՞ւ: Շատ դառն եղաւ տպաւորութիւնս ղրկուածներէն⁽⁴⁾: Ատոնք ապառաժի պէս մարդեր թուեցան ինծի: Բժիշկը նոյնիսկ յառաջացաւ tuberculose (աղիքի)ին* փոխանցիկ ըլլալ[ը] մերժելու որպէսզի տղաքս ներս չառնելու իրենց որոշումը արդարացնեն: Ի վերջոյ որոշեցին որ դիմում ընեմ խնամակալութեան առժամեայ (6 ամսուան) կարգադրութիւն մը խնդրելով իրենց տղոցս որբանոց ընդունուելուն համար: Չեմ գիտեր թէ ի՞նչ պիտի որոշեն լիակատար նիստի մէջ: Մարդերու այս կարծրութեան նոր կը հանդիպիմ: Չարութեան փորձէն ետքը որմէ անցայ ամառը, այս խստութիւնը կը ճնշէ քիչ մը շատ: Շէնքեր կը չինեն որպէսզի տղայ ազատեն ու տղաքը կը մերժեն որպէսզի մեռնին: Ասոր խելքս չի հասնիր:

(*)— Հիւծախտին:

Քու մխիթարանքը անգոր կու գայ ինծի: Ու չեմ վեր-
լուծեր պատճառը: Վիշտը բացառաբար անձնական բան մըն
է: Դուրսէն անոր երկարած ամէն շարժում հեգնութեան
պէս կու գայ: Չեմ իսկ բացած Թէոդիկ գիրքը⁽⁵⁾. այնքան
ապուշ պէտք է ըլլայ անիկա ինչպէս միշտ:

Հոս իմ տեղեկութիւններս մինչեւ այս մարդոց գալը կը
դառնային քու անձիդ շուրջը նպաստաւոր ձեւով մը: Եթէ
Բարեգործականը պիտի ստանձնէ գործը, այն ատեն մեղք է
այդ չէնքերուն ու այս ծախքին: Որքանոցի իր կաղապարը
ինձմէ լաւ կը ճանչնաս: Սրբազանին⁽⁶⁾ ալ գրեցի այս
իմաստով: Աշխատեցէք որ միտքերը քալեն ուրիշ ուղղու-
թեամբ: Իմացական նկարագիրը փրկեցէք:

Զաւէնին⁽⁷⁾ հետ հաւանական գործակցութեան մը հա-
մար եղիր շատ խստապահանջ: Թող բաժնունին իրաւասու-
թիւնները շատ որոշ սահմաններով: Այն ատեն հանդարտ
սրտով կ'անցնիս գործին գլուխը: Ընելիք շատ բան կայ:
Բայց ընո՛ղը ուր:

Գիրքը⁽⁸⁾ արդէն մոռցած եմ: Եթէ հոս ղրկուած մար-
դոց խելքովն է որ անոր ճակատագիրը պիտի որոշուի, աւե-
լորդ է որեւէ փորձ ընել: Մեղք եղաւ ահագին աշխատան-
քին: Վէպ մը կրնայի գրած ըլլալ ու ապացուցանել Զաւէնին
թէ գրողի մը ժամերը տիրացուի մը ժամերուն չափ կ'արժեն
գոնէ:

Ու անապատը իմ շուրջը: Ու ողջակէզը իմ տունէս
ներս:

Գրէ ինծի: Նամակդ երկու երեք օր կը փոխէ աշխարհը:

սիրով
Յ. Օշական

19 Յունվար 927
Նիկոսիա

Սիրելի Վահան,

Ընդունեցի աճապարանքով գրածդ: Թէեւ ես շատ կարօտցած էի ընդարձակ գիրիդ, բայց այսքանն ալ բաւեց: Ներփակդ անձամբ յանձնեցի հասցէին: Յոյս ունէի որ դուն կու գաս... ատիկա անձնական փափաքէ դուրս բան մըն էր, քանի որ հաստատութիւնը ատով պիտի կրնար ինքզինքը գտնել: Չեմ թափանցեր մերժումիդ պատճառներուն: Բայց լաւ չես ըրած: Վասնզի տրուած ըլլալով հողի մարդերուն մտայնութիւնը, ես յուսահատ եմ այս հաստատութեան ապագայէն: Ըլլալիքը Բարեգործականի որբանոց մըն է առ առաւելն: Բայց ինչեր կարելի է ընել հոս: Կիրակոսեանին⁽⁹⁾ ընտրութիւնը անշուշտ քու տեղդ հեռու է բռնելէ: Բայց վերջապէս բարեկամ մըն է սա արդի պայմաններուն մէջ, ամէնէն քիչ անհեթեթը: Վասնզի հոս աւելի տխուր անուններ հասան: Ու ատոնց համար ոչ մէկ անկարելիութիւն ալ չ'երեւար: Վկայ է տիրող մտայնութիւնը: Պահեստի մարդեր տեղաւորելու սովորութի'ւնը:

Տուած խորհուրդիդ արդէն կը հետեւիմ շատ կանուխէն: Զսպած եմ ինքզինքս: Ու Զաւէնը հանդուրժեցի, պարզ այդ վերապահ դիրքովս: Մարդը օր մը կարծիք չունեցաւ ինծի յայտնելու, այնքան լաւ ու ձեռնհաս կը զգար ինքզինքը կառավարելու այս հաստատութիւնը ու կը խընդար քու վրադ, իմ վրաս, բոլոր մտաւորականներուն վրայ որոնք տաղանդը չունին վերջապէս հաւնոցներ չինել տալու

կամ գասա* մը բռնելու: Քիչէն շատ հասկցիր: Եթէ անցեալ շաբթու պզտիկ մը երեւցայ, պատճառը այն էր որ լրբութիւնը այլեւս իր սահմանէն կ'ելլէր: Ու հիմա նորէն մտածեմ իմ պատեանիս մէջ: Իմ ցաւս ինծի կը բաւէ ու կ'աւելնայ որպէսզի ժամանակ ունենամ ուրիշներուն փառասիրութիւններովը կամ փոքրոգութիւններովը զբաղելու:

Խնամակալութիւնը վերջապէս բարեհաճեցաւ երկու ամիս առաջ գրուած խնդրագրիս մերժողական պատասխան մը գրելու ուրիշի գրուած պաշտօնագրով մը: Քու նամակէդ Պ. Ինայէթեանին⁽¹⁰⁾ մտադրութիւնը բացորոշ էր: Հոս ալ այդպէս արտայայտուած էր: Բայց կատակերգութիւնը հոն է որ խնամակալութեան պաշտօնագիրը Յունվար 10ը թուականը կը կրէ, մինչ քու նամակդ՝ Յունվար 11ը: Արդ երբ օր մը առաջ որոշում մը կը գրուի, ու անոր տակը Պ. Ինայէթեան կը ստորագրէ, օր մը վերջը, չեմ հասկնար թէ ինչ հրաշքով Պ. Ինայէթեան իր ծանօթ առաջարկը կը բերէ: Անշուշտ ինծի համար չափազանց դժնդակ էր, այդ բարբարոս պայմանին ենթարկել ինքզինքս: Բայց տղոցս կեանքը պզտիկ արժանապատուութիւններէ վեր է աչքիս: Ու ես համակերպած էի: Հիմա պաշտօնագիրը ինծի ցոյց կու տայ Լառնաբայի ճամբան: Գրեցի այնօրն իսկ: Բայց չեմ կարծեր որ կարենամ հասնիլ ծախքին: Ամսականս գրեթէ ամբողջութեամբ յատկացուած է հիւանդիս: Հիւանդութիւնը սանձուած կը թուի: Երկու ամսուան մէջ 4 չորս քիւրյի յաւելում ունեցաւ: Ինչ որ նշան է կայուն վիճակի մը: Եթէ այսպէս կարենամ ամառ իյնալ, բժիշկը յուսալից է: Կը թղթակցիմ հետը ու դեղերը կը բերեմ Պուլկարիայէն:

Ընդվզեցուցիչ բան է որ պոռնիկներու տղաքը սպասուհիներով մեծցուին հոս, հաստատութեան մէջ, Մելքոնեանին դրամով, ու հայ գրողի մը պարտադրուի եղերական ճակատագիրը իր տղոցը մահուան լուռ եւ անկարող հանդիսատես մը միայն ըլլալու: Ասիկա դուրս է մարդերուն արդարութենէն: Բարեկամիս թելադրած էի որ խնամակալութեան կողմէ գոնէ օգնութիւն մը ըլլայ ուրիշ տեղ մը տղաքս պատսպարելու հարցին մէջ. հիմա որ Զաւէնը գործի է, այդ յոյսս ալ պարապ է: Ինծի կը մնայ գլուխ ծռել ճակատա-

գրին ու սպասել որ իջնայ վարագոյրը այս ողբերգութեան:

Ներփակ թղթակցութիւնը կու տաս բարեկամիդ որ-
պէսզի յանձնէ թերթին: Գիտեմ որ պիտի չգրես ինծի: Բայց
երկու տող ունեցիր տրամադրելի: Խնամակալութեան վրա-
յէն ցատկելով բարերարին⁽¹¹⁾ դիմում մը տղաքս կ'ազատէ.
վստահ եմ ատոր: Ձերի ատիկա երբ խնամակալները հոս
էին ու բարերարն ալ հոս, զիրենք նեղ դրութեան մէջ չձգե-
լու համար: Յոյս ունէի իրենց խղճին վրայ: Հիմա դեռ կը
տանիմ ինքզինքս, պարզապէս բարերարին ու խնամակա-
լութեան միջեւ նոր խնդիր մը չբանալու համար: Գուցէ ծի-
ծաղելի է այս փափկանկատութիւնը երբ մարդերու կեան-
քին հարցն է որ խնդրոյ առարկայ կը դառնայ: Բայց ամէն
բան չափ ունի: Վահան, բառ չի կայ զայրոյթս պոռթկալու,
երբ շուրջս կը նայիմ: Այս ամէնը գործն է անխիղճ ու անօ-
րէն մարդերուն: Հաստատութիւնը faveux-ի** օճախ մըն է
ու դուն կը հասկնաս թէ ուսուցիչներու չէ որ կ'երթայ այդ
նախընտրութիւնը: Բաւական գլուխ բռնեցի: Սրբազա-
նը⁽¹²⁾ չգրեց: Անոր ալ իմաստութիւնը վեր է իմ հասո-
ղութենէս:

Աւելորդ է ըսել թէ չեմ կրնար աշխատիլ գրականու-
թեամբ: Աւելորդ է դարձեալ հարցնել դասագիրքին⁽¹³⁾ ճա-
կատագիրէն: Աւելորդ է դարձեալ զբաղիլ Մելքոնեան
նուիրատուութեան շուրջը գրուելիք աշխատանքէն: Ասոնք
բոլորը անիմաստ բաներ են, երբ պէտք կայ Զաւէնը
գոհացնելու իր քէներուն եւ վրիժառութեանց ճամբուն
վրայ:

Սիրով
Յ. Օշական

(*) — Դրամարկդ:

(**) — Առանձնաշնորհում, նպաստ:

Գա՛հ. 5 Ապրիլ 1927

Սիրելի Օշական,

30 մարտ թուականով նամակիդ պատասխանը ընդունէ՛ որ ասկէ շուտ չէր կրնար գրուիլ:

Տրամադրութիւններս բարձր են թէ ցած՝ չեմ գիտեր. եթէ քիչ մը բարձրացած ալ էին՝ կը վախնամ որ Եգիպտոսը պիտի իջեցնէ զանոնք, իր տափակութեանը հաւասարեցնելու համար:

«Քեզ խորապէս շահագրգռող հարցին շուրջը բան մը չգրելու» պատճառ ունիմը չե՞ս հասկցած մինչեւ հիմա: Բայց ո՞րն է այդ հարցը, ա՛յնքան շատ են նոյն արմատին փակած այդ հարց-ճիւղերը: Ո՛րն ալ ըլլայ սակայն քեզի համար «հարց»ը, չգրելու առաջին պատճառս է անոնց ամէնքին անորոշութիւնը, գիրքեր լեցնելու չափ առատութիւնը, գրելու անօգուտութիւնը եւ ... փափկութիւնը:

Փութացի քեզի պատասխանել՝ ըսելու համար որ պըզտիկներուդ խնդրոյն վրայ իսկոյն խօսեցայ Տքթ. Սերոբեանին⁽¹⁶⁾: Մերժում կամ ոչ-մերժում՝ անցեալին մէջ, այդ չէ հիմա կարեւորը: Եղածը սա է, կարծեմ, որ Սերոբեան-Ինայէթեան այդտեղ անձնապէս ընդունեն որ 3 ամիս տղաքը դպրոց առնել, դուն գրեր ես պաշտօնապէս 6 ամիս առաջարկելով, եւ խնամակալութիւնը մերժեր է: Հիմա Տքթ.ը կը պնդէ որ Լառնաքա անգլիական գիշերօթիկ վարժարան մը կա՛յ (երբեք ազիլ) եւ կ'ըսէ որ իրենց օրէնքը յարգած ըլլալու, յառաջիկային ուրիշներու կողմէ նոյն

պահանջին առջեւ չգտնուելու համար՝ կը նախընտրէ թոշակը 2 ոսկի աւելցնել քան տղաքը դպրոց առնել։ Լառնաքայի հաստատութեան հասցէն եթէ դուն չգտնես՝ ինքը պիտի հայթայթէ, որովհետեւ իրեն վստահապէս ըսած են թէ ան գոյութիւն ունի։ Ուրիշ կարելիութիւն մը՝ սակայն. եթէ թոշակը 2 ոսկի աւելցնեն՝ չե՞ս խորհիր որ լաւագոյն է տղաքը իրենց մօրը հետ Պուլկարիա դրկել, իրենց մեծ-մօրը խնամքին։ Վերջապէս քո՛ւ գործդ է. ես այսքանը կը գրեմ. կը մնայ որոշել եւ բանի մը կապել։

Դասագիրքի եւ միւս աշխատութեանդ գործով զբաղելու ժամանակը չէ դեռ. ինչալլա՜հ մօտերս կուգայ այդ ժամանակը։

Քոյդ սիրով
Վահան Թէքէեան

Բարեւնե՛ր ամէնուն

Սիրելի Վահան,

Դուն ինքդ ալ գիտես որ կարելի չէ ազատիլ Թէոդիկին ձեռքէն, երբ ինծի պէս իր հասողութեան մէջ ըլլաս: Մտադրած եմ հայերէնի դասագիրքէն «Լուսաւորչի կանթեղը» իբր նմոյշ տալ իրեն⁽¹⁴⁾: Այնպէս որ ձեռագիրը բարի եղիր մէկուն ընդօրինակել տալու ու ղրկելու հոս որպէսզի ազատիմ աս ճանաւարին* ձեռքէն:

Շատ ու շատ կարօտով կը սպասեմ նամակիդ: Արաքսը⁽¹⁵⁾ մեկնեցաւ անցեալ շաբթու:

2 Մայիս 927

Սիրով
Յ. Օշական

(*) — Հրէշ:

1931 Մարտ 4
Նիկոսիա

Սիրելի Վահան

Առի նամակդ ու ներփակաները: Իրաւունք ունիս ոչինչ գտնելու Գալալճեանի⁽¹⁷⁾ քերթուածին մէջ: Առաջինը ունէր աւելի ներկայանալի կազմ: Բայց ասիկա սրբագրութեամբ ալ չի փրկուիր: Կը դարձնես իրեն: Միւսին (4 էջերուն մէջ) մասին ինծի կը մնայ անգամ մըն ալ խռովուիլ քու ազնուական խռովքիդ հետ: Ըսեր ես ինչ որ երեսուն տարիէ ի վեր թուղթ մրոտող ի պաշտօնէ քննադատներ չէին կրնար ըսել անհամար սիւնակներու մէջ: Մտքէս կ'անցնի որ Արեւի⁽¹⁸⁾ գրելիք յօդուածաշարքիս իբր նախամուտ դնես այս նամակը: Պիտի պատասխանեմ [անընթեռնելի], անշուշտ զգուշ կենալով polemique-էն*: Անգամ մը կը դնենք Զուարթնոցի⁽¹⁹⁾ յօդուածին այն մասը որ կը վերաբերի վիէննական դպրոցին. իբր texte*, հրաւիրելով Արեւի պատուական ընթերցողները քիչիկ մը համբերութեան: Յետոյ պիտի ընդլայնեմ տեսութիւններս: Ինչ որ արագ ու հպանցիկ էր հանդէսին մէջ, պիտի պարզեմ ու լեցնեմ, միշտ զգուշանալով հրապարակագրութենէն: Հաճելի աշխատանք է ինծի համար: Չեմ կարծեր որ թերթին տարողութենէն շատ հեռանամ: Կը սպասեմ հրահանգիդ: Գիտեմ որ թէքնիկ դժուարութիւններ կան շարունակուող յօդուածներու շուրջը: Բայց ինչ արած: Մահտեսեանը⁽²⁰⁾ մեղաւոր է որ չպատասխանեց ատենին ինծի: «Անգղիոյ կտուցից տակը»⁽²¹⁾ գրի առի Արեւին համար: Գրեցի ծաւալն ու ձեւը: Պատասխան ուղեցի իրմէ ու չտուաւ:

Ամէն անգամ որ քննադատութեան կը մղուիմ, կ'ընեմ ատիկա չարչարանքով: Օրաթերթի մը մէջ երբ մտածումը պրկես ու խորացնես, [մինակդ] կը մնաս: Չեմ ալ քրնար օրական, արդիական դառնալ: Այսպէս՝ տառապիլ է գրելը որեւէ թերթի: Բայց քեզի համար պիտի ընեմ: Գրելիքներըս, բացի վէպի շունչով մասէն, մտածումի էջեր պիտի ըլլան: Դժբախտութիւն է որ ատոնք պարտաւոր են գոյն ու կաղապար առնել մեր գրականութենէն, ուր ինծմէ չահագործուելիք մասը քիչ է այնքան: Չօպանեան⁽²²⁾ էջերով շատախօսութիւն կրնայ [ընել] մեր չհասկցած բաներուն շուրջը: Չեմ զարմանար ես որ հատոր մը բանը կը ջանամ քանի մը էջերու մէջ խտացնել:

Վէպս⁽²³⁾ ընդարձակ աշխատանք է: Անշուշտ գիտես անոր envergure^{***}: Հիմակուհիմա աւարտած է Ա. Հատորը: Նկատէ որ 500 գիրքի էջ է: Կը հարցնես թէ թերթօն կ'ըլլա՞յ: Վճռական չէ պատասխանս: Վասնզի վերլուծական եւ մտածող՝ հարկադրաբար դանդաղ է actionը^{****}: Բայց բարք, խորք, տիպարներ, մթնոլորտ, բանաստեղծութիւն, լեզու՝ միշտ: Բուն շարժումը պահած եմ Բ. Հատորին զոր սկսելու կորովս տկարացաւ: Տարի մը ամբողջ [տանջահար] աշխատանքի արդիւնք էր հատորը: Ու յոգնած եմ: Ինք իր մէջ ամբողջ է Ա. Հատորը: Կը դնես եթէ ուզես: Բայց ես կ'ուզեմ որ Պալմաթիւն⁽²⁴⁾ մէջ երեւի անիկա: Յուսաբեր⁽²⁵⁾ ուզեց արդէն: Կը տպեն կոր, գիրքի կը վերածեն կոր, գիրքը ամբողջութեամբ ինծի կը չգեն կոր: Չեմ գիտեր թէ որքան պիտի վճարեն բուն մարմինին համար: Գուրգէնը⁽²⁶⁾ բարեացակամ է: Կ'աշխատի որ ամէն գինով վէպը տպուի, որպէս[զ]ի սիրտ գայ վրաս Բ. Հատորը ըսկսելու: Իսկ երբ դուն վճռես վէպը տպել, ականջդ պիտի գոցես հարկաւ Աճէմեաններու⁽²⁷⁾, Զարգարեաններու⁽²⁸⁾, վերջապէս ռամկավարներու բոլոր թմբուկին դէմ: Գրական մեծ գործ է, Վահան: Աշխատած եմ հեռուէն մօտենալ Բըրուսթին⁽²⁹⁾: Պիտի ըլլայ Գ-Դ հատոր: Եթէ կրնաս գտնել առաքինի մարդ մը որ վճարել ուզէ թերթօնը, այն ատեն կը

տպենք Արեւին մէջ, գիրքի ձեւով ալ օգտագործելու համար: Կը հարցնես թէ ի՞նչ կ'ըլլան պահանջներս: Ծակ-պըտուկին⁽³⁰⁾ համար առի 50 ոսկի: Ասիկա անկէ մեծ վէպ է: Ինչ որ կրնաս ճարել, գրէ ինծի: Ես [անընթեռնելի] գիտես որ չեմ պահանջեր, բայց Վահանը «Արեւը» չէ:

Կ'ըսես Գեղարուեստասիրացի⁽³¹⁾ պարոններուն որ ազատ են իրենց յարմար նկատած յիմա՛ր սրբագրումները ընելու: Թէեւ ես ոչինչ տուած եմ որ բարքերը վիրաւորէ: Էականը դերասանուհի ունենալն է: Եթէ խակ ու տկար ուժերով է որ բեմ պիտի դնեն, խաղը կը մեռնի: [Տ.] Պէտք-րիսը⁽³²⁾ գիտէ խաղը: Պ. Վօլթէրն⁽³³⁾ ալ: Երկու կարող դերասանուհի: Ու խաղը ոտքի է: Այլապէս կը մեռցնեն: Ահա իմ պատասխանս:

«Պայքար» հանդէսը հոսկէ չէ որ պիտի վարէի: Անշուշտ գիտես թէ ինչ խուլ ու խոր ատելութեամբ մը գամուած եմ այս ապառաժին: Սխալ հասկցան Անգղին կտուցը որուն տակ է շարունակ լեարդս, Վահան: Ամերիկա անցնիլ, մոռնալ վարժապետութիւնն ու իր մղձաւանջը, վարել հանդէս մը եւ ծառայել գրականութեան այն քանի մը տարին կեանքի որուն շուքը երթալով կը նուազի: Այս է ծրագիրս: Յետոյ ուրիշ բաներ... Այսի՞նքն: Չե՞ս խորհիր որ Զօպանեանին ի հեճուկս կարելի է հանդէս հանել: Ու լաւ հանդէս: Կը խնդրեմ որ վէպին համար երբ դուն հրաժարիս զայն տպելու ծրագրէն, գրես Հրաչին⁽³⁴⁾: Կամ երբ կը պատասխանես՝ կը թելադրե՞ս ինծի որ ես ալ գրեմ իրենց:

Վահան, պարտաւոր եմ քեզի, մեր գրականութեան՝ այն չըրածիս համար որուն իրաւունքը ունի քու բանաստեղծութիւնդ: Քեզ ամբողջութեամբ ու վճռական պայծառութեամբ ներկայացնելու համար չեմ գիտեր ո՛ր օրիս կը սպասեմ: Մարդիկ հիմա իրար կը նպաստեն իրենց հոգիներովը: Կը տառապիմ քեզի չափ Սամսոնի⁽³⁵⁾ երկանաքարէն որուն նոր օրերու սէնպօլն^{*****} է տպագրական մեքենան: Գիտեմ զբաղումներդ: Շատ չեմ պահանջեր որ գրես ինծի:

*Բայց այս նամակին [անընթեռնելի] հարցերուն շուրջ մի
ըլլար ուշացող:*

*Սիրով ու յուզումով
Յ. Օշական*

-
- (*) — Բանավէճէն:
 (**) — Բնագիր:
 (***) — Տարողութիւն, ծաւալ:
 (****) — Դործողութիւնը:
 (*****) — Խորհրդանշան:

Հատուած

1931 Յունիս 23
Նիկոսիա

Սիրելի Վահան,

...Որքան տխուր է որ ըսելիքներդ սահմանուած ըլլան մերինին նման ժողովուրդի մը: Ես կը հիանամ պարզապէս հարստութեանը այն շտեմարանին ուրկէ ամէն օր բան մը կը նետես... խոզերու երամակին: Ու գիտես ի'նչ: Հրապարակագրութիւնն ալ քու կնիքին տակ կը դառնայ ուրիշ բան մը:

.....

Յ. Օշական

Բրոտրոմօ [1934]

Սիրելի Վահան,

Անցած ամսու գրած նամակդ հոս դարձիս առի: Անմիջապէս կը պատասխանեմ վասնդի քեզի չափ ու քեզմէ աւելի չահագրգռուած եմ Կիպրոս գալուդ հարցովը: Երբ Երուսաղէմ էի, Սրբազանը⁽³⁶⁾ Մելքոնեանը⁽³⁷⁾ թաղելէ ետքը տեսեր է Շահանը⁽³⁸⁾ ու անոր յայտներ քու իրեն գրածիդ իմաստը: Շահանին բացատրութեամբը Օննիկը⁽³⁹⁾ արդէն պայմանաւորուելու վրայ է եղեր Պուֆրէշին հետ. այնպէս որ Պուֆրէշը գացած է ձեռքէդ: Անմիջապէս ընդունէ ու վերջացուր. այսինքն պայմանագրութիւն կնքէ Մալեգեանին⁽⁴⁰⁾ հետ Մելքոնեանի համար: Տարիներ աշխատեցայ այդ գաղափարին մօտեցնելու Կիրակոսեանը. միշտ առարկեց թէ Բարիզի կեդրոնը հակառակ էր քեզի: Հիմա, Օշականը կարենալ զոհելու համար, երբ ինք կը շիջի, զոհը դպրոցինը կ'ըլլայ: Կրթական տեսուչ եւլն. բառեր են-էին որքան ատեն որ չարագուշակ ուրուականը ողջ էր: Հիմա յոյս ունիմ որ իրերը կրնան մօտենալ բնականի: Պիտի գաս ու տեսնես աչքովդ աղէտը որ Մելֆոնեան ըսուած հաստատութիւնն էր ազգին սրտին վրայ: Պիտի ճանչնաս մարդերը եւ գործը: Զըլլայ որ ընկրկիս:

Ես կապուեցայ Երուսաղէմ: Մթնոլորտը, առաջին առթիւ խրտչեցուցիչ, քիչ քիչ ընտանի դարձաւ տասնըհինգ օրուան մէջ: Պիտի կրնամ արդիւնք տալ ու այս վստահութիւնը ուժ կու տայ ինծի, մոռցնելու չափ վատութիւնը

[հալածագին] որ խաղցուած է գլխուս: Մալէզեանը գիտնալու էր որ դպրոցին մէջ դարձեալ Օշականն էր որ կ'աշխատէր ի հաշիւ Բարեգործականին, գոնէ քանի մը շարադրութիւն, [տաղերգ] եւլն. գրել տալով տղոց: Բայց հոգ չէ: Երբ գաս հոս, այն ատեն կը հասկնաս:

Շահագրգռուած եմ վէպիս⁽⁴¹⁾ հարցովը: Հետապնդէ:

Քու վրադ գրուած *étude*⁽⁴²⁾ ընդունուեցաւ մասնակցելու մրցումին: Սրբազանը *rapporteur*^{**} մը փնտռեց ամիսներով, վերջապէս գտաւ Մ. Կիւրճեանը⁽⁴³⁾ որուն շրկեց ձեռագիրը: Բայց արդէն ուսումնական խորհուրդը իր որոշումը տուեր է պսակելու Հ. Աճառեանի գործը⁽⁴⁴⁾: Այնպէս որ գրուածը չա՛հ եղաւ ինծի ու այդքան:

Այսօր այսքան:

Դեռ 1½ ամիս հոս եմ, ինծի պիտի գրես տուած հասցէովս: H. Oshagan Prodomo. Կը բաւէ:

Սիրով
Յ. Օշական

Այս նամակին ղրդապատճառն՝ կարելի եղածին չափ շուտ պայմանաւորիլն է:

(*) — Ուսումնասիրութիւն:

(**) — Տեղեկագրող:

1935 Մայիս 8
Երուսաղէմ

Սիրելի Վահան,

Երկար եղաւ որ նամակ չես գրեր: Զատիկին սպասեցինք: Յոյս ունիմ որ արձակուրդին ալ չես յուսախաբ ըներ մեզ:

Կը ղրկեմ երեսուն կտորներ: Աշխատած եմ lecture expliquée* գիրքին վրայ մնալ, որքան կարելի է ատիկա:

Քեզմէ պիտի առնեմ տակաւին Վանայ տառնիսը եւ Մանկութեան պարտէզին մէջը:

Եթէ ձայնդ բաժին մը ունի, — ու գիտեմ թէ ունի — արտայայտուէ ի նպաստ գիրքին⁽⁴⁵⁾ ետեւ յաւելելիք գրական պատմութեան որ առանձին դասագիրք մըն է արդէն ու գիրքին համար անհրաժեշտ: Իսկ եթէ ոչ, ուշադրութեամբ կարդա՛ Զերագի եւ Որքերեանի վրայ գրածներս: Գատրան** այդ է ըլլալու հեղինակներու վրայ գրուելիքին (իրենց կտորներուն տակ): Անշուշտ առաջին գիծի հեղինակները ինձմէ կ'առնեն 1-2 երես ընդլայնում: Ես դասատուութենէ գիտեմ որ այդ բաժինները միշտ տհաճութեան կը հանդիպին տղոց եւ ուսուցիչներու կողմէ: Ի՛նչ որ է: Ես կը սրբագրեմ միւսները:

Պէշիկթաշեանէն⁽⁴⁶⁾ ունիմ ոտանաւոր մը տաղաչափուած աշխարհաբարով: Ան ալ կը ղրկեմ գալ առաքումին:

10-15 կտոր մնաց որպէսզի ամբողջանայ ընթացքը: Եթէ ատոնց քննութիւնը անհրաժեշտ չէք նկատեր՝ չեմ ղրկեր:

Ուրիշ աշխատանք չըրի այս վազանձին: Տաքերը նեղեցին զիս 8-10 օր: Բայց դարձեալ գործ ելաւ մէջտեղ:

Աշխատանքը կը մոռցնէ կոր ամէն տրտմութիւն, նոյնիսկ մահացու նկատուածը:

Դուն ի'նչ կ'ընես: Ձապէլ Եսայեանէն նամակ առի: Շատ խանդավառ էր իր Հայաստանով:

Ինձմէ կտոր չեմ դներ հաւաքածոյին մէջ: Զիս արդէն բաւականէն աւելի կարդացած կ'ըլլան:

Սիրով
Յ. Օշական

(*) — Բացատրեալ ընթերցանութիւն:

(**) — Շրջանակը:

14 Մայիս 935

Երուսաղէմ

Սիրելի Վահան,

Այսօր առի նամակը, այսօր ալ կը պատասխանեմ:

Տիւսարի մասին ըսածդ ուղղելի է: Ես կը յիշեմ տեղ մը կարդացած ըլլալ ու այդքան: Մնացածը կը սրբագրուի:

Զրաքեանի մասին նոյն դիտողութիւնը Շահանն ալ ըրաւ: Կ'ընդունիմ որ պաշտօնական filiation* մը չէ ունեցած: Բայց կ'ենթադրեմ թէ իր տարօրէն ընկալուչ խառնուածքը մէկ երկու ընթերցումով իւրացնէր այդ կերպը: Ասիկա վարկած է դարձեալ: Ինչ որ իրողութիւն է, երկու թէքնիկներու նոյնութիւնն է: Շահան Զրաքեանը անկախ կը կարծէ: Դո՞ւն: Ես նոր գիրքին մէջ հարցը դրի, առանց լուծելու:

Որոնք են սա քու հարկադրիչ ծրագիրներդ: Սրբազանը կ'ըսէ թէ խանդավառ ես Հայաստանով: Ինծի չ'իյնար քեզի խելք տալը. բայց ապահով եմ որ հոն քեզ կը չորցնեն այդ հաստ տափակութիւնները: Մի մտածեր տեղէդ հեռանալ. որչափ ալ դժնդակ ըլլայ այդ զրկանքը քու տարիքիդ ու հոգիիդ: Երեքս ալ խոր փափաքով կը սպասենք որ գաս ամառը: Գալ ամառ մենք ալ կուգանք քեզի. Շահանը յօժար է. կը մնայ Սրբազանը համոզել:

Գիրքին մասին կը գրեմ կրկին: —5-600 էջնոց գործ մը Բարեգործականին պիտի արժէ երկու դեղին օրինակը: Եթէ առանց շահի պիտի սպառէ՝ մէկ տարուան մէջ անիկա կրնայ տակէն մտնել վրայէն ելլել սթոքին**: Այնպէս որ ծախքի խնդիրը անարժէք է որքան անիրաւ: Ես արդէն tenir ալ չեմ ըներ*** առաջարկիս վրայ: Կարեւորը՝ կտորներուն

ընկերացող հեղինակներու մասին գրուածին փոփոխելիութիւնն է, ըստ նոր առաջարկի: Ատկէ երկու նմոյշներ տուի: Կարդա ուշադրութեամբ: Չերազն ու Որբերեանն են կարծեմ: Եթէ այդքանը բաւ է, շատ է, պակաս է, ճշդեցէք ու ըստ այնմ հրահանգեցէք, որպէսզի երբ սկսուի գործին տպագրումի, փոփոխութիւնները կատարուին միջին տարողութեամբ: Ոչ դատում ոչ ալ օրհնաբանում. այլ ներկայացում միայն: Եթէ այս ծրագրով հեղինակները տամ գործին ընթացքին, ալ վերջաբանին հարկ չի մնար, կ'ենթադրեմ: Ունիմ սեռերու ու ատոնց evolutionին**** վրայ ողջունուած աշխատանք մը մտքիս մէջ. անշուշտ միայն մեր գրականութեան domaineէն*****: Ուր փոխանակ անձերու՝ սեռերուն կեանքը նկատի առնուի: Բայց ատիկա վերջի գործ է: Կարեւորը գործին ծաւալն է:

Ղրկուած կտորները կարդա եւ որոշում տուր հետեւեալ առաջարկիս ալ մասին: Մնացեալ-10-20 կտորները պիտի դնեմ բոլորովին մերկ. բայց խումբ խումբ: Ամէն խումբի ետեւ ամփոփ հարցարանով որոնք մէկ էջը չեն անցնիր: Նպատակ՝ սեռերու նկարագիրը, մեծ գիծերը ճշդել ընթերցողին միտքին մէջ: Ասիկա կ'ամբողջացնէ բնագիրներու քանակը:

Չես ըսած թէ Վանայ տառերին տեղը ինչ առնեմ: Այդ կտորը ինծի համար յատկանշական է Չարենցի, Իսահակեանի, Պէշիկթաշլեանի, Զարեանի «Հայաստաններուն» մէջ: Այդ խումբին մէջ իր տեղը կը լուսաւորէ ինչպէս քեզ, նաեւ միւսները: Գրէ ամէն պարագայի կարծիքդ ու առաջարկդ:

Պէշիկթաշլեանի թարգմանութիւնը կը ղրկեմ ներփակ: Եթէ ուզես, կատարէ աշխատանք: Ես գիրքին մէջ քուկդ պիտի դնեմ:

Յ. Օշական

(*) — Կապ, աղերս:

(**) — Պահեստին:

(***) — Ձեմ պնդեր:

(****) — Եղաշրջում:

(*****) — Մարգ:

8 Յունվար 937
Երուսաղէմ

Սիրելի Վահան,

Նամակդ առի, քերթուածը⁽⁴⁷⁾ կարդացինք Շահանին հետ: Իմ ու իր տպաւորութիւնը կը նոյնանայ քերթուածին «առաւել» անկեղծութեան առջեւ: Արդարեւ Ե. Հ. ը⁽⁴⁸⁾ աւելի տաք, յոյր, կը քերէր եզրերն հասարակաց, զգայնութեան մը որ քու խառնուածքիդ հետ չէ եղած միշտ: Խորապէս անհատապաշտ, ինքզինքդ տալու միայն հակամէտ, դուն գերազանց ես այդ լարերուն վրայ: Հասարակաց յոյզերը անշուշտ անհաղորդ չեն քեզի: Բայց...

Ներկայ յաւելուածը միւս կողմէն փաստ մըն է վերջալուսային մեր հոգեբանութեան: Կտրուած ենք ամէն բանէ: Ու այդպէս կատարեալ չէր այդ բաժանումը տակաւին երէկ, երբ, օրինակ՝ գիրի առիւր Ե. Հ. ը: Ինչ կրնանք ընել: Գալով զայն հրապարակ հանելու հարցին. Շահանն ալ ինծի պէս կը կարծէ թէ froisser* կ'ընէ քու բարեկամներէդ մէկ քանին երբ հրատարակուի: Այդ բարեկամներէդ կարեւորը անշուշտ Սրբազանն⁽⁴⁹⁾ է: Համոզուած եմ որ հոն յայտնուած գաղափարներուն լիովին համամիտ է: Բայց մարդ մըն է որ չ'ուզեր որ ըսուին այդ բաները: Ինձմէ թելադրութիւն. —կամ՝ սպասել ու հատորի մը մէջ տեղ տալ անոր: Կամ՝ գրել զայն Սրբազանին (մենք ոչինչ ըսինք ու կ'ըսենք իրեն քերթուածին մասին) ու կարծիքը ուղեւ:

Լիբանանի մէջ թերթի մը խմբագրութիւնը կրնայ քեզ խանդավառել շատ շատ մէկ տարի: Իր օգուտները ունի ան-

չուշտ: Բայց հոն հասարակաց հոգեբանութեան մը վրայ կռթնելու բախտէն զուրկ ես: Սուրիան ղժբախտ է թէ իբր հոգի թէ իբր կեանք: Համամիտ եմ հոգ հանդէսի գաղափարին: Բայց ամսեայ: Տասնըհինգ օրեայ թերթ մը թերեւս *venteի*** տեսակէտով դիւրութիւններ կը ներկայէ, բայց արուեստի տեսակէտով մեծ անյարմարութիւններ ունի: Ամէն պարագայի տողերուդ մէջ կապարի պէս կշռող ժանգոտումիդ դէմ սփոփիչ դարման մըն է գործը, ուր որ ըլլայ:

Համամիտ չեմ քեզի երբ Ն. Գ.ի⁽⁵⁰⁾ մէջ լոյս տեսած վէպը կը դատապարտես: Դուն արդէն Օչականէն որեւէ վէպ չես կրնար կարդալ: Ատիկա խառնուածքի խնդիր է: Բայց քու կարդալու անկարողութիւնդ արդարացնել փորձել վէպէն. ահա ինչ որ շատ է: Այդ ապահովութիւնը ունիմ այն օրէն երբ Proust չկրցար կարդալ: Բայց ատիկա փաստ չի կազմեր թէ Բրուսթի գործը մսագրութիւն է: Այդ գործը կուգայ նոյն ներշնչումէն ու նոյն արուեստի ըմբռնումներէն որոնք իմն են եղեր: Ի վերջոյ քու կազմութիւնդ, ախորժակներդ, նախասիրութիւններդ ուրիշ մարզերու վրայ իրենց լրումին հասած, չեն միանար ինծի վէպի կալուածին մէջ:

Պոտլէռէն⁽⁵¹⁾ թարգմանութիւններդ հոգեկան խորունկ *artebեր**** են: Անոնց վրայ նայիլ իբր «ծուլութեան պահեր»ու զբաղանք անգթութիւն է քու կողմէդ: Վարուժան⁽⁵²⁾ խանդավառ էր այդ երազով: Սիպիլ վարդաջրեց այդ դեղին դեղահատները, ձեւազեղծելու չափ անոնց հարգատ դալկախտը: Ոչ ոք մեր մէջ այդ ոգին կարող է փոխադրել մեզի որքան դուն:

Գալով Արեւի վաստակաւոր ու մեծ գրողին՝ հոսկէ գըրած թղթակցութեանց, քեզի չափ չբարկացայ⁽⁵³⁾: Իմ վրայ գրածները Շահանը կարդացեր էր (ես ոչ): Ինչպէս այն ատեն, Սիոնի վրայ իր յարձակումը անով ուշագրաւ է որ հրատարակող կը գտնէ: Անցեալ տարի ծանրօրէն հիւանդացաւ: Առժամաբար իր դասերէն մաս մը յանձնուեցաւ ինծի: Յետոյ բանից դուրս եկաւ որ տղաքը մերժեցին այլեւս այդ դասերը իրմէ առնել: Հոս է առաջին հանգոյցը: Ու մարդիկ

գրական քննադատութիւն կ'ընեն հաշիւներ մաքրելու համար: Զեմ գրադիր իր հոգեկան փոքրոգութեամբը (վասնդի ալ հասարակաց է ատ ամէն կողմ) բայց ինչպէս գրեցի Ա. Յակոբեանին, իր կիսադարեան ուսուցչի աշխատանքը ինքնիր մէջ կ'արժէ բան մը. իրական, սեւ վաստակ մը, որ պէտք է գնահատուի: Սրբազանը դէմ չէ որ Յոբելեան մը փորձուի Եգիպտոս, բայց ինք չի նախաձեռներ: Միւս կողմէն այդ Եգիպտոսը որ քեզի հանդէպ այնքան տգեղ կեցաւ, պիտի կրնա՞ր բան մը ընել Պ. Քննադատին: Կը տարակուսիմ: Հոս Սրբազանը աշխատեցաւ լուծում մը պարտադրել: Հինգ ոսկի տրամադրուեցաւ իրեն որպէսզի դասագիրքեր հրատարակէ: Տարեկան վաթսուոն ոսկի մը կ'ունենայ: Նախ ընդունեց յետոյ մերժեց որպէսզի լրագրով շանթաւ ընէ: Զեմ գիտեր կայ իրեն չափ միամիտ մը որպէսզի հաւատայ թէ թերթի մէջ երկու երեք սիւնակ հայհոյութիւն օխա մը հայ կը վախցնեն: Զղուանք է այս աշխարհը:

Գրէ ինծի աւելի յաճախ: Նախասիրութիւնդ երթայ հանդէսին: Կ'օգնենք քեզի. Շահանն ու ես. ամէն կերպով:

Շնորհակալ եմ [սրտագին] շնորհաւորութիւններէդ: Պիտի աշխատինք լաւ աշակերտներ տալ, եթէ երբեք գետին տրուի մեզի. մասնաւորաբար՝ ինծի որ հերետիկոս մը կը նկատուիմ հոս:

Սիրով ու կարօտով
Յ. Օշական

(*) — վիրաւորել, դժգոհեցնել:

(**) — վաճառք:

(***) — Արուեստի գործ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներկայ հատորին մէջ տեղ գտած եւ լուսապատմէններէ վերծանուած բոլոր նամակները, բացի Թէֆէեանի 28 Սեպտ. 1926 թուակիրէն, առնուած են Երեւանի Զարեմցի անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարանը հանգրուանած Վահան Թէֆէեանի արխիւէն:

Անոնք բոլորն ալ անտիպ են, ի բաց առեալ Օշականի 8 եւ 14 Մայիս 1935 թուակիրներէն, որոնք մեր կողմէ առաջին անգամ լոյս ընծայուած են «Շիրակ» ամսագրի 1983-ի Նոյ.-Դեկտ. միացեալ թիւին 52-րդ եւ 53-րդ էջերուն վրայ, այնուհետեւ տեղ գրաւելու համար Օշականի «Նամականի»-ին Ա. հատորին մէջ (Պէյրութ, 1983, էջ 14-16):

- 1.— Կարելի չեղաւ ստուգել թէ այս անաւարտ ու անստորագիր նամակը ամբողջացած ու ղրկուած է արդեօք Օշականին:
- 2.— Առհասարակ՝ ամբողջ կամ բանտ: Հոս՝ մասնաւորաբար՝ ֆրանսական միապետութիւնը խորհրդանշող բանտը, որուն գրաւման թուականը՝ 14 Յուլիս 1789, կը նկատուի սկիզբը ֆրանսական յեղափոխութեան:
- 3.— Կ'ակնարկուի Կարապետ Մելգոնեան բարերարը:
- 4.— Զկրցանք ստուգել ինքնութիւնը այդ «ղրկուած»ներուն, որոնք կը թուի թէ Եգիպտոսէն անցած են Կիպրոս յատուկ առաքելութեամբ մը, հաւանաբար ըլլալով Մելգոնեան Կրթ. Հաստատութեան խնամակալներ:
- 5.— Խօսքը Թէոդիկի «Ամէնուն Տարեցոյցը»ի հերթական հատորին մասին է:

- 6.— Թորգոմ Արֆ. Գուշակեան, Առաջնորդ Եգիպտոսի հայոց, ապա մասն. Պատրիարք Երուսաղէմի: Բանասէր:
- 7.— Զաւէն Արֆ. Եղիայեան, Պատրիարք Կ. Պոլսոյ Աթոռի:
- 8.— Ակնարկութիւնը կը վերաբերի «Հայ Գրականութիւն» հատորին:
- 9.— Գրիգոր Կիրակոսեան, տնօրէն՝ Մելգոնեան Կրթ. Հաստատութեան, ապա մասն. ընդհ. տնօրէն Հ. Բ. Ը. Մ.ի:
- 10.— Անդամ՝ Մելգ. Կրթ. Հաստատութեան խնամակալութեան:
- 11.— Տես՝ ծանօթ. թիւ 3:
- 12.— Տես՝ ծանօթ. թիւ 6:
- 13.— Տես՝ ծանօթ. թիւ 8:
- 14.— Տես՝ Թէոդիկի «Ամէնուն Տարեցոյցը»ի 1928-ի հատորը, էջ 377-385:
- 15.— Արաքսի Աստարեան, Օշականի կողակիցը:
- 16.— Անդամ՝ Մելգոնեան Կրթ. Հաստատութեան խնամակալութեան:
- 17.— Երուանդ Գալալեան, հեղինակը՝ «Անգին» խորագիրով ֆերբուածներու հատորիկին:
- 18.— Թէֆէեանի խմբագրութեամբ 1915-ին Գահիրէ հրատարակուիլ սկսած օրաթերթ, որ մինչեւ օրս կը շարունակէ լոյս տեսնել իր-րեւ պաշտօնաթերթ Ռամկավար Ազատական Կուսակցութեան:
- 19.— Փարիզի մէջ Հրանդ Բալուեանի խմբագրած հանդէսը, որ լոյս տեսած է ընդմիջումներով 1929-1948:
- 20.— Օննիկ Մահտեսեան, հրապարակագիր եւ խմբագիր «Լիբել»ի 1929-1931:
- 21.— Քննադատական բնոյթի 44 յօդուածներու շարքը, որ լոյս տեսած է «Յուսարբեր»ի մէջ:
- 22.— Արշակ Զօպանեան:
- 23.— Խօսքը կը վերաբերի «Մնացորդաց»ին, որ իրր թերթօն հրատա-րակուած է «Յուսարբեր»ի մէջ:
- 24.— Ռամկավար Ազատական Կուսակցութեան Պոսթոնի պաշտօնա-թերթը:
- 25.— Հ. Յ. Դաշնակցութեան Գահիրէի պաշտօնաթերթը: .
- 26.— Գուրգէն Մխիթարեան, խմբագիրը «Յուսարբեր»ի, գրականա-գէտ:
- 27.— Լեւոն Անէմեան, խմբագիրը Գահիրէի «Եգիպտահայ Տարե-ցոյց»ին եւ «Փունջ» պարբերաթերթին, ռամկավար-ազատական գործիչ:

- 28.— Վահան Զարդարեան, հրատարակիչ, հեղինակ «Յիշատակարան»
երկհատոր ժողովածուին:
- 29.— Մարսէլ Բրուսթ (1871-1922) ֆրանսացի վիպասան:
- 30.— 1928-29 գրուած վէպ:
- 31.— Հայ Գեղարուեստասիրաց Միութիւնը, որ 1920-ին հիմնուած է
Գահիրէ եւ կարն ատեն մը հոս սկսած է վայելիլ հովանաւորու-
թիւնը Ռամկավար Ազատական Կուսակցութեան:
- 32.— Պէաթրիս Եկէնեան-Վոլթեր, դերասանուհի:
- 33.— Վոլթեր Օննիկ, բեմադրիչ եւ դերասան, ամուսինը Պէաթրիսի:
- 34.— Հրաչ Նրուանդ, ռամկավար-ազատական գործիչ ու խմբագիր:
- 35.— Աստուածաշնչային հերոսը:
- 36.— Տես՝ ծանօթ. թիւ 6:
- 37.— Տես՝ ծանօթ. թիւ 3:
- 38.— Շահան Պէրպէրեան, իմաստասէր, երաժշտագէտ ու մանկա-
վարժ:
- 39.— Օննիկ Պէրպէրեան, եղբայրը՝ Շահանի, արուեստաբան ու եր-
գահան:
- 40.— Բանաստեղծ եւ Հ. Բ. Ը. Մ.ի ընդհ. վարիչ-տնօրէն Վահան
Մալեգեան:
- 41.— Այսինքն՝ «Մնացորդաց»ի:
- 42.— Կ'ակնարկուի «Արեւմտահայ Գրականութիւնն ու Վահան Թէֆե-
եան» երկը:
- 43.— Արձակագիր Միքայէլ Կիւրնեան:
- 44.— Խօսքը կը վերաբերի «Պատմութիւն Հայերէն Լեզուի»ին:
- 45.— Այսինքն՝ «Հայ Գրականութիւն»ը:
- 46.— Մկրտիչ Պէշկեօշեան:
Այս առիթով կ'արժէ նշել, թէ ԳԱԹ-ի մէջ, Թէֆէեանի արխիւա-
յին զանազան նիւթերու կողքին, կը պահպանուին Օշականի եւ
Թէֆէեանի ձեռագրերով աշխարհաբար վերածումներ Պէշկեօշե-
անի տաղաչափաւ գործերէն:
Օշական իր «Հայ Գրականութիւն» դասագիրքին մէջ տեղ տուած
է «Առ Զեփիւն Ալեմտաղի»ի Թէֆէեանական վերածումին:
- 47.— Ըստ երեւոյթին խօսքը կը վերաբերի «Դիմառնութիւն Առ Հայ-
կական Եկեղեցին» գիրքուածին:
- 48.— «Եկեղեցին Հայկական» քանաստեղծութիւնը:
- 49.— Տես՝ ծանօթ. թիւ 6:

50.— «Նոր Գիր» հանդեսը:

51.— Շարլ Պոտլեն (1821-1867) փրանսացի բանաստեղծ:

52.— Դանիել Վարուժան:

53.— Կարելի չեղաւ ստուգել ինֆնութիւնը ակնարկեալ անձին:

ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ

ՆԱՄԱԿ Յ. ՕՇԱԿԱՆԷՆ

1945, Երուսաղէմ, Յունիս 21

Արգոյ տէր խմբագիր,

«Յոռւարեր» օրաթերթի նախանցեալ Շաբաթօրեայ թիւին ձեր «Սեւ ու ցերմակ» խմբագրականին մէջ, ողբացեալ Վ. Թէքէեանի շուրջ յառաջ եկած աղմուկը դատելու ատեն, վրդովեալ ակնարկներ ալ պէտք էիք զգացած սահեցընելու... Երուսաղէմ, հանգուցեալ բանաստեղծին հոգեհանգիստին առիթով յայտնուած կարծիքներուն, զանոնք գտնելով չափազանց, ոչ արդար: Ու հրակէ՛րը զգաստութեան, առնուազն պարկեշտ յարգանքի:

Վ. Թ. ի մահը յաջորդող ամսուն Գահիրէ եւ այլուր երեւան եկած արտայայտութիւնները թող ներուի ինծի արժեւորել աւելի անդին քան գուցէ իրականութիւնը: Անոնք անտարակոյս ունին առարկելի կողմեր (այս մասին՝ կարդալ լոյս տեսնելիք հատորին մէջ — Սփիւռքը եւ իրաւ քանաստեղծութիւնը — որուն կէսը գիրի է ինկած մահէն անմիջապէս վերջ. իմ տպաւորութիւնը այդ ամենէն): Կը գոհանամ հոս, յայտնելով իմ խորունկ ցաւը տարօրինակ փորձերու առջեւ: Տարիներով բանաստեղծը ամենէն սողոսկուն դաւերով հալածող մարդեր չամչցան լալահառաչ խօսքերով անարգելու — աւելորդ գովքը ամենէն ծանրն է անարգանքներուն, ինչպէս սուտ արգահատանքը՝ ամենէն

անգութ ծաղրը մարդոց մէկ մասին: — Դիակ չահագործելու առաքինութիւնը: Ու սրտաբո՛ւխ կեղծիքը ուրիշներու, այս անգամ բանաստեղծութեան հետ որեւէ աղերս չունեցող, որոնք առտուն կանուխ քերթող արթնցան, Վ. Թ. ի ուրուականին քերթուածներ ձօնելու: Կ'երեւի թէ ճակատագիրը երբեմն հեղինակն է անսրբազրելի կարգադրութեանց, վճիռներու: Քառասուն ու աւելի տարիներ գրեթէ միակտուր, սեւ, աննահանջ ուրացումը, ոսկի՛, սուրբ, անհուն լուսփիւնը, գործադրուած իրաւ բանաստեղծի մը գործին երեսին, մէկէն, կախարդական շրջումով մը, մատի հարուածով մը, մեր ափիքերան զարմանքին առջեւ, կը փոխուէր միակտուր, լուսապայծառ, հեռարձակ պաշտամունքի, լեզուն արձակելով բոլոր անոնց, որոնք հազիւ թէ կը յիշէին գոյութիւնը կիսադարեան նահատակութեան մը: Ես քիչ մը աւելի դառնութեամբ ու հանգամանօրէն վերլուծեմ իրողութիւնը: Իրաւ խօսքեր ալ կարգացի անշուշտ, այնքան քիչ սակայն, այդ մասին: Կ'անցնիմ:

Ներկայ գրութիւնը կը շօշափէ ուրիշ քանի մը նկատողութիւններ, չըսելու համար հարցեր:

Ա) — Գայթակղած էք, որ բանաստեղծ վարդապետ մը «յարգուած» (չակերտը իմն է ու կը բուսնի ընթերցումէն նամակի մը, այս առթիւ ստացուած, ուր տասը տող կադմելու բաւող անարգանք է դիւցազներգուած այդ յարգուած քննադատի հասցէին, մէկու մը կողմէ, որ իր գրիչը պարտական է սակայն այդ քննադատին: Թող զկանայս եւ ըզմանկտի, տեղն էր ըսելու, քառասուն տարի է իվեր անարգանքի վարժուած աշխատողի մը երեսի՛ն) քննադատի մը ներկայութեան յայտնած ըլլայ տարօրինակ որքան անհեթեթ կարծիքը թէ Գեղօն Սօսեաց անտառինը կը պարունակէ ամբողջ Սիամանթոն: Ներկայ նամակը գրուած է լուսաբանելու ոչ թէ գայթակղեալ միտքերը — որոնք աւելի արդար բան մը պիտի ընէին բանաստեղծին գործը կարդալով, քան թէ առանց զայն կարդացած ըլլալու անոր յիշատակին համար դիրք բռնելով — հանդարտեցնելու, այլ այդ նախադասութեան քննատրուիլ ուզուած անիմաստ, անհեթեթ չարափոխութիւնը բացատրելու: Թերեւս դուք ու ձեզի հետ

ձեր ընթերցողները ու հետեւաբար Սփիւռքը — իր ընտրա-
 նիին մէջ — կ'անգիտանաք որ այդ նախադասութեան իմաս-
 տը, նոյնութեամբ, ինչպէս կ'ըսեն, կուգայ քննադատա-
 կան փորձէ մը, նոր լոյս տեսած Հրաշալի Յարութիւն հա-
 տորին վրայ, Մեհեան ամսաթերթին մէջ, 1914-ին: Հոս
 պարտք կը զգամ աւելցնելու որ Մեհեանի խմբագրական
 սպայակոյտին — ներեցէք խոշոր բառին, երիտասարդներ
 էինք ու կը սպառնայինք — մաս կը կազմէին լուսահոգի
 Վարուժանն ու աստուածային Գեղամը (Բարսեղեանը):
 Օրէնք էր ու անաչառօրէն պարտադիր, հանդէսին մէջ լոյս
 տեսնելու սահմանուած գրութիւնները կարգաւ խմբագրա-
 կան լիազումար նիստին մէջ, կատաղի դատաւորներու առ-
 ջեւ, — ամէն մէկս ունէինք այդ խստապահանջութիւնը նախ
 մեզի, յետոյ ուրիշներու հանդէպ: Այդ ընթերցումը դուռ
 էր վէճի, տաք խօսքերու, երբեմն բաժանման յանգելու
 չափ զօրաւոր կիրքեր յառաջացնող (Երդուեալն երու խում-
 բին միւս անդամներն էին Ահարոն, Կոստան Զարեան եւ
 տողերուս հեղինակը): Ինծի յանձնուած էր Հրաշալի Յա-
 րութիւնը՝ իբր անողոք դատաւորի՝ որ տուած էր փաստը իր
 խստասրտութեան, տապալելով մատաղ եւ ատոք համբաւ-
 ներ: Զեմ ենթադրեր, որ չարամտութիւն կար այս կարգա-
 դրութեան մէջ: Ես ինքս ուրախ էի, նոր զոհի մը հեռանկար
 վայելքովը: Վճռած էինք մաքրագործել մեր գրականու-
 թիւնը իր սուտ, հին աստուածներէն: Շաբաթ մը վերջը
 բերի իմ յօդուածը: Ընդհանուր լռութեան մէջ կարդաց Գե-
 ղամը: Վերէն վար իրաւ խօսքեր, էին իմ ըսածները: Ու երբ
 խնդրոյ նիւթ նախադասութիւնը (այժմու Սիամանթոն փո-
 խարինուած էր հոն հայ յեղափոխական գրականութեան)
 ինկաւ այդ լռութեան մէջ, նայուածքս յառեցաւ Վարուժա-
 նին: Քաղցր իր դէմքը կը պահէր զգաստ ու գեղեցիկ իր
 խաղաղութիւնը: Ոչ մէկ վրդովում հայ յեղափոխական
 գրականութեան ամենէն հանգամանաւոր բանաստեղծին
 գրական խղճմտանքին մէջ: Գեղամն ու Ահարոնը իրենց
 կարգին չըրին ոչ մէկ առարկութիւն: Մեզմէ ո՞վ կ'անգի-
 տանար, թէ ինչ էր խորքը Վարուժանի, Սիամանթոյի բա-
 նաստեղծութեան: Ինչ որ Սիամանթոյի հինգ-վեց հատոր-

ները, աւելի հանգամանօրէն, մանրամասնութեանց աւելի շփեղ հանդէսով մը ծրագրած էին թելադրել, Գեղօն Սօսեաց անտառինը կ'ընէր երեսունը հազիւ անցնող տողերու մը-
թերքով մը: Ոչ ոք, դատաւորներէն, արժէքի հարց յուզեց:
Վ. Թ. ամենէն պարզ ու նոյնքան սիրտ գտնող տողերով
կ'արտայայտէր մեր ողբերգութիւնը, մեր ազատագրու-
թեան աննուաճ երազը: Ասիկա այնքան յստակ էր որ լրջա-
ցանք ամէնքս:

(Ի դէպ, յիշատակ մը: 1917-ին, թրքական ոստիկանա-
պետին հետ տեսակցութեան մը ընթացքին, հայկական
բաժնին քաղաքական հարցերու տնօրէնը, որ կը հասկնար
մեր լեզուն, յիշեց իմ այդ նախադասութիւնը ու իմ կու-
սակցութեան մը չպատկանելու արտաքին փաստը կործա-
նեց հոգեկան փաստով մը, որ չէր խաբեր: Ամէնքս ալ մէկ
էինք, թուրքին աչքին. ամէնքս ալ կը սպասէինք այդ խոր-
հըրդանիչ իշխանին, անուննին անյայտ, բայց մեր բոլո-
րին հոգիին խորը քանդակ անխորտակելի):

Նոյնն է պարագան Յարութեան շունչն է ահա քեր-
թուածին, որ դարձեալ կարճ տողերու մէջ կը կրկնէր Յեղին
սիրտը հատորին լուսառատ լաւատեսութիւնը, այս ժողո-
վուրդին վերածնման անմահ խորհուրդը: Տեղն է կարդալու
Վարուժանի Նաւասարդեանը, «Նաւասարդ» տարեգիրքին
մէջ (1914) .

Հանճա՛րդ Հայկեան, Նաւասարդեան սա տօներուն

Արեւափառ՝

Ա՛յ վերածնէ փլատակներէն. եւ փառագոյ

Քընարըդ ա՛ն:

Յանո՛ւն Ուծին, յանո՛ւն Գեղին, մըտիւր մեհեանն

Աստուածներուն.

Ջահը ճեղքիդ՝ քազնէ քազին համասփոէ՛

Հուր ու արիւն:

Եւ քարճացուր Անահիտի ծիծերն ի վեր

Բաժակդ նուռ,

Յետոյ գոհուող քերթողներուն սիրտին վրայ

Լեցո՛ւր, լեցո՛ւր:

Զի մեմֆ, յաճուն Սերիմ, Սերմիմ, ֆու հիմ Յեղիդ
 Մարմարեն կոյս,
 Մեմֆ, Զաւակներդ օգոստափառ, պիտի կնրտեմֆ
 Նո'ր Արշալոյս.

*որպէսզի պարզ ըլլան խորքի հարցերը: Արդ, Նաւասարդ-
 եանը Վարուժանի բազմալար քերթողութեան մէջ հիմնա-
 կան լարէն կուգայ անոր հոգիին: Թէ Յեղիմ սիրտը, թէ Հե-
 քանոս երգերը ունին իրարմէ աղուոր բայց նոյն նիւթը
 — Վերածնունդի օրհներգութիւնը — ընդգրկող բազմաթիւ
 քերթուածներ: Ըսել թէ ամբողջ Վարուժանը կայ քերթուա-
 ծի մը մէջ, կը նշանակէ անհասկնալի որքան ծիծաղելի
 միամտութեան փաստ մը տալ... մեր հասկցողներուն,
 պարզմիտ թէ չարամիտ, չի փոխուիր պարագան: Յուսա-
 րբրի խմբագրութիւնը պիտի չուզէի տեսնել այդ ձեւ
 հասկցողներու շարքին:*

*Ի դէպ: Սգահանդէսին օրը հանդիսականներ ինծի ըրին
 նոյն դիտողութիւնը, բանաստեղծ վարդապետին վերա-
 գրումները հասկնալով այնպէս ինչպէս գտայ զանոնք Սեւ
 ու ճերմակին մէջ: Ասիկա կը նշանակէ ուրեմն որ կան ըսե-
 լու ձեւեր, բառերու յարդարանքներ, որոնք կը ստեղծեն
 աւելորդ, վնասակար թիւրիմացութիւններ, երբեմն ճիշդ
 հակառակը սկզբնական իմաստին: Յուսարբրի խմբագիրը
 խակ գրիչ մը չէ. ոչ ալ բանաստեղծ վարդապետը այդքան
 անհեթեթ կարծիք մը յայտնելու չափ միամիտ մէկը: Կ'երե-
 ւի դարձեալ կը միջամտէ ողբացեալ բանաստեղծին ճակտի
 գիրը, որպէսզի իր շուրջը պարզ խօսքեր վերածուին ճիշդ
 իրենց հակադիր իմաստին: Յետոյ, աւելո՞րդ՝ դիտել տալը
 որ իմ գրականութիւնս եղած է ենթակայ այդ կարգի ձեւա-
 փոխումներու:*

*Դառնալով յիշուած նախադասութեան, պէտք կը զգամ
 յայտնելու որ անիկա երեսուն տարիներ առաջ մարմինն էր
 յման սերունդի մը ամենէն սրտառուչ երազին: Երեսուն
 տարի վերջ, այդ երազը տերեւաթափ կմախք մը չէ ան-
 չուշտ: Բայց այդ երազին նոր կերպարանքը ո՞վ կրնայ*

պնդել, որ անդրադարձն է հինգ հարիւր տարիներու սպասումին:

Բ) — Կը գրէք. «Տասը տարին բա՛ւ որպէսզի փարատի պատրանքը Վ. Թ. ի բանաստեղծութեան վաւերական արժէքին շուրջ»: Եթէ բառերը ձերը չեն, կ'ենթադրեմ թէ ձեր մտածումն է ասիկա պարզուած ձեւով մը:

Արդ, Վահան Թէքէեան եղերաբախտ բանաստեղծ մըն է: Թէ ինքն է հեղինակը իր ճակատագրին կամ մենք, արդիւնքին մէջ ոչինչ կը փոխուի: Թէ այդ ողբերգութիւնը կը սկսի վաղ պատանութենէն, շարունակ[ու]ելու համար մինչեւ աւելոյթ, դարձեալ եղերականութեան մէջ բան մը չի փոխուիր: Դուք պարտաւոր էք յիշել իմ խաչակրութիւնը այդ վճիռին դէմ, ձեր երիտասարդութեան իսկ օրերէն: — Վահան Թէքէեան իրաւ բանաստեղծ մըն էր, մեր իրաւ բանաստեղծներէն Պէշիկթաշլեանին, Դուրեանին, Մեծարենցին, Վարուժանին ու Սիամանթոյին չափ: Ահա ինծի համար ձեր խմբագրականին մէջ վիճելին, որքան ցաւալին, քանի որ դուք այս հաւաստումը կը ձգէք կասկածի տակ: Զեր ուզած տասը տարին չորս անգամով թաւալած է՝ Գեղօն Սօսեաց Անտառին քերթուածին վրայէն: Բայց քերթուածը կը մնայ ոտքի:

Այս մասին կը խորհիմ թէ ինծի հետ էք, ձեր գնահատման մէջ:

Ոչ կիրք, ոչ յուզում: Հանգուցեալը պատասխանատու չէր այս աղմուկին: Ահա թէ ինչո՞ւ չեմ վախնար օգտագործելէ յուզումի այդ թանկ տարրը, մեր իմացական վաստակաւորներու գործին դէմ այնքան տարտամ, այնքան անկըշիռ, ջանալով տեսնել անոր մէջ աւելի անդիմ, ինչպէս թելադրեր էի վերը. աւելի պարզ՝ քան զայն շահագործելու ածապարող մարդոց հաշիւները: Երթա՞լ, մտածման սա՞ճամբով, աւելի առաջ, ընդունելու չափ դժուար, բայց հաւանական ալ վկայութիւնը, որով պիտի ուզէինք բան մը գտնել փոխուած, Սփիւռքի հոգեբանութեան մէջ, — ինծի համար սրտագին ու ցանկալի, քան յամառիլ, ողբալու համար սեւ անընկալչութիւնը, որուն մէջ սահեցաւ, անարձագանգ ու մինակ, կէս դարը Վահան Թէքէեան իրաւ բանաս-

տեղծին: Երթա՞լ, տակաւին աւելի առաջ, այդ մահով ըստեղծուած գեղեցիկ խանդավառութիւնը (դուք մի մեծցնէք շահագործման փաստերը: Անոնք չեն բարձրանար իմաստի, եթէ երբեք բարիկամեցողութիւնները աւազանուին) արժեւորելու իբր բարերար սկիզբ մը, մեր մէջ անլուր, մեծոգի, հեռահաս գործունէութիւն մը: Կարդացի, ծանր սփոփանքով, ծրագիրը Վ. Թ. Ֆոնտիմ ու այդ դիւրաբեկ բխումը չպաշտպանող ամէն կեցուածք կը նկատեմ վնասարար հայ գրականութեան:

«Յուսաբեր»ը, որ իր սպասը ըրած է այդ գրականութեան, այնքան սրտեռանդն, աշխարհ մը խոչընդոտներու ընդդէմ, չի կրնար պզտիկ հռետորութիւնները աճեցնել իրենց իմաստէն վեր: Արեւմտահայ բանաստեղծութիւնը — իրա՛ւր անշուշտ — չի բաժնուիր հակամարտ ճակատներու. — Վարուժանի եւ Սիամանթոյի քերթողական գործը չի պատկանիր կուսակցութեան մը: Ոչ ալ Վահան Թէքէեանը մենաշնորհ մըն է ուրիշ կուսակցութեան մը: Անոնք երեքն ալ հայ ժողովուրդին ազնուական — արուեստի մէջ — տաղանդաւոր զաւակներն են: Անոնք, հպարտութեան աղբիւր, սփիւռքին նսեմասրահը կանչըւորող: Մեր նոր քերթողութիւնը վարպետներ չի փնտռեր անշուշտ. բայց, առանց իր գիտութեան, կը քալէ պաշտպանութեանը տակ այդ իրաւ բանաստեղծներուն: Յետոյ գրեր եմ տեղ մը. «Վարուժանը սիրելը Թէքէեանը հասկնալ չե՞ արդեօք»:

Յարգանքով՝ Յ. ՕՇԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԷԶ

1.—	ՆԵՐԱԾԱԿԱՆ.....	7
2.—	ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ.....	23
3.—	ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ	
	ԳԼՈՒԽ Ա.....	29
	ԳԼՈՒԽ Բ.....	37
	ԳԼՈՒԽ Գ.....	90
4.—	ՅԱԻԵԼՈՒԱԾ	
ա.—	ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ ԵՒ ԻՐ «ՀՐԱԾԱԼԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ»Ը «ՄԵՀԵԱՆ» ԱՄՍԱԹԵՐԹԷՆ.....	94
բ.—	«ԿԷՍ ԳԻՇԵՐԷՆ ՄԻՆՉԵՒ ԱՐԾԱԼՈՅՍ» «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ» ՕՐԱԹԵՐԹԷՆ.....	109
գ.—	ՏԵՂԵԿԱԳԻՐ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ԴՈՒՐԵԱՆ ԳՐԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿԻ «ՍԻՈՆ» ԱՄՍԱԳՐԷՆ.....	115
դ.—	ՄԻՔԱՅԷԼ ԿԻՐՈՇԵԱՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ՝ Յ. ՕՇԱԿԱՆԻ «ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ» ԳՈՐԾԻՆ ՄԱՍԻՆ «ՍԻՈՆ» ԱՄՍԱԳՐԷՆ.....	121

5.—	ՆԱՄԱԿԱՆԻ.....	130
6.—	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.....	166

Հասցե՝ Sarkis Abdalian
P. O. Box 11-1161
Beirut, Lebanon.

Գրաշարութիւն՝ «Հաշ Տիպ Գոմփիւկրաֆ»
High Type Compugraph
Տպագրութիւն՝ «Թեքնոփրես»
Technopresse Moderne S.A.L.

Գին 25 լիթ. սևի
7 տոլար

Հասցե՝ Sarkis Abdalian
P. O. Box 11-1161
Beirut, Lebanon.